Azg Ազգ

15 ԴԵԿՏԵՄԲԵՐ 2007 ՇԱԲԱԹ 232 (3884)

Ադրբեջանի օրեր Հայաստանում

«Հայաստան-Ադրբեջան-Թուրքիա. խլել դեռի երկխոսություն» ծրագրի շրջանակներում, դեկտեմբերի 17-20-ը Երեւանի «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրում Մեծ Բրիտանիայի դեսպանատան աջակցությամբ կանցկացվեն Ադրբեջանի օրեր: Միջոցառմանը կմասնակցեն Ադրբեջանի իրավապաշտպան կազմակերպությունների, մտավորականության եւ ՁԼՄ-ների ներկայացուցիչներ: Դեկտեմբերի 17-ին տեղի կունենան կրթահամալիրի, վարժարանի, ուսանողական ճամբարի եւ Իրավապաշտպանի դպրոցի բացումը, անվանական մրցանակների հանձնումը կրթահամալիրում հայտարարված շարադրության, պլակատի եւ նկարի մրցույթի հաղթողներին: Նույն օրը «Հանրակրթության դերը հայ-ադրբեջանական դիմակայության հաղթահարման համատեքստում» թեմայով զեկույց կներկայացնի կրթահամալիրի տնօրեն Ասոն Բլեյանը, որը ծանոթ է, դեռեւս Բաքու այցելած օրերից, Ղարաբաղը հանձնել-ոչնչացնելու գնով Հայաստան-Ադրբեջան հարաբերությունները բնականոնացնելու իր յուտահատուկ տեսությամբ:

Հայաստանը ռազմական դոկտրին կունենա

Երեկ Ազգային ժողովում քննարկում էին դոկտրինի նախագիծը

ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Ադրբեջանն իր դոկտրինը մշակելու ժամանակ ընդել է այն դրույթը, որ եթե Լեռնային Ղարաբաղի խնդիրը խաղաղ ճանապարհով չկարգավորվի, Ադրբեջանի զինված ուժերը այդ խնդիրը կարող են լուծել ռազմական ճանապարհով: Անգամ Ադրբեջանը ցանկանում է իր դոկտրինում Հայաստանը նշել որպես թշնամի: Սա հավանության չի արժանացել ոչ մի բարեկամ երկրի կողմից, եւ հարեւան երկրի դոկտրինի նախագիծը լուրջ քննադատության են ենթարկել ՆԱՏՕ-ի փորձագետները: Իսկ ահա անկախության օրից մինչեւ այժմ առաջին անգամ ռազմական դոկտրինի նախագիծ մշակած Հայաստանը, ըստ պաշտպանության նախարար **Միխայել Հարությունյանի**, իր դոկտրինում որեւէ թշնամու մասին կետ չունի. «Մենք Ադրբեջանի հետ տարաձայնություններ ունենք Ղարաբաղի հարցում, որոնք պետք է լուծենք բանակցությունների միջոցով: Պատերազմը չի լուծի ղարաբաղյան խնդիրը: Թեեւ Ադրբեջանի պաշտպանության նախարարությունը հայտարարում է, որ գոյություն ունի պատերազմի հարյուր տոկոսանոց հնարավորություն, սակայն ամեն դեպքում կողմերը պետք է նստեն բանակցությունների սեղանի շուրջը». այս հայտարարությունը պաշտպանության նախարար Մ. Հարությունյանն արեց երեկ, ԱԺ պաշտպանության, ազգային անվտանգության եւ ներքին գործերի մշտական հանձնաժողովի ընդլայնված նիստում, ՀՀ առաջին ռազմական դոկտրինի նախագծի քննարկումից հետո:

Ռազմական դոկտրինի նախագիծը բաց փաստաթուղթ է, օրենքի տեսք չունի, ՀՀ նախագահը վավերացնելու է, բացի այդ՝ ՀՀ նախագահը որպես զինված ուժերի գլխավոր հրամանատար այնուհետեւ էլ հնարավորություն է ընձեռելու զինված ուժերի հրամանատարությանը եւ պաշտպանության նախարարությանը ժամանակ առ ժամանակ գնահատելու առկա նոր մարտահրավերները եւ անհրաժեշտության դեպքում նորից վերանայելու ռազմական դոկտրինը՝ հստակ մատնացույց անելով հետագա աշխատանքի նոր վեկտորները: Սա էլ ԱԺ պաշտպանության, ազգային անվտանգության եւ ներքին գործերի մշտական հանձնաժողովի նախագահ **Արթուր Աղաբեկյանի** ծանոթագրությունն էր ներկայացված նախագծին:

Տես էջ 3

ՍՈՒՐԲ ՀԱԿՈԲ

Դեկտեմբերի 15-ը Հակոբների անվանակոչության օր

Առաքելական հայրապետական թեմից հաղորդում են, որ դեկտեմբերի 15-ին Հայ առաքելական սուրբ եկեղեցին նշում է Ս. Հակոբ Մծբնա հայրապետի տոնը: Տոնի առթիվ Գարեգին Բ Ամենայն հայոց կաթողիկոսի տնօրինությամբ Ս. Էջմիածնի գանձատնից Արարատյան հայրապետական թեմի Քանաքեռ-Զեյթուն համայնքի Ս. Հակոբ եկեղեցի կտեղափոխվի Նոյյան տապանի մասունքը: Այն Արարատի լանջին Ս. Հակոբ Մծբնա հայրապետին է տվել հրեշտակը: Կան բազմաթիվ հրաշագործություններ՝ կապված ս. մասունքի հետ: Այդ օրը Հակոբ անունը կրող անձանց անվանակոչության օրն է եւ տոնը Հակոբյան գերդաստանների:

Տոնի առիթով Ս. Հակոբ եկեղեցում տոնական պատարագ կմատուցի առաջնորդանիստ Ս. Սարգիս եկեղեցու հոգեւոր տեսուչ Հակոբ քահանա Խաչատրյանը: Հավատացյալ պատարագի կկատարվի Հակոբ անունը կրող եւ Հակոբյան գերդաստանների օրհնության արարողություն: Հավատացյալները հնարավորություն կունենան հաղորդվելու ս. մասունքին եւ արժանանալու Ս. Հակոբ Մծբնա հայրապետի բարեխոսությանը:

Հակոբ Մծբնա հայրապետը հիվանդություններից եւ փորձություններից պահպանության բարեխոս է համարվում:

Պատարագը կսկսվի ժ.11.00-ին, օրհնության արարողությունը եւ ս. մասունքին երկրպագությունը՝ ժ. 12.30-ին:

Նշվեց Մանկավարժական համալսարանի 85-ամյակը

Խաչատուր Աբովյանի անունը կրող հայկական պետական մանկավարժական համալսարանը, որ հիմնադրվել է 1922-ին, երեկ Օրերայի եւ բալետի ազգային ակադեմիական թատրոնում նշեց իր 85-ամյակը, որին մասնակցում էին տարբեր բնագավառների անվանի մարդիկ: Ինչպես **«Ազգի»** հետ հեռախոսազրույցում հայտնեց համալսարանի ռեկտոր **Արտուր Ղուկասյանը**, երեկվա միջոցառմամբ ամփոփվեցին ամբողջ տարին իրականացված հոբելյանական միջոցառումները:

Հիմնադրման շրջանում 5 ֆակուլտետ ունեցող մանկավարժական համալսարանն այսօր 11 ֆակուլտետ ունի՝ 49 ամբիոններով: Անցնելով 85 տարվա ճանապարհ՝ համալսարանն այսօր ունի իր կայուն տեղը մեր բուհական համակարգում, հիմնել է Խաչատուր Աբովյանի անվան ոսկեզօծ հուշամեդալ, օրհնեց եւ գինանշան, ստացել բազմաթիվ եւ բազմատեսակ մրցանակներ ոչ միայն երկրի ներսում:

Մանկավարժական համալսարանն այժմ ունի սեփական հրատարակչություն, հրատարակում է «Մանկավարժական համալսարան» պաշտոնաթերթը, ուսխորհրդի «Արագա մանկավարժ» պարբերականն ու մի շարք ֆակուլտետների ամսագրերը:

Գ. Գ.

Արման Բաբաջանյանին մերժեցին

Երեկ՝ դեկտեմբերի 14-ին պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու, պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու հարցերով անկախ միջգերատեսչական հանձնաժողովը մերժել է «Ժամանակ երեւան» թերթի գլխավոր խմբագիր Արման Բաբաջանյանին պայմանական վաղաժամկետ ազատ արձակելու դիմումը: Սա Ա. Բաբաջանյանին վերաբերող երկրորդ դիմումն է, որ մերժում է հանձնաժողովը:

Հիշեցնենք, որ առաջին անգամ եւ քրեական վերաքննիչ դատարանների դատավճիռներով Ա. Բաբաջանյանը հանցավոր է ճանաչվել զինվորական ծառայությունից խուսափելու համար եւ դատապարտվել 3,5 տարվա ազատազրկման: Նա արդեն կրել է նշանակված պատժի կեսը: Արման Բաբաջանյանին վաղաժամկետ ազատ արձակելու միջնորդություն ներկայացրել էր նաեւ ՀՀ օմբուդսմեն Արմեն Հարությունյանը:

Մեկուսացված Ջավախքում իշխանության խիստ «ձեռքն է աշխատում»

Ըստ Գամկրելիձեի, Վրաստանը չի կարող ընդունել որոշում, որ չկարողացավ ԱՄՆ Կոնգրեսը

ԱՂԱՎՆԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅՈՒՆ

Թբիլիսի

Վրաստանի նախագահական արտահերթ ընտրությունների քվեթերթիկում ընդդիմության միասնական թեկնածու Լեւան Գաչեչիլաձեից հետո նշված է օլիգարխ Բադրի Պատարկացիշվիլու անունը, սակայն դեռեւս երեկ նա, չնայած նախնական տեղեկություններին, Թբիլիսիում չէր: Հաջորդ թեկնածուն «Նոր աջեր» կուսակցության առաջադրած **Դավիթ Գամկրելիձեն** է, ում խոսքերով՝ Վրաստանում ազգային փոքրամասնությունների խնդիրներն իրեն քաջածանոթ են:

«Քաղաքականությամբ զբաղվելու վերջին տարիներին աշխատում ենք Վրաստանի բոլոր քաղաքացիներին կողմնորոշված մոտեցում ցուցաբերել, որպեսզի ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչները լիարժեք քաղաքացիներ դառնան: Ցավոք, դա խնդիր է, որն առկա է ինչպես Ջավախքիում, այնպես էլ Քվեմո Քարթլիում, որտեղ բնակչությունը ինչ-որ կերպ հեռացված է Վրաստանի քաղաքական, տնտեսական, հասարակական կյանքից», «Ազգի» հետ զրույցում նշեց Գամկրելիձեն:

Ըստ «Նոր աջերի» ղեկավարի, առաջին հերթին իրենք ցանկանում են ինտեգրման գործընթացներում ներառել այդ էթնիկ խմբերի ներկայացուցիչներին: Ընդ որում, կուսակցության առաջնորդներից մեկը Առնոլդ Ստեփանյանն է, որ մինչ այդ «Բազմազգ Վրաստան» հայտնի հասարակական կազմակերպության ղեկավարն էր: Գամկրելիձեի խոսքերով, Ստեփանյանը ոչ միայն խոսում է ազգային փոքրամասնությունների խնդիրներից, այլեւ լիարժեք մասնակից է վրացական քաղաքականությանը՝ ներքին, արտաքին, սոցիալական, կրթական խնդիրներին եւ այլն:

Տես էջ 8

Բջջային կապի երրորդ օպերատորը Հայաստանում հայտնի կլինի 2008-ին

Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի նախագահ Ռոբերտ Նազարյանը երեկ լրագրողներին հայտնեց, որ արդեն 2008 թվականին հայտնի կլինի Հայաստանի բջջային կապի երրորդ օպերատորի անունը: Նա տեղեկացրեց, որ 2008-ի մայիսի 1-ին այդ նպատակով կհայտարարվի միջազգային մրցույթ: 90 օրվա ընթացքում մրցութային հանձնաժողովը կհայտարարի իր ընտրության մասին: Ռոբերտ Նազարյանը կարծիք է հայտնել, որ երրորդ օպերատորի մուտքը կնպաստի մատակարարվող ծառայությունների որակի բարձրացմանն ու սակագների նվազմանը:

Հիշեցնենք, որ բջջային կապի ներկայիս երկու օպերատորների՝ «Արմենտել» եւ «Վիվասելի», այսպես կոչված, դոմինանտության ժամանակն ավարտվում է 2008-ի վերջին, իսկ 2009-ի հունվարի 1-ից այս բուսական փաստորեն ամբողջությամբ ազատականանում է:

Ա. Մ.

Ի՞նչ ազդեցություն է ունենալու արտաքին գործոնը առաջիկա ընտրություններում

Հայաստանը փո՞քր խաղացող է արտաքին գործոնից խուսափելու համար

«Հայ ազգը համաբխարհային ազգ է եւ, մեր կուսակցության դիրքորոշմամբ, պետք է ինտեգրված լինի միջազգային կառույցներին: Սա նշանակում է, որ մենք չենք կարող խուսանավել բոլորի համար ընդունված կանոններից, բայց մեր ներին խոցելական կանոնի զարգացումներն այնքան թույլ են, որ այդ տեսանկյունից արտաքին միջամտությունը չի կարող լավ լինել», երեկ Մամուլի ազգային ակումբում հրավիրված «Արտաքին գործոնը ՀՀ նախագահի ընտրություններում» թեմայի քննարկման ժամանակ կարծիք հայտնեց ԱԺՄ անդամ **Անահիտ Ավոյանը**: «Օրինակ, դրսից գալիս սոցհարցում են անում, ուղղում մեր հասարակությանը: Եթե մենք ազգային հայեցակարգ ունենայինք, կարող էինք ասել՝ սա կարելի է, սա՝ ոչ: Շատ են չափազանցում արտաքին գործոնի ազդեցությունն, ու այդ ազդեցությունը իշխանություններն օգտագործում են ժողովրդին ուղղորդելու համար», ասաց ԱԺՄ ներկայացուցիչն ու հավելեց, որ արտաքին գործոնից Հայաստանը չի կարող խուսափել, մնում է սեփական դեմքը չկորցնի:

«Ժառանգություն» կուսակցության քաղխորհրդի քարտուղար, պատգամավոր **Վարդան Խաչատրյանի** կարծիքով արտաքին աշխարհի ազդեցություններից կարող է խուսափել միայն այն երկրները, որտեղ գոյություն ունի իշխանության եւ ժողովրդի միասնականություն, եւ նրանց միջեւ գոյություն չունեն այնպիսի խոր հակասություններ, որոնք ատելության դաշտ ձեւավորեն»: Իսկ որ մեզ մոտ իրավիճակն այդ իմաստով, մեղմ ասած, հուսադրող չէ, քաղխորհրդի քարտուղարը վստահ է. «Ասել, որ ասենք Հայաստանում ընտրությունները որոշես այդպիսին եղել են լեգիտիմ իշխանության ձեւավորմանը նպաստող, երեւի կլիներ չափազանցություն: Բազմաթիվ միջազգային դիտորդների ձեւակերպմամբ մենք միշտ ունեցել ենք ընտրությունների ժամանակ լուրջ խնդիրներ, եւ ձեւավորվող իշխանությունը, որպես այդպիսին, զգալի չափով զուրկ է եղել այդ դիմակայությունից»:

Հայաստանի առաջիկա նախագահական ընտրությունները, ՕԵԿ փոխնախագահ, պատգամավոր **Միհր Շահգելդյանի** գնահատմամբ, ոչ թե աշխարհաքաղաքական, այլ աշխարհառազմավարական կենտրոնների ուշադրության առանցքում են: «Հարցումներ են կազմակերպվում, -- իրականությունն են փորձում պարզել եւ էստեղ մի կարեւոր խնդիր կա՝ ազատ ընտրությունները, լեգիտիմ իշխանությունը: Սա այն կարեւորագույն խնդիրն է, որը Հայաստանի Հանրապետության համար գերակա է լինելու թե՛ հզորացնելու, թե՛ թուլացնելու դիրքերն արտաքին աշխարհի հետ հարաբերություններում: Եվ բացի այդ, որեւէ արտասահմանյան երկրի, մասնավորապես ռազմավարական կենտրոնների համար խիստ կարեւոր է տեսնել եւ հասկանալ, թե իրենք ում հետ գործ ունեն՝ լեգիտիմորեն ընտրված իշխանությա՞ն հետ. իշխանություն, որ ունի ձայներ եւ վստահություն, թե՞ իշխանություն, որն, ասենք, անցել է կաբուններով, վարչական ռեսուրսներով եւ այլն: Այսինքն, այստեղ կա զուտ հարաբերվելու խնդիր», ընդգծեց Միհր Շահգելդյանը:

ՀՅԴ-ական պատգամավոր **Ռուզան Առաքելյանը** հիշեցրեց իրենց կուսակցության դիրքորոշումը, որ մերժում են ամեն մի արտաքին միջամտություն Հայաստանի ներքաղաքական կյանքին, հատկապես, երբ մենք կանգնած ենք այնպիսի լուրջ խնդիրների առջեւ, ինչպիսին է Ղարաբաղի հարցը: «Եթե մենք փորձենք թույլ տալ ներգործող ուժ, սա իսկապես կարող է խախտել մեր ժողովրդավարական գործընթացը, իսկ նման երկրի հետ միշտ չէ, որ հաշվի են նստում: Դաշնակցության կողմնորոշումը միանշանակ է՝ երրորդ ուժը բացառել, եթե դա կաղ ունի ներքաղաքական իրավիճակների հետ: Մեր երրորդ ուժին (չհասկեցրեց որն է, հավանաբար նկատի ուներ արտաքին միջամտությունը-Գ. Գ.) ընդունում ենք միայն այս գործընթացներից հետո, երբ թափանցիկ եւ արդար ճանապարհով կընտրվի նախագահ, իսկ այդ ճանապարհով ընտրված նախագահի հետ յուրաքանչյուր երկիր կարող է հաշվի նստել, բայց միջամտող ուժը միանշանակ-մեզ համար մերժելի է»:

Արտաքին տնտեսական ոլորտում մեր երկիրը բացահայտ կախվածություն ունի գոնե երկու երկրներից: Այս կարծիքին է նախկին պատգամավոր, տնտեսագետ **Թաթուլ Մանասերյանը**՝ տնտեսական մասով ընդգծելով մեր երկրի կախվածությունն արտաքին աշխարհից: Նրա խոսքով, մեր երկրում նվազել են անգամ քաղաքականացված ներդրումները, իսկ արդեն արված քաղաքականացված ներդրումներն էլ վտանգված են, եթե նկատի ունենանք քաղաքական իրավիճակի փոփոխությունները:

ՍԻՄ նախագահ **Հրանտ Խաչատրյանն** ավելի իրատես է եւ նշեց, որ արտաքին ազդեցությունն առաջիկա նախագահական ընտրություններում լինելու են անգամ անկախ մեր կամից: Ինչ է նշանակում անկախ մեր կամից:

ՀԺԿ մամուլի քարտուղար **Ռուզան Խաչատրյանը** վրդովված է. փոխանակ պատրաստվենք նախագահական ընտրությունների նման լուրջ գործընթացին, այս նախընտրական շրջանում ցուցադրվում է, թե որ գործիչն ինչ կողմնորոշում ունի, ուր գնաց եւ ում «դաբրոն» սացավ:

ԳՈՀԱՐ ԳԵՎՈՐԳՅԱՆ

«Հայէկոնոմբանկը» 15 մլն դոլար վարկ ստացավ 6 միջազգային բանկերից

Հայաստանի բանկային համակարգի պատմության մեջ առաջին անգամ երեկ «Հայէկոնոմբանկը» 15 մլն դոլարի սինդիկացված վարկային պայմանագիր կնքեց Վերակառուցման եւ զարգացման եվրոպական բանկի (ՎԶԵԲ) հետ: Այս իրադարձությունն աննախադեպ էր այն առումով, որ միջազգային ճանաչում ունեցող միանգամից վեց ֆինանսական հաստատություններ իրենց մասնակցությունն ունեցան այս ծրագրին: Մասնավորապես «Հայէկոնոմբանկին» ֆինանսական միջոցներ տրամադրելուն մասնակցեցին, բացի եվրոբանկից, գերմանական «Կոմերց բանկը», ավստրիական «Ռայֆեզեն» եւ «Բանկ Ավստրիա կրեդիտանստալտ» բանկերը, հնդկական «Ստեյթ բանկ օֆ Ինդիան», թայվանական «Լենդ բանկ օֆ Թայվանը» եւ անգլիական էֆ Բի էն բանկը:

Վերոնշյալ 15 մլն դոլարի վարկը բաղկացած է երկու առանձին վարկերից: Առաջինը՝ 5 մլն դոլար արժողությամբ, տրամադրել է միայն եվրոբանկը՝ 36 ամիս ժամանակով: Երկրորդը՝ 10 մլն դոլար արժողությամբ, որը տրամադրել են մյուս 5 բանկերը, նույնպես բաղկացած է երկու մասից: Առաջին 5 մլն դոլարը տրվում է 18 ամիս ժամկետով եւ նույն ժամկետով երկարացնելու հնարավորությամբ, երկրորդ 5 մլն դոլարը՝ 12 ամիս ժամկետով եւ դարձյալ նույն ժամկետով երկարացնելու հնարավորությամբ:

Պայմանագրի ստորագրումից հետո «Հայէկոնոմբանկի» գործադիր տնօրեն **Դավիթ Սուքիասյանը** հայտնեց, որ վարկավորման նպատակն է զարգացնել փոքր եւ միջին ձեռնարկատիրությունը: 1 վարկառուի առումով տրամադրվող վարկի առավելագույն գումարը կազմելու է 400 հազար դոլար կամ դրան համարժեք դրամ: Վարկերը տրամադրվելու են միջինը 2-3 տարի ժամկետով, առավելագույնը 5 տարի ժամկետով: Տոկոսադրույքները լինելու են 14-16 տոկոսի սահմաններում: Այս առնչությամբ, ի պատասխան հարցի, Դավիթ Սուքիասյանն ասաց, որ տոկոսադրույքները համապատասխանում են ներկայիս պահանջարկին: Եթե շուկայում լինեն փոփոխություններ, ապա այդ տոկոսները եւս կփոխվեն:

ՎԶԵԲ-ի ներկայացուցիչ Մայքլ Վայնշեյնն իր հերթին այս վարկային պայմանագիրը համարեց Հայաստանի նկատմամբ հետաքրքրության եւ հայկական բանկերի ռիսկերի նկատմամբ «ախորժակի մեծանալու» արդյունք: Նա նշեց, որ Հայաստանի բանկային համակարգը երկրի տնտեսության ամենաառողջ հատվածն է, առանց որի անհնար է տնտեսության զարգացումը: ՎԶԵԲ ներկայացուցիչը ընդգծեց, որ «Հայէկոնոմբանկը» վստահելի գործընկեր է եվրոբանկի համար եւ պատահական չէ, որ այս կառույցը դարձել է «Հայէկոնոմբանկի» 25 տոկոսի համասեփականատերը:

«Ներդրումներ են գալիս Հայաստան, որոնք ուղղվելու են իրական հատվածին, փոքր եւ միջին ձեռնարկություններին: Սա վկայում է, որ մեր բանկային համակարգը կայացած է, որ «Հայէկոնոմբանկը» վայելում է լավ գործընկերոջ համբավ», կարեւորելով այս վարկային ծրագիրը, ասաց ԿԲ խորհրդի անդամ Վարդան Մովսեսյանը:

Վարկավորման ծավալները կտրուկ ավելացել են

ԿԲ խորհրդի անդամ Վարդան Մովսեսյանը երեկ հայտնեց, որ բանկերի կողմից տրամադրվող վարկերի ծավալներն այս տարի էապես՝ մոտ կրկնակի ավելացել են հասնելով համախառն ներքին արդյունքի (ՀՆԱ) 12-13 տոկոսին, նախորդ տարվա 9 տոկոսի փոխարեն:

ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՔՆՆԱՐԿՈՒՄ ԸՆԴԻՄԱԴԻՐ ՀԱՄԲԱՐՈՒՄ

Նախագահական ընտրությունների ժամանակ պետք է բարձրացվի ժողովրդական ալիք

Պահանջում են Սերժ Սարգսյանի հրաժարականը

«Արմենիա-Մարիոթ»-ում «Լեգիտիմ նախագահ-2008» սեմինար-քննարկմանը ներկա գտնվող ՆԺ կուսակցության նախագահ **Արամ Կարապետյանը,** անդրադառնալով խորհրդարանական ընտրությունների ընտրակեղծիքներին, նշեց. «Լեգիտիմ նախագահ նշանակում է՝ 2008-ի փետրվարի 20-ին բոլոր այն ուժերը, որոնք ուզում են փոփոխություններ, ժողովրդական ալիքի միջոցով պետք է պարտադրենք մեր կամքը: Եվ մեր կուսակցության քայլը միտված է լինելու փետրվարի 20-ին ժողովրդական մեծ ալիքի առաջ բերմանը: Եվ ես նորից կոչ եմ անում բոլոր քաղաքական ուժերին՝ միանշանակ հաշվի առնելով սոցն հարցերը, այսօրվա դառը փորձը, երբ մեր բերված արգումենտները մեր երկրում չեն հարգվում, ուրեմն փետրվարի 20-ին իրար հետ համաձեռ կկատարենք այդ գործողությունը»:

«Այլընտրանք» հասարակական-քաղաքական նախաձեռնության առաջնորդ **Նիկոլ Փաշինյանն** էլ, համաձայնելով ՆԺԿ ղեկավարի ասածին, հավելեց. «Միանշանակ է՝ ունենալու ենք ոչ լեգիտիմ ընտրություններ, քանի որ այս պահից արդեն ընտրությունները լեգիտիմ չեն: Ժողովուրդը ի զորու է լեգիտիմացնել ցանկացած ոչ լեգիտիմ պրոցես: Ընտրությունների ընթացքում իրոք համաժողովրդական շարժման թեկնածուն կհաղթի եւ կդառնա նախագահ: Մենք գործ ունենք սոպերեն երկրում տեղի ունեցող գործընթացների հետ: Բոլոր այն մարդիկ, ովքեր մտահոգ են ՀՀ ճակատագրով՝ չեն կարող լինել արեւմտամետ եւ ոչ էլ ռուսամետ: Պայքար է ընթանում երկու թեկնածուների միջեւ, գոյություն ունի երկու բեւեռ՝ ավազակապետության իշխանություն, մյուսը՝ ընդդիմության կամ համաժողովրդական շարժման բեւեռ: Եթե մենք խոսում ենք իշխանափոխությունից ու ավազակապետության հեռացումից, պետք է հասակ ընտրություն կատարենք երկու բեւեռների միջեւ: Եթե հիշում եք, մենք խորհրդարանական ընտրություններին ամբողջ հույսերս դրեցինք մայիսի տասներեքի վրա: Եվ մենք սխալվեցինք, այս անգամ խնդիրը պետք է լուծենք մինչեւ փետրվարի 19: Բոլոր նրանք, ովքեր ուզում են փոփոխություններ, պետք է համախմբվեն ընդդիմադիր բեւեռի շուրջը: Մենք ունենք երկու ճանապարհ՝ կամ ողբանք ոչ լեգիտիմության համար, կամ էլ գնանք մեր սեփական ջանքերով»:

Քննարկմանը հավաքված ընդդիմադիր ուժերը Հայաստանը որակեցին գաղութային ռեժիմի վերածված հանցավոր երկիր: Ինչ վերաբերում է երրորդ ուժին, համոզված են, որ դրանք իշխանամետ են եւ իրենց խոսքերով՝ Սերժի խամաճիկներն են: Եվ երկրում տնտեսական տեռորիզմ է բոլոր ոլորտներով, եւ բոլորն են դրան համակերպվում:

«Երկրում քաղաքական տեռորիզմ է՝ բոլորս լռում ենք: Ինչ է նշանակում քրտական 301 հոդվածով ազգային հերոսներին պահել ճաղերի հետեւում: 301 հոդվածը կաղ չունի հայկական իրավագիտության հետ՝ շինծու հոդված է: 301 հոդվածով դատապարտվածները համարենք, որ մեղք են գործել, ինչո՞ւ չեն ազատվում՝ լռացել է մեկ տարին: Սրա լրջագույն եւ ամենածանր օրինակը հոկտեմբերի 27-ն է: Շատերը չեն կարողանում հնել, որովհետեւ վաղը կազմակերպման մասնակցության համար պատասխան են տալու: Տեսեք գործադիր համակարգում ինչ առնետավազք է սկսվել: Գրասենյակներում ինչ գաղտնի սխոսկաներ են տեղի ունենում: Արդեն մտահոգ են վաղվա օրվա համար: Եթե լեգիտիմ չէ, ուրեմն կատարում է ախտահում բոլոր 300 պետությունների թելադրած կամքը: Երբ ռուսական դեսպանատան վարչության ախտատողներին հարցնում եմ՝ ինչո՞ւ եք բանալիների կաղոցը՝ կարեւորագույն օբյեկտների դրել ձեր գրպանը, ասում են՝ տվել են, որպեսզի աքոռը պահպանեն: Մեզ այդպիսի հարաբերություն Ռուսաստանի հետ պետք չէ: Մեզ պետք են նորմալ հարաբերություն, համատեղ շահույթ, համատեղ զարգացում: Նույնը կատարվում է Արեւմուտքի հետ: Հույսերս չդնենք եվրոպական կառույցների վրա. գալիս են նրանք այստեղ խրախճանքի: Կոռուպցիան սկսվել է եվրոպայից եւ ԱՄՆ-ից: Մենք մեր տունը պետք է մաքրենք աղբից: Ով կամք ունի, ով քաղաքական գործիչ է, ով տղամարդ է, մայր է, քույր է՝ եկել է պահը: Կամ Հայաստանը վերականգնելու, կամ կորցնելու Հայաստանը», ասում է «Հայրենիք եւ պատիվ» կուսակցության նախագահ **Գառնիկ Մարգարյանը**:

Քննարկմանը ներկա ընդդիմադիր ուժերը պահանջեցին Սերժ Սարգսյանի հրաժարականը՝ ընտրությունները լեգիտիմ անցկացնելու համար:

ՆԱՐԲԻ ՄՈՒՐԱԴՅԱՆ

Հեղեղները վերացրել էին Գորիսի մի քանի փողոցների ասֆալտը

Տարիներ առաջ հորդ անձրեւներն ու հեղեղները հավաքել ու իրենց հետ տարել էին Գորիսի մի քանի փողոցների ասֆալտը: Այդպես տարած էլ մնաց մինչեւ այս տարի, որը գորիսեցիները համարում են հաջող՝ փողոցների բարեկարգման տեսանկյունից: Ասֆալտապատվել է 30 հազար քմ տարածք: Դա այս տարվա ծրագրում ներառված ամբողջն է, որ իրականացվել է 80 մարդու աշխատանքով, որոնց ամսական միջին աշխատավարձը կազմել է 100 հազարական դրամ: Անհայտ է՝ նշված 30 հազար քմ տարածքի մեջ ներառվա՞ծ է Խորենացի փողոցը, որի ասֆալտապատումն օրեր առաջ երկու ծայրերից սկսել ու անբարենպաստ եղանակի պատճառով դադարեցրել են: Ամեն դեպքում, ինչպես տեղեկացնում է տեղի մամուլը, Սյունիքի մարզպետ Սուրեն Խաչատրյանը Գորիսի ամենից խիստ բնակեցված Գեղափնյա թաղամասում ու վստահեցրել, որ եկող տարի շաբաթուսերը բարեկարգվելու եւ նորոգվելու են տանիքները: Ամենի վաղ նույն թաղամաս է այցելել ՀՀ վարչապետ Սերժ Սարգսյանը եւ երկու ամսում Գորիսի Գեղափնյան դադարել է լինել դարափոսերի կուտակում՝ ասֆալտապատվել է «Հակոբյան եղբայրներ» հիմնադրամի աջակցությամբ: Ի դեպ, վարչապետի մեքենան դեմ չի առել քաղաքի մյուս փողոցների քանդուքարափին:

Ն. Պ.

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակության 80 տարի

Հիմնադիր եւ հրատարակիչ
«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ
Երեւան 375010 Հանրապետության 47
Ֆաքս՝ 374 10 562863
e-mail: azg@azg.am
azg2@armenia.com
www.azg.am

Գլխավոր խմբագիր
ՅԱՎՈՒՇ ԱՎԵՏԻՔԵԱՆ / հեռ. 521635

Խմբագիր
ՊԱՐՈՒՅՐ ՅԱՎՈՒՇԵԱՆ / հեռ. 529221

Հավելվածների (գրվածքի) / հեռ. 582960

Լուսագրների սենյակ / հեռ. 581841

Հանձնարարությունների / հեռ. 582483

Շտաբային լրահոսի ծառայություն / հեռ. 529353

Հանձնարարչային ծառայությունը «Ազգ» թերթի

Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տրպագիր ճամուղի միջոցով կամ ռադիոհեռուստատեսութեամբ առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի

Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում

Գ տարով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատուութիւն չի կրում:

"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 10 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

Արամ Գ. Սարգսյան. «Եթե փորձի (հանձնել), բոլոր հնարավոր միջոցներով կընդդիմանամ Սերժ Սարգսյանին»

Դեկտեմբերի 6-9 մերձմոսկովյան Սնեգիրիում տեղի է ունեցել Հայաստանի, Ադրբեջանի, Լեռնային Ղարաբաղի ոչ կառավարական կազմակերպությունների ներկայացուցիչների, քաղաքական գործիչների, ԱԺ պատգամավորների հանդիպումը՝ Դորտմունդյան կոնֆերանսի շրջանակում: Հանդիպումը 12-րդն էր, որում հետընթաց է արձանագրվել, քանի որ ադրբեջանական կողմը լիովին փոխել է իր դիրքորոշումը նախկինում ընդունված հակամարտության կարգավորման խաղաղ գործընթաց ներառող շրջանակային համաձայնագրերի առնչությամբ: Այս մասին երեկ հրավիրած ասուլիսում խոսեց Դորտմունդյան կոնֆերանսում հայկական պատվիրակության ղեկավար **Արամ Գասպարի Սարգսյանը**: Նա հավաստած է, որ հարցը ռազմական լուծում չունի եւ ելը խաղաղ գործընթացն է, սակայն այդ կարգակցությամբ ադրբեջանական պատվիրակության 90 տոկոսով փոխված կազմի ասելիքն էլ փոխվել է՝ կոշտացել է ԵԱՀԿ Մադրիդի համաժողովում Ղարաբաղի հակամարտության կարգավորման առումով ԵԱՀԿ ՄԽ համանախագահների նոր առաջարկների հենքով, որոնք, Արամ Սարգսյանի կարծիքով, ներառում են տարածքների հանձնում, առանց Ղարաբաղի կարգավիճակի հստակեցման: «Սոանից չգիտես ինչու պարոն Օսկանյանն այդման հիացած էր, մինչդեռ փաստաթղթում տեղ գտած 6 կետերից միայն մեկը՝ ինքնորոշման հարցն է ընդունելի, այն էլ կիսատպռաս ձեակերպում ունի: Եթե դա է մեզ համար ամենագլխավոր նվաճումը, կարծում եմ՝ դա ուղղակի հարիր չէ հաղթող կողմին», կարծիք հայտնեց Արամ Սարգսյանը: Նրա կարծիքով, այս պարագայում Հայաստանի անելիքը պետք է լինի ԵԱՀԿ ՄԽ բանակցային ֆորմատից դուրս գալը՝ ինքնակվող տարբերակների հայկական կողմի համար անընդունելի լինելը ցույց տալու նպատակով: Հայկական պատվիրակության ղեկավարը, ընդգծելով, որ հանդիպումների ընթացքում բազմիցս բարձրացրել են Նախիջեւանի հարցը, հստակեցրեց. «Որեւէ տարածքի վերադարձի մասին խոսք չի կարող գնալ, պարզ պատճառով, որ ադրբեջանցիներն ընդհանրապես չեն ուզում ինքնակել այն տարածքների հարցը, որը կապված է հայկական տարածքների հետ»:

Ու չնայած ցեցվեց՝ Դորտմունդյան կոնֆերանսում հայկական պատվիրակության միասնականության փաստում էլ եղավ, սակայն պատվիրակության կազմում առաջին անգամ Սնեգիրի մեկնած ԱԺ պատգամավոր, ՀՀԿ ներկայացուցիչ **Արմեն Ասոյանը** հայտնեց կարծիք հայտնել. «Դեմ եմ ԵԱՀԿ Մինսկի

ՖՈՏՈԼՈՒ

խմբում բանակցային գործընթացը սառեցնելուն: Գուցե պետից ի՞նչ ավելին է հայկական կողմի խաղաղարար մոտեցումը, սակայն դա միջազգային ասպարեզում նպաստում է Հայաստանի որպես տարածաշրջանում խաղաղարարի հեղինակության բարձրացմանը: Մենք ինքնուրույն ենք ստեղծել մեր անվտանգությունը եւ անվտանգության համար տարածքների անհրաժեշտություն չունենք»:

Արամ Սարգսյանը, որ բացի հայկական պատվիրակության ղեկավար լինելուց նաեւ ՀՌԿ նախագահն է ու Համաշխարհային հայկական կոնգրեսի փոխնախագահը, ինքնադատության արժանացրեց ՀՀ նախագահ Ռոբերտ Քոչարյանի եւ արտաքին գործերի նախարար Վարդան Օսկանյանի քաղաքականությունը ԼՂՀ հարցում՝ Հայաստանի եւ ԼՂՀ շահերից չբխող որոշ համաձայնությունների գնալու համար: ՀՀ քաղաքականությունը ԼՂՀ հարցում Սերժ Սարգսյանի մասնակցությամբ մշակվելու եւ մինչեւ ՀՀ նախագահի ընտրություն որոշ հարցերում համաձայնությունների կայացման մասին վարչապետի հարցազրույցում հայտարարության առնչությամբ Արամ Սարգսյանը հետեւյալն ասաց. «Ոչինչ իրականացված չէ: Եթե իրականացված լիներ, մամուլի ասուլիս չէի հրավիրի, այլ կանցնեիք զանգվածային գործողությունների, որի մասին ես միշտ ասել եմ բացահայտ, եւ շարունակելու ենք այդ կեցվածքը պահպանել: Այս քաղաքական գիծը, գտնում եմ, սխալ է: Նույն բանը կանի Սերժ Սարգսյանը՝ կասեմ Սերժ Սարգսյանին: Եթե փորձի իրականացնել, բոլոր հնարավոր միջոցներով կընդդիմանամ Սերժ Սարգսյանին: Չգիտեմ, էդ ինչ պետք է լինի, որ Հանրապետական կուսակցությունը Վազգեն Սարգսյանի քաղաքական գիծը փոխի եւ այլ գիծ ընդունի»:

Արմեն Ասոյանը հարկ համարեց հստակեցնել. «Դուք բացառո՞ւմ եք, որ մինչեւ նախագահական ընտրություն ադրբեջանական կողմը համաձայնում է ԼՂՀ կարգավիճակի հարցում հայկական կողմի առաջարկած տարբերակին: Սա բացառել տեսականորեն չի կարելի»: Այս տեսական ակնկալիքի իրականացումը տրամաբանական հենքի չարժանացավ Արմեն Ասոյանի խոսքում, թերեւ նման հենքի բացակայության պատճառով:

Ի պատասխան լրագրողի հարցի, Արամ Սարգսյանը հայտարարեց, որ լիովին համակարծիք լինելով ՀՀ նախագահի թեկնածու, ԼՂՀ նախագահի նախկին խորհրդական Արման Մելիքյանի Ղարաբաղի ազատագրված տարածքները որպես Ադրբեջանից բռնագաղթած հայ փախստականների փոխհատուցում դիտարկելու մտքին, դա քիչ է համարում նախագահական ընտրություններում նրան սատարելու համար, քանի որ խոսքը երկիր կառավարելու մասին է: Դեռեւս ՀՌԿ-ն չի կայացրել թեկնածուներից որեւէ մեկին սատարելու որոշում՝ սպասում է թեկնածուների պետության առջեւ ծառացած խնդիրների լուծման ծրագրին: Այդ մասին հայտարարությունը կուսակցությունը բարձրաձայնելու է հունվարի վերջին:

Ասուլիսին ներկա էր նաեւ պատվիրակության մեկ ուրիշ ներկայացուցիչ, ՍԻՄ նախկին նախագահ **Հայկ Բաբուխանյանը:** Նրա կարծիքով, Հայաստանի իշխանությունները չպետք է թույլ տան Ադրբեջանի տնտեսության զարգացման ավելի արագընթաց տեմպեր, քան Հայաստանինն է, որպեսզի ադրբեջանական կողմը չխոսի ռազմական սկզբունքներով, իսկ եթե Ադրբեջանը շարունակի ռազմատենչ քաղաքականությունը, ապա հայկական կողմի պատասխանը պետք է լինի համարժեք:

Ամեն դեպքում, համաձայն հանախագահների հայտարարության, հանդիպումները Դորտմունդյան կոնֆերանսի շրջանակներում շարունակվելու են:

ՆԱՌԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ

Ի պատիվ Ժ. Մեֆիլյանի, Վ. Մալխասյանի եւ Ա. Բաբաջանյանի

Երեկ ՀՀ ԱԺ «Ժառանգություն» խմբակցությունը տարածել է մի հաղորդագրություն, որում մասնավորապես ասվում է. «Իշխանությունների համար վսանգ ներկայացնող քաղաքացիներ Ժիրայր Սեֆիլյանին, Վարդան Մալխասյանին, Արման Բաբաջանյանին անազատության մեջ պարբերաբար պահելը, հատկապես մեր երկրի համար հաջորդ տարեսկզբին ներքաղաքական կարեւոր իրադարձության՝ նախագահական ընտրությունների նախընտրական շրջափուլում, վկայում է, որ իշխանակարգը շարունակում է նորանկախ Հայաստանում կիրառել սպանիական բռնաճնշումներին նմանվող մեթոդներ՝ այդպիսով համակարգված կերպով խախտելով մարդու իրավունքները եւ ազատությունները: Ասվածի հերթական ապացույցն է «Ժամանակ-Երեւան» օրաթերթի խմբագիր, լրագրող ու սփյուռքից հայրենիք վերադարձած ՀՀ քաղաքացի Արման Բաբաջանյանին վերոնշյալ «անկախ հանձնաժողովի» կողմից պայմանական վաղաժամկետ ազատ արձակման միջնորդագրին հավանություն տալու դիմումի մերժումը, եւ դա այն դեպքում, երբ նա մուծել է պետությանը պատճառած վնասի փոխհատուցման գումարը՝ մեկ միլիոն դրամ: Այսպիսով՝ կարող ենք արձանագրել, որ այս իշխանությունն այնքան ահաբեկված է քաղաքական այլախոհությունից եւ իրական ժողովրդավարությունից, որ բացահայտ դատապարտելի մեթոդներով փորձում է լռեցնել եւ կալանքի տակ պահել ազգի նվիրյալ ազատամարտիկներին ու ազատ խոսքի ներկայացուցչին:

Հ. Գ. Հանրությանը հիշեցնենք, որ պարտադիր զինվորական ծառայությունից խուսափելու մեղադրանքը, որով կալանավորվել է Արման Բաբաջանյանը, կարող է եւ տարածվում է ՀՀ հազարավոր այն երիտասարդների նկատմամբ, ովքեր, գտնվելով Արման Բաբաջանյանի կարգավիճակում համապատասխան գումարը մուծելով, ազատվում են պարտադիր զինծառայությունից խուսափելու քրեական մեղադրանքից:

Ըստ պատշաճ տվյալների՝ նրանց թիվը 2000-ից ավելի է»:

Ս. Մ.

ՕՐԱԿԱՐԳ

Երկուշաբթի օրը

◆Ժամը 11.00-ին Երեւան հյուրանոցի «Պիացցետտա» սրահում տեղի կունենա «Ընտանիքի, մայրության եւ մանկության արդի հիմնախնդիրները ՀՀ-ում» թեմայով «կլոր սեղան»-քննարկում:

◆Ժամը 12.00-ին կգումարվի ՀՀ Ազգային ժողովի արտահերթ նստաշրջանը «ՀՀ ընտրական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի վերաբերյալ ՀՀ նախագահի առարկությունն ու առաջարկությունները օրակարգով:

◆Ժամը 13.10-ին ԱՄՆ դեսպանատանը լրագրողներին կհանդիպի Հայաստանում ԱՄՆ դեսպանության գործերի ժամանակավոր հավատարմատար Ջոզեֆ Փենինգթոնը:

◆Ժամը 13.00-ին՝ «Ուրբաթ» ակումբում մամուլի ասուլիս հաշմանդամ մարդկանց իրավունքների պաշտպանության միամսյակի արդյունքների մասին:

◆Նույն ժամին «Հայացք» մամուլի ակումբի հյուրն է ՄԻԱԿ ղեկավար Սամվել Ֆարմանյանը: Թեման՝ ներքաղաքական զարգացումներ:

◆Ժամը 16.00-ին Արամ Խաչատրյան տուն-թանգարանում տեղի կունենա «Հայաստանում սոցիալական պահովագրությունը» թեմայով ասուլիս:

Հայաստանը ռազմական դոկտրին կունենա

Երեկ Ազգային ժողովում քննարկում էին դոկտրինի նախագիծը

1-ին էջից

Հայաստանի ռազմական դոկտրինը մշակվել է Հայաստան-ՆԱՏՕ գործընկերության շրջանակներում Հայաստանի ընդհանուր նպատակներից ելնելով՝ որպես երկրի պաշտպանության խնդիրներից բխող հայեցակարգային փաստաթուղթ: Դրա ստեղծմանն ու հետագայում շահագրգիռ քննարկմանը մասնակցել են պետական տարբեր կառույցներ՝ հատուկ միջգերատեսչական հանձնաժողովում: Եվ ինչպես դոկտրինի նախաբանում է ձեւակերպված՝ ՀՀ ռազմական անվտանգության ապահովման ռազմաքաղաքական, ռազմական-ռազմավարական, ռազմատնտեսական եւ ռազմատեխնիկական հիմքերը որոշող պաշտոնական հայեցակարգերի համախումբ է, նշում է զինված ուժերում բարեփոխումների եւ արդիականացման ուղղությունները, սահմանում ռազմական անվտանգության հիմնադրույթները, Հայաստանի պաշտպանական ռազմավարությունը եւ այլն՝ ընդհանուր առմամբ զարգացնելով եւ մանրամասնելով վերջերս ընդունված «ՀՀ ազգային անվտանգության ռազմավարության» ռազմական ոլորտին վերաբերող դրույթները:

Արդյոք ՆԱՏՕ-ի հետ գործակցության ընդհանուր նպատակներն իրենց ազդեցությունն են թողել այս փաստաթղթի վրա. ըստ Մ. Հարությունյանի՝ ՆԱՏՕ-ից, իհարկե, առաջարկություններ ստացվել եւ ուսումնասիրվել են, բայց մեր ծրագիրը այլ պետություններից ոչ մեկի ծրագրին նման չէ, մեր պաշտպանունակության խնդիրն ենք լուծելու: Միջազգային փաստաթղթերից հիմք վերցրել ենք, բայց էությունը մերն է, միայն մեր անվտանգության եւ պաշտպանության հրամայականներով թելադրված. «Ադրբեջանի փաստաթուղթն, օրինակ, մենք գիտենք, որ անընդունելի է եղել ՆԱՏՕ-ի կողմից, հետ է ուղարկվել Ադրբեջան՝ վերանայելու այդ փաստաթուղթը, իսկ մեզ վերաբերյալ որեւէ մեծ պետությունից բացասական կարծիք չի եղել», ասաց պաշտպանության նախարարը: Իսկ Ա. Աղաբեկյանն էլ, թե՝ այո, մեր ռազմական դոկտրինը Հայաստան-ՆԱՏՕ համագործակցության շրջանակում ստորագրված պայմանագրի՝ Այսպես ծրագրի շրջանակում է, բայց Այսպես նշված նպատակները որդեգրել է ՀՀ-ն, այլ ոչ թե պարտադրվել են ՀՀ-ին: Այսպես ծրագրի մշակման ժամանակ իսկապես Հայաստանը նպատակ ուներ օգտվելու միջազգային փորձից, որպեսզի փաստաթուղթը լինի ավելի կատարյալ. «ՀՀ զինված ուժերի հիմնական երկու առաքելության՝ սահմանների պաշտպանության եւ զսպող առաքելության հետ մենք կարողացանք նշել, որ անկախ տեղակայման վայրից, նրանք լինելու են ԼՂ -ի բնակչության անվտանգության երաշխիքը», ձեռքերում համարեց ԱԺ հանձնաժողովի նախագահը:

ԱԺ հանձնաժողովի նիստում, իհարկե, շատ էլ շահագրգիռ քննարկում չստացվեց, միայն «Ժառանգության» պատգամավորները մի քանի հարց ճշտեցին: Օրինակ՝ դոկտրինում ամրագրված է, որ ՀՀ-ն ԼՂՀ-ի ժողովրդի անվտանգության եւ ընտրած ուղու երաշխավորն ու աջակիցն է. պատգամավորներին հետաքրքրում էր, թե ինչու չի ամրագրված «ԼՂՀ անկախ պետության» բառակապակցությունը, կամ արդյոք հոգեւոր եւ շատ այլ արժեքներ ազգային անվտանգության բաղադրիչ հիմնարար արժեքների թվո՞ւմ են: Վերջին հարցին պարզաբանում տալով քննարկմանը ներկա Հայաստանի նախագահի խորհրդական **Վիգեն Սարգսյանը** նկատեց, թե այդ արժեքների ցանկը կա, հայտնի է՝ դրանք հիպոթետիկ կամ ամորֆ արժեքներ չեն:

Մի խոսքով՝ Հայաստանի ռազմական դոկտրինի նախագիծ ունենք, եւ պաշտպանության նախարարը կոչ արեց պատգամավորներին գրավոր առաջարկներ ներկայացնել, որ մինչեւ նախագահի վավերացումն այն ավելի լավը դառնա:

Դուրս գա՞լ, թե՞ չգալ սովորական սպառազինության պայմանագրից

Հնարավոր համարո՞ւմ եք, որ Ռուսաստանի օրինակին հետեւելով Հայաստանը նույնպես դուրս գա սովորական սպառազինության պայմանագրից: Այս հարցին պատասխանելով Հայաստանի պաշտպանության նախարար **Միխայել Հարությունյանը** երեկ լրագրողներին ասաց. «Յուրաքանչյուր պետություն ինքն է որոշում՝ դուրս գա, թե դուրս չգա: ՀՀ-ն այդպիսի որոշում չի ընդունել: Իսկ եթե հետագայում Ադրբեջանը գնա այն քայլերին, որ մենք հիմա տեսնում ենք՝ մեծ քանակով սպառազինություններ առնումբերում է իր պետություն, եւ որը հակասում է այդ պայմանագրին, դրա լավ գիտեք: Նրանք բոլոր ցուցանիշներն անցել են, իրավունք չունեն այդ ցուցանիշներն անցնելու: Եթե հետագայում այդպիսի քայլերի դիմի Ադրբեջանը եւ այդ պայմանագրին համապատասխան չշարժվի, իհարկե, կարող է պատահել, որ Հայաստանն ուրիշ որոշում ընդունի: Բայց այդ որոշումը կընդունի գերագույն գլխավոր հրամանատարը, եւ նրանից հետո մենք որպես պաշտպանության նախարար կիրականացնենք»:

Մ. Խ.

ՍՓՅՈՒՌՔ

Լիբանանահայ կուսակցական մամուլը մահափունի մեջ

Հանրահայտ ճշմարտություն է, թե պարբերական մամուլը որեւէ հասարակության կամ հասարակական խմբի ներուժի ամենաճշգրիտ հայելին է: Այս սկզբունքով առաջնորդվելով կարող ենք հաստատել, թե լիբանանահայ գաղթօջախն առհասարակ եւ մասնավորաբար այնտեղ գործող հայկական ավանդական կուսակցությունները նահանջ են արձանագրում, որը վերջին տարիներին արագացել է աննախադեպ տեմպերով:

Կարելի է վերապահություն անել միայն ՀՅԴ «Ազդակ» օրաթերթի համար, թեեւ այս տարի իր 80-ամյակը տոնող այս օրաթերթը (առաջին համարը լույս է տեսել 1927-ի մարտի 5-ին) եւս հետընթաց արձանագրեց՝ պայմանավորված անցյալ տարվա ամառը Լիբանանի վրա իսրայելական վայրագ հարձակմամբ: Մինչեւ պատերազմը, Ա-2 չափսի 10 էջ ծավալով լույս տեսնող «Ազդակը» հրատարակում էր մի քանի հավելվածներ՝ նույնանուն ամսաթերթը, «Անահիտ»՝ կանանց համար, «Պզտիկ-մզտիկ»՝ մանկապատանեկան, ՀՅԴ պատանեկան միությունների «Վազրիկ», «Նաւասարդ» մարզական հավելվածներն ու երեւանյան «Երկիր» շաբաթաթերթի կրկնահրատարակությունը՝ դասական ուղղագրությամբ (սրանց մեծ մասը սկսել է հրատարակվել 2002-ին): Բացի սրանցից, պարբերաբար լույս էին տեսնում հատուկ թողարկումներ եւ բացառիկ համարներ՝ նվիրված այս կամ այն հիշարժան իրադարձությանը կամ ուշագրավ թեմային: Հիշյալներից այս տարի շարունակվեցին միայն «Պզտիկ-մզտիկն» ու «Երկիրը» (վերջինս միայն այս տարվա հոկտեմբերի վերջին): Սակայն, «Ազդակն» ունի իր հավելվածներն ու հատուկ թողարկումները վերակենդանացնելու ներուժ. դրա վկայությունն են այս տարի լույս տեսած երկու բացառիկ համար-հատորները (Մեծ եղեռնի 92-ամյակի եւ «Ազդակի» 80-ամյակի առիթներով) եւ երկու նոր հավելվածները՝ «Ազդակ»-ի գրական եւ արվեստի ամսական հավելվածը (առաջին համարը լույս է տեսել այս տարվա մայիսի 19-ին. այլ հարց է, թե ո՞ւմ են պետք լիբանանահայ 6-7 գրական պարբերականները, երբ ... գրականություն գրեթե չկա) եւ «Խոռվք»-ը, որը ՀՅԴ Զավարյան ուսանողական միության հրատարակությունն է (առաջին համարը լույս է տեսել ս. թ. նոյեմբերի 9-ին): Երկուսն էլ լույս են տեսնում «Ազդակի» հավելվածի կարգավիճակով:

Կուսակցական մյուս թերթերը գտնվում են անհամեմատ ծանր վիճակում: Անցյալ տարվա ամռանը իր խմբագրի՝ 91-ամյա Պարույր Երեցյանի մահից հետո կարծես մահացել է լիբանանահայ կոմունիստների «Ազգային մշակույթ» (պարբերաբար լույս է տեսել «Կանչ» անունով) շաբաթաթերթը: Երեցյանից հետո ընդամենը մեկ համար եւ ... լռություն: Ըստ մեր հավաստի տեղեկությունների, լիբանանահայ կոմունիստները չեն կարողանում խմբագիր գտնել: Իսկապես էլ՝ կադրերի սով է, կադր գտնելու դեպքում էլ, սփյուռքահայ ղեկավարիկները նրան առհասարակ վարձատրում են ավելի վատ, քան փողոցի բեռնակրին...

Նույնքան ծանր վիճակում են ավանդական մյուս երկու կուսակցությունների պաշտոնաթերթերը՝ ՌԱԿ-ի «Զարթօնք» եւ ՍԴՀԿ-ի «Արարաս» օրաթերթերը, որոնք հիմնվել են 1937-ին համապատասխանաբար սեպտեմբերի 26-ին եւ նոյեմբերի 7-ին: Նրանք ոչ միայն չտոնեցին իրենց հիմնադրման 70-ամյակը (ինչին լիովին արժանի էին), այլեւ հայտնվել են մահափունի վիճակում: «Արարաս» օրաթերթը անցյալ տասնամյակի երկրորդ կեսին ունեցավ պարբերականության լուրջ խախտումներ, եւ, ի վերջո, սփոփված եղավ 2001-ին հունիսի 8-ից լույս աշխարհ գալ շաբաթական պարբերականությամբ՝ Ա-2 չափսի 12 էջ ծավալով, թեեւ ճակատին պահպանում է «օրաթերթ» նշումը: Այս տարվա կեսերից, շնորհիվ խմբագիր Ահարոն Շիրմայանի պնդումների, թերթի պարբերականությունը փոխվեց շաբաթը երեք անգամի՝ յուրաքանչյուր համարը Ա-2 չափսի 4 էջի ծավալով: Սակայն ՍԴՀԿ Լիբանանի վարիչ մարմնի անդամ խմբագրի եւ ՍԴՀԿ ղեկավարության ջրերը նույն առվով չհոսեցին: Ղեկավարությանը դուր չէին գալիս թերթի հատկապես մասնոներին ու սիոնիստներին առնչված մերկացնող եւ խիստ քննադատական հրապարակումները, իսկ խմբագիրն էլ էապես հակառակվում էր կուսակցության՝ լիբանանյան ներին քաղաքական կյանքում բռնած դիրքորոշումներին (մեր հավաստի տեղեկություններով, ղեկավարության այդ դիրքորոշումը հարուցել է նաեւ սիրիահայ հնչակյանների բուռն վրդովումը եւ հարցը մոտ է կուսակցության պառակտման): Բացի դրանից, ինչպես կանոնի կարգ է անցել սփյուռքահայ մամուլի մեծ մասի մոտ, խմբագիրը առանց որեւէ օգնականի էր կատարում գործը: Նոյեմբերի առաջին համարներից մեկում լույս տեսավ Շիրմայանի խմբագրականը, ուր նա խստագույնս դատապարտում էր կուսակցական ղեկավարությունների ապիկարությունները եւ աղայական-տղայական մոտեցումները: Անմիջապես հետեւեց Շիրմայանի արտաքսումը «Արարատի» խմբագրի պաշտոնից. հավանաբար կհետեւի նրա արտաքսումը նաեւ Լիբանանի վարիչ մարմնից եւ նույնիսկ՝ կուսակցությունից: «Արարատի» խմբագրումը հանձնվել է Զոհրապ Դեոմնեջյանին, որը մինչեւ այս տարեսկիզբը պատասխանատու էր ՌԱԿ «Զարթօնք» օրաթերթի մարզական հրապարակումների:

Ավելացնենք, որ 2006-ի մայիսին «Արարատի» պատասխանատու տնօրեն Աբիսողոմ Կըրբըկյանի (ծանոթ էր Հրանդ Գանգրունի կեղծանունով) մահից հետո, թերթը լույս է տեսնում առօրինաբար՝ մահացած մարդու «պատասխանատվությամբ», կոպտորեն խախտելով լիբանանյան օրենքներն ու մարդկային տարական բարոյականության նորմերը...

«Ազգը» մի քանի անգամ անդրադարձել է «Զարթօնք» օրաթերթի շուրջը ծավալված դավադրությանը: Արդարեւ, այս օրաթերթի խմբագիր Պարույր Աղբաբյանն էլ օրաթերթը հրատարակում էր միայնակ, արժանանալով ղեկավարիկների ... հարձակումներին, ինչ է թե համարձակվում էր քննադատել ԱՄՆ մերձավորարեւելյան ու հատկապես լիբանանյան քաղաքականությունը (իհարկե, կային նաեւ ուրիշ լուրջ տարակարծություններ): Հանգուցալուծումը եղավ ս. թ. հունվարի 10-ից հետո թերթի դադարումը, իսկ այս ամառ Պ. Աղբաբյանը դուրս եկավ ՌԱԿ-ից: Գործը հասավ «դիվանբաշուն»՝ լիբանանյան դատարաններ... ՌԱԿ Լիբանանի ղեկավարությունը ինքնակամ լուծարել է թերթի իրավաբանական հրատարակիչ «Զարթօնք» ընկերությունը եւ դիմել է այլ քայլերի՝ իբր վերակենդանացնելու թերթը:

Մեր հաստատ համոզմամբ՝ այս դավերը, բացի կուսակցությունն էլ ավելի խայտառակելուց, ուրիշ արդյունք չեն ունենալու: Ղեկավարությունը բան չի սովորել նույնիսկ «Շիրակ» ամսագրի վերջին տարիների պատմությունից. ՌԱԿ հովանու տակ գտնվող Թեքեյան մշակութային միության «գրականութեան եւ արուեստներու» «Շիրակ» ամսագրի (Բեյրութ) խմբագրությունը տարիներ առաջ դավադրաբար խլվեց վաստակաշատ մշակողական Ժիրայր Դանիելյանից եւ հանձնվեց հասարակությանն ու գրական շրջանակներին գրեթե անծանոթ երեք ... հալեպահայերի, ովքեր հանդեսը մի քանի համար հրապարակելուց հետո ասպարեզից չքացան՝ լուրջ հարցեր ունենալով Լիբանանի ՌԱԿ ղեկավարության հետ:

Արժե պատմության համար արձանագրել, որ Ահարոն Շիրմայանն ու Պարույր Աղբաբյանը Երեւանի բուհերի շրջանավարտներ են, իսկ ՍԴՀԿ-ը (այս դարասկզբից) եւ ՌԱԿ-ը (այս տարվա հունվարի 11-ից) մեկ օրաթերթ իսկ չունեն ողջ աշխարհում: Սա չարախնդություն չէ, այլ՝ փաստի արձանագրում, խոր ցավի արտահայտություն, հոգու ճիչ, սթափվելու եւ «խելքի աշելու» կոչ՝ հնչակյան եւ ռամկավար վաստակաշատ խմբագիրների ու ղեկավարների անարժան հաջորդ ղեկավարիկներին:

Լիբանանահայ կուսակցական մամուլը ապրում է ծանրագույն ժամանակներ: Կփրկվի՞ նա...

ԳԵՎՈՐԳ ՅԱՇՔԱՅԻՆ

Գույքային իրավունքների վերականգնում առավելագույնը 10 օրից

Խոստացել են 33-րդ թաղամասի բնակիչներին

Դեկտեմբերի 13-ին բողոքի ցույցի էին դուրս եկել 33-րդ թաղամասի բնակիչները: Նպատակը նույնն է՝ վերականգնել 1991 թվականից խախտված գույքային իրավունքները: Այս անգամ 81 բնակչի ստորագրությամբ դիմում ուղղվեց ՀՀ վարչապետ Սերժ Սարգսյանին. «Խնդրում ենք Ձեր անհապաղ միջամտությունը անշարժ գույքի «Կենտրոն» կադաստրում խաղաքաղաքի որոշմամբ վերականգնված մեր գույքային իրավունքների գրանցման համար»: Բանն այն է, որ Երեւանի խաղաքաղաքապետ Երվանդ Զախարյանի 33-րդ թաղամասի մի խումբ բնակիչների գույքային իրավունքները վերականգնելու մասին կայացրած շուրջ 160 որոշումներից 4 ամսվա ընթացքում միայն 20-ն է գրանցվել «Կենտրոն» տարածքային կադաստրում: Ներկայումս այդ որոշումները չեն գրանցվում կադաստրում, համարելով դրանք գործող օրենսդրությանն անհամապատասխան: Վերջինը, բնականաբար, բնակիչների զարմանքն է հարուցում, քանի որ խիստ զարմանալի կլիներ, եթե հավատային, թե քաղաքաղաքն ու քաղաքաղաքարանն անտեղյակ են գործող օրենսդրությանը: Թերեւս առավել տարաբնական ու արդյունավետ կլիներ, որ ՀՀ կառավարության ներկայացուցիչ Երեւանի քաղաքաղաքն ու ՀՀ կառավարությանն առընթեր կադաստրի պետական կոմիտեն աշխատեին համադրելի մոտեցումներով:

«Պնդումը, թե հարցը պետք է կարգավորվի այսօր գործող օրենսդրությանը համապատասխան՝ 2006-ին կայացրած թիվ 912-Ն եւ թիվ 731-Ն որոշումներով, ենթադրում է տասնամյակներով ունեցած գույքի տերը համարվելու համար մեծ գումարների վճարում: Կադաստրային արժեքով մեր տարածքում հողի 1 քմ-ն 60 հազար դրամ է: Եվ եթե մարդն այդտեղ ունի հարյուր քմ հող, որն օգտագործում է արդեն 80 տարի, պետք է վճարի 6 հարյուր հազար դրամ սեփականության վկայական ստանալու համար: Սա արդեն աբսուրդ է, նկատի առնենք, որ մեր իրավունքները խախտվել են 1991-ից», իրավիճակն այսպես ներկայացրեց 33-րդ թաղամասի բնակիչների լիազորած անձ, Միջգերատեսչական հանձնաժողովի ներկայացուցիչ **Անժելա Աղաջանյանը**: Նշված թաղամասի բնակիչների գույքային իրավունքների խնդրով զբաղվող Միջգերատեսչական հանձնաժողովն արդեն պարզել է, որ իրավունքների խախտումը առկա է պետական մարմինների սխալ որոշումներով:

Ցույցին հաջորդեց փոխվարչապետ Հովիկ Աբրահամյանի մոտ կայացած հանդիպումը պատասխանատու բոլոր անձանց եւ հանձնաժողովի ներկայացուցիչների հետ: Ի դեպ, տարածքային կառավարման վարչության պետ **Խաչատուր Վարդանյանի** հավաստմամբ, հանդիպումն ամենեւին էլ ցույցի արդյունք չէ, այլ նախապես ծրագրված միջոցառում, որի մասին նախապես տեղեկացված են եղել նաեւ միջգերատեսչական հանձնաժողովի ներկայացուցիչները: Սակայն վերջիններս բնակիչներին անտեղյակ են թողել, ինչով էլ բացատրվում է պաշտոնատար անձանց զարմանքը հարուցած ցույցի մարդաշատությունը: Ի վերջո այս առնչությամբ տեղում իրենց բողոքն են հայտնել թաղամասի բազմաթիվ բնակիչներ ու որպես լիազորված անձ պահանջել Անժելա Աղաջանյանի մասնակցությունը հանդիպմանը: Պահանջը բավարարել է եւ ինչպես տեղեկացանք Անժելա Աղաջանյանից հանդիպմանը հաջորդած քննարկումից հետո, իրենք վստահեցնում են ստացել տարածքային կառավարման վարչության պետ Խաչիկ Վարդանյանից, որ վարչապետի պատասխանը կհետեւի առավելագույնը 10 օրից եւ խնդրին կտրվի դրական լուծում:

«Ազգ»-ը շարունակելու է հետաքրքրվել խնդրի լուծմանը:

ՆԱՆԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՀԵՐՈՍՆԵՐ

Երիկ Բաղդասարյանի հիշատակին

Լրատվամիջոցներն ավելի շատ տեղ են տալիս քաղաքական գործիչների «սխրագործություններին» եւ գրեթե չեն անդրադառնում այն հերոսներին, որոնց շնորհիվ պատմություն ենք կերտել: Ղարաբաղյան պատերազմի տարիներին զոհված մեր քաջարի մարտիկների ծնողներն ու հարազատները կարոտով են հիշում մի դեպք, երբ թերթերում տեսած կլինեն իրենց զավակների անունը հավերժացնող հոդված: Ինչի՞ համար: Մի՞թե սա էր մեր ուզածը: 92-ին զոհված ազատամարտիկ Երիկ Բաղդասարյանի հայրը, մինչեւ հոգու խորքը վիրավորված, ներկայացրեց այսօրվա իրավիճակը: Որդին, որ ինստիտուտը կիսատ թողած ինքնակամ մեկնել է կռվի դաշտ, զոհվելուց հետո ծնողներին մեծ տառապանք թողեց: Չկարողանալով տանել որդու մահը՝ երկար ժամանակ մայրը իրեն սովի է մատնում եւ առողջությանը վնաս հասցնելով հեռանում կյանքից:

Հայրը՝ Աղասի Բաղդասարյանը, տղամարդկային հատկություններով օժտված մի անձնավորություն, հանում իր թոռների երջանկության, փորձեց ամուր մնալ իր իսկ որդու արյունով պատեպանված հողի վրա: Եվ տեսնելով որդու մասին գրելու **«Ազգ»-ի** ցանկությունը, ուրախությամբ լցվեց:

Բանակը, որ մեր երկրի ամենաառաջին հիմնասյունը պիտի լինի, ամենաբաշը գաղափարախոսության պակասից, ավելի ճիշտ, բացակայությունից է տառապում: Ուրիշները, որ անարժանորեն զբաղեցնում են հայոց բանակի պաշտոնները եւ չունեն նրանց ոգու ո՛չ զորությունը, ո՛չ գաղափարախոսությունը եւ ո՛չ էլ հայրենասիրությունը, դժվար թե հիշեն իրենց կողքին զոհված տղաներին:

Երիկ Բաղդասարյանը ծնվել է 1968-ին, անցել է մարտական կարգ, բայց իմաստալից ճանապարհ: Նրա մեջ ամուր էր նստած ազգային խնդիրների, ազատության եւ վրիժառության գաղափարը: Երիկը չէր կարող անտարբեր մնալ այն ամենի հանդեպ, ինչը կատարվում էր իր շուրջը ազգային զարթոնքի տարիներին: Ազգային ազատագրական պայքարին տվեց գիտակցաբար՝ մարտական ուղին սկսելով 1989-ից «Ասպետ» ջոկատի կազմում: Երիկը բացառիկ նվիրումով էր կատարում բոլոր առաջադրանքները, կարողանում էր իր խիզախությամբ վարակել բոլորին: 91-ին ընդունվում է ՀՈԱԿ, դառնալով Արմենական ականքի անդամ: Բարձր էր նրա մարտական ոգին: 92-ին Երիկը տեղափոխվում է Մյասնիկյանի շրջանի «Նիկոլ Դուման» կամավորական ջոկատ: Այդ ջոկատի կազմից էլ միանում է «Արծիվ-1» մահապարտների գումարտակին: Նա մեծ կռիվ ուներ տալու, շատ բան ուներ ասելու, ավաղ, կարճ էր կյանքը: Սկզբունքային, նվիրված, ազնիվ ու անձնազոհ մարտիկը զոհվեց հերթական թեժ մարտի ժամանակ: Մարտական երթը շարունակելով Լաչինի միջանցքում՝ 21-օրյա կռիվներից հետո, Գյուլիբեռդի պատշտպանության ժամանակ զոհվում է Երիկը: Նոյեմբերի 22-ն էր:

«Մենք չէինք իմանում՝ ինչպես, երբ եւ ուր է գնում: Երբ վիրավորվում էր, ընկերների միջոցով էինք տեղեկանում: Չէր սիրում նամակ գրել: Երբ հիվանդանոցից հենակներով փախել էր, նոր իմացանք, որ չորս անգամ վիրավորվել էր», պատմում է Երիկի հայրը:

Երիկի միայնակ ապրող հայրը չէր ցանկանում տեսնել մի երկիր, որտեղ անարդարությունն ու անգթությունը պետք է իշխեն: Նրա որդի Երիկի երազած Հայաստան աշխարհն ուրիշ էր:

ՆԱՐԲԻ ՄՈՒՐԱԴՅԱՆ

15 ԴԵԿՏԵՄԲԵՐ 2007 ԷՋ Ա

ՀԱՅԱՍՏԱՆ

Պարբերականությունը՝ երկշաբաթյա

Թիվ 24(43)

Ցուցահանդեսի կազմակերպումը

Թանգարանների տնօրենները չեն սիրում, երբ վերետւմ որոշումներ են ընդունում ցուցահանդեսների վերաբերյալ, որոնք դուրս են մնում իրենց վերահսկողությունից: 1999-ին Վատիկանում «Ռոմա-Արմենիա» ցուցահանդեսի օրերին Պարի եւ Հայոց կաթողիկոսի համաձայնագրի ոգեշնչմամբ ոգեվարությունները ութ տարի անց Մարսելում կրկնվեցին ավելի վաս ձեւով:

Մարսելի հայ երիտասարդության եւ մշակույթի տունը (ՄՀԵՄՏ) իր նախագահ Կարո Հովսեփյանի եւ փոխնախագահ Ժերար Շալջյանի գլխավորությամբ վերջին տարիներին մշակվել էր ցուցահանդես կազմակերպելու գաղափարը: Ցանկությունը ոգեշնչվեց Մարսելի Գեղարվեստի թանգարանի տնօրեն Ֆրանսուա Ռոշլիցի հետ ունեցած հանդիպմամբ: Ֆրանսիայում «Հայաստան իմ բարեկամ» նշանաբանով անցկացված Հայաստանի տարին իրատես իրադարձային էր եւ կարելի է ասել, որ հայ մշակույթն արտերկրում ոգեշնչմամբ ներկայացնելու այս փորձը ոգեկվեց հաջողությամբ: Այդ մեծածավալ 800-ից ավելի միջոցառումներից հատկապես մի քանիսը իրենց արվեստային մակարդակով կարողացան հիացնել անգամ նրբաճաշակ ու խմահաճ եվրոպացուն: Այս մասին վկայեց ինչպես ֆրանսիական, այնպես էլ հայկական մամուլը, մասնավորապես «Ազգը», որը պարբերաբար ներկայացրել է ինչպես տեղեկատվական, այնպես էլ վերլուծական-մեկնողական բնույթի նյութեր: Մեր այս հրապարակումը տարբեր է նախորդներից նրանով, որ ֆրանսահայ պատմաբան-արվեստաբան Կլոդ Մուքաֆյանը «Հայաստան. գրչության կախարդանքը» մարսելյան ցուցահանդեսի որոշ փակ էջեր է բացում - հայացք ներսից:

ԿԼՈԴ ՄՈՒՔԱՖՅԱՆ

«Հայաստան. գրչության կախարդանքը»

Հաշվետվություն մարսելյան մի ցուցահանդեսի վերաբերյալ

հայոց այբուբենի 1600-ամյակի առթիվ: Հայաստանի տարին լավ առիթ ընձեռեց, եւ Ֆրանսիայում միջոցառումների պատասխանատու Նելլի Տարդիվիեն անցկացման վայր ընտրեց Մարսելի «Վիեյ Շարիտե» թանգարանը: ՄՀԵՄՏ-ն մոտ երկու տարի առաջ ինձ առաջարկեց մասնակցել ցուցահանդեսի կազմակերպմանը, ինչը ընդունեցի հաճույքով՝ մանավանդ նկատի ունենալով նորոգված նախկին անկելանոցի գրավիչ մթնոլորտը:

Մունիցիպալ թանգարանի պայմաններում մեր աշխատանքը պետք է իրականացվեր Մարսելի թանգարանների վարչության (ՄԹՎ), մասնավորապես դրա տնօրենուհի Մարի-Պոլ Վիալի եւ Գործերի վարչության նրա աշխատակցուհիների հետ մեկտեղ: Անցկացման տարեթվերն արագորեն որոշվեցին. 2007-ի փետրվարի 23-մայիսի 20-ը ներառնելով չորս սրահներում, որոնց ընդհանուր մակերեսը մոտ 600 քառ. մետր է: Այն ժամանակ հարաբերությունները շատ ջերմ էին: ՄՀԵՄՏ-ն պետք է սանձներ բոլոր ծախսերը. փոխադրումներ, ապահովագրություն, ներքին հարդարանք, համահրատարակություն: Ուստի անհրաժեշտ էր հովանավոր եւ միջոցներ գտնել ավելի քան 400 հազար եվրո կազմող ընդհանուր ծախսերը ծածկելու համար: Ինչ վերաբերում է փոխառության հետ կապված դիմումներին, դրանք պետք է ես պատրաստի եւ հանձնեի Ժերար Շալջյանին եւ տիկին Վիալին: Վերջինս պարտավորվում էր դրանք ուղարկել փոխատու կազմակերպություններին:

Առաջին բախումները

2006-ի սեպտեմբերին տիկին Վիալը մեզ հայտնեց, որ նախորդ ցուցահանդեսի հետ կապված պատճառներով մենք պետք է բավարարվեինք երկու ցուցասրահներով, այսինքն նախատեսված մակերեսի կեսով: Քանի որ նախագիծը մշակված էր չորս սրահի համար, անհնար էր այն փոփոխել տվյալ փուլում. ցուցադրությունը պետք է կայանար չորս սրահում կամ չպետք է կայանար: Միակ հնարավոր փոփոխությունը ժամկետի հետաձգումն էր: Նելլի Տարդիվիեի միջամտությունը ցանկալի էր: Քաղաքապետի միջազգային կապերի գծով տեղակալի ներկայությամբ անցկացված ընդհանուր ժողովից հետո տիկին Վիալը ի վերջո համաձայնեց տրամադրել չորս սրահները, իսկ ցուցահանդեսի անցկացումը նախատեսվեց ապրիլի 27-ից մինչեւ հուլիսի 22-ը: Ես նրան շնորհակալություն հայտնեցի մի նամակով, որն ավարտվում էր այսպես. *«Շնորհակալ ենք նաեւ ձեր կառուցողական դիրքորոշման համար»:* Այնինչ նա երբեւէ չնահանջեց եւ անդադար իր իշխանությունն էր բանեցնում ցուցահանդեսի կազմակերպումը խափանելու նպատակով:

Վնասները սահմանափակ կլինեին, եթե քաղաքապետարանը միջամտեր տվյալ փուլում: Մինչդեռ նա միացավ այդ վնասագործությանը:

Ֆինանսական կողմը

Տվյալ հարցի կարգավորումից հետո տիկին Վիալը կարծում էր, թե մենք չենք կարողանա ցուցանյութերով լցնել չորս սրահները եւ որ կարողանալու դեպքում ծախսերը չափազանց մեծ կլինեին՝ մոտ 800 հազար եվրո: Խոսքը մեզ ծախսերով խեղճացնելու մասին էր: Այդ հարցում նրան զգալիորեն օժանդակեց քաղաքապետարանը, որը մեկ սանտիմ անգամ չհատկացրեց ցուցահանդեսին, թեեւ այն անցկացվելու էր իր թանգարաններից մեկում:

Ինչ վերաբերում է տեղափոխմանը, Հայաստանից բերվելիք ցուցանյութերին, որոնք կազմում էին նախատեսված ավելի քան 300 նյութերի կեսը, դրանք Հայաստանի տարվա բոլոր ցուցահանդեսների նման Փարիզի օդանավակայան էր տեղափոխում եւ ապահովագրում Երեւանը: Մնում էր միայն վճարել Փարիզ-Մարսել երթուղու դիմաց: Մինչդեռ երեք տասնյակ հաստատություններից բերվելիք մյուս գործերով պետք է զբաղվեր ՄՀԵՄՏ-ն: Ես այդ տեղափոխության ընդհանուր ծախսը հաշվարկել էի մոտ 200.000 եվրո: ՄԹՎ-ն սովոր է աշխատել մարսելյան «Աժե» փոխադրական ընկերության հետ, որին խնդրել էր հաշվարկել իրերի տեղափոխման գինը: Հունվարի վերջերին ստացված պատասխանը կազմված էր մոտ 450 հազար եվրոյի հետ: Մենք ներկայացրել էինք միեւնույն ցանկը, որի դիմաց LP Art ընկերությունը պահանջեց 220 հազար եվրո եւ ապա գինն իջեցրեց 200 հազարի:

Ցուցահանդեսի նախապատրաստումը

Տհաճ կլիներ թվարկել ցուցահանդեսի նախապատրաստման հետ կապված վնասագործության բոլոր քայլերը: Ահա դրանց մի մասը.

- 2007-ի փետրվարի 1-ին քաղաքապետարանում կայացած մի ժողովից հետո ՄԹՎ-ն մեզ անսպասելիորեն տեղեկացրեց, որ փոխատուները պարտավոր են փոխատվության բոլոր բլանկները պատշաճորեն ձեւակերպել եւ հանձնել մինչեւ փետրվարի 15-ը, այլապես դրանք կմերժվեն: Վերջնաժամկետ իրոք կար, բայց շատ ավելի ճկուն էր եւ վերաբերում էր միայն Հայաստանից բերվող առարկաներին՝ դրանց անառգրավելիության հոդվածի կապակցությամբ: Այդ վերջնաժամկետի չարաշահումը ՄԹՎ-ին թույլ տվեց միակողմանիորեն մերժել Բալթիմորի Walters Art Museum-ի, Բոստոնի հանրային գրադարանի եւ Մանչեստրի «Ջոն Ռայլենդս» գրադարանի ձեռագրերի փոխատվության շուրջ առաջարկները: Երբ դա իմացա, փորձեցի ի չիք դարձնել վնասները, բայց արդեն շատ ուշ էր:

- Երկու կարեւոր տպագիր հրատարակություններ, այդ թվում հայկական առաջին պարբերական «Ազդարարի» առաջին համարը, խոստացել էր Հայաստանի ազգային գրադարանը: Արդ, փետրվարի 2-ին դրա տնօրենն իր նամակով ներողություն խնդրեց մոռացկոտության համար՝ նշելով, որ նույն ժամանակահատվածում դրանք պետք է ցուցադրվեին Ստրասբուրգում: Ես անմիջապես հեռաձայնեցի Երեւան: Մատենադարանի տնօրենը հաստատեց, որ ունի այդ նմուշները եւ պատրաստ է դրանք փոխ տալ: Մարսելցիներին հայտնեցի այդ լուրը, ինչպես նաեւ Տիգրան Գոյումջյանի առաջարկած փոխատվությունը: Վարչության պատասխանն ստացվեց փետրվարի 8-ին. «Մարի-Պոլ Վիալը չցանկացավ ուղարկել փոխառության ձեր երկու վերջին խնդրանքները»: Ես քաղաքավարությամբ պատասխանեցի. «Ես ժամանակ ունեմ, ուստի ինձ թույլ եմ տալիս ձեզ դիմել ձեր որոշումը վերանայելու խնդրանքով»: «Ազդարարը» անհրաժեշտ էր ցուցահանդեսին, իսկ փոխառության խնդրանքները պետք է թվագրված լինեին մինչեւ փետրվարի 15-ը: Մեկ ուրիշ առիթով վարչության նշած արարողակարգին հետեւելով՝ ես Երեւանից պահանջեցի փոխատվության չլրացված բլանկներ, որոնք մարսելցիներին հանձնեցի ժամանակին, պատշաճ ձեւով լրացված եւ ստորագրված: Այդուհանդերձ, մերժումը շարունակվեց:

- Այս ամենի գագաթնակետը դարձավ փետրվարի 15-ին Ժերար Շալջյանին տիկին Վիալի հասցեագրած նամակը, որի պատճենները ուղարկվել էին պարոն Ռոկկա-Սեռային (քաղաքապետարան) եւ տիկին Վայսին (ԱԳՆ մշակութային բաժին): Նամակում ես անուղղակիորեն մեղադրվում էի **«գրագրության զեղծումների»** մեջ: Նա ավելացնում էր. **«Ուզում եմ ձեզ հայտնել, որ նման նախաձեռնությունը չափազանց վտանգավոր է»:** Բարեբախտաբար, այդ զրպարտության պայմաններում ամենը համերաշխվեցին ինձ հետ, բացի Ռոկկա-Սեռայից: Քաղաքապետարանը շարունակում էր օժանդակել ՄԹՎ-ի քայլերին: Ի վերջո, Նելլի Տարդիվեի միջամտությունը տիկին Վիալին ստիպեց զիջումներ անել երկու տպագիր հրատարակությունների փոխառության հարցում (այդուհանդերձ, նա կտրականապես հրաժարվեց հաստատել Գոյումջյանի հավաքածուի փոխատվությունները):

- Մարտի 29-ին ի հայտ եկավ նոր մարտավարություն. բաժանել՝ տիրելու նպատակով: Ժերար Շալջյանը ստացավ մի պաթետիկ նամակ. **«Այս բոլոր ձգձգումները, բացումից մեկ ամիս առաջ ընդունելի ժամկետներում որոշումներ ընդունելու անկարողությունը մեզ հասցրել են անդունդի եզրին. մինչեւ հիմա որեւէ ցուցանմուշ չենք ստացել»:** Մարսելի թանգարանների տնօրենուհին պետք է իմանա, որ նման արժեքավոր գործերը մեկ ամիս առաջ չեն բերվում: Նա շարունակում էր. **«Պարոն Մուքաֆյանի խոսելաոճը, գրեթե մշտական ահաբեկումները, տիկին Տարդիվիեի միջնորդությանը պարբերաբար դիմելը, մեզ լսելուց հրաժարվելն ի վերջո անտանելի լարվածության մթնոլորտ են ստեղծել»:** Ավելորդ է ասել, որ պառակտելու այդ փորձը կարճ տեւեց, եւ նրա մոայլ կանխատեսումները հօդս ցնդեցին: Նախապատրաստությունը շարունակվում էր վնասագործության բոլոր փորձերին հակառակ: Բայց մենք շուտով իրոք հայտնվելու էինք «անդունդի եզրին», միայն թե ուրիշ պատճառներով:

Հայկական դաշնահարում թիկունքին

Մարտի վերջերին՝ բացումից մեկ ամիս առաջ մենք բարեբախտաբար ընդհանուր լեզու գտանք կառավարիչների հետ, որոնց համագործակցությունն անհրաժեշտ էր, մասնավորապես իրերի տեղ հասնելը եւ ուղարկվելը հաստատելու առումով: Իրավիճակը կարծես հանդարտվել էր վերջին ամսվա անխուսափելի դժվարություններից առաջ: Այդ ժամանակ էր, որ ի հայտ եկավ միանգամայն անսպասելի մի սպառնալիք՝ կապված ոչ թե Մարսելի, այլ Ֆրանսիայում Հայաստանի դեսպան Էդուարդ Նալբանդյանի եւ Հայաստանի տարվա միջոցառումներում Հայաստանի պատասխանատու Վիգեն Սարգսյանի հետ:

Փետրվարին Լուվրում ցուցահանդեսի բացումից ի վեր մթնոլորտն անդադար շիկացել էր Հայաստանի տարվա հայկական եւ ֆրանսիական կողմերի միջեւ: Գրեթե յուրաքանչյուր միջոցառում կամ ցուցահանդես բախումների պատճառ էր դառնում: Դրանք երբեմն վերաբերում էին Եկեղեցու պատմությանն առնչվող որոշ տեքստերի, ինչը Հայաստանի իշխանությունների ճաշակով չէր: Երբեմն էլ վեճերը վերաբերում էին արձանագրային գեղարվեստներին: Ընդհանուր առմամբ հայկական կողմը ֆրանսիացիներին մեղադրում էր դիմացինին վերեւից նայելու, վերմակն իրենց վրա քաշելու, Հայաստանի դերը եւ ֆինանսական ջանքերը թերագնահատելու մեջ: Ֆրանսիական կողմը իր հերթին դեսպանին տեղի անտեղի հանդիմանում էր այն բանում, որ Հայաստանի տարին լոկ ցատկահարթակ է դարձնում իր անձնական հավակնությունների համար: Մարսելի ցուցահանդեսի նախապատրաստման վերջին ամսում երկու կողմերն անչափ լարված հարաբերություններ ունեին եւ փաստորեն չէին շփվում. դա բնավ չէր դյուրացնում վիճակը:

Հայաստանից բերվող գործերն անպայման պետք է տեղափոխեր «Արմավիա» ընկերությունը՝ Հայաստանի տարվա հովանավորը, որը

Տես էջ 8

Ֆրանսիայում «Հայաստան իմ բարեկամ» նշանաբանով անցկացված Հայաստանի տարին իրատես իրադարձային էր եւ կարելի է ասել, որ հայ մշակույթն արտերկրում պատշաճորեն ներկայացնելու այս փորձը ոգեկվեց հաջողությամբ: Այդ մեծածավալ 800-ից ավելի միջոցառումներից հատկապես մի քանիսը իրենց արվեստային մակարդակով կարողացան հիացնել անգամ նրբաճաշակ ու խմահաճ եվրոպացուն: Այս մասին վկայեց ինչպես ֆրանսիական, այնպես էլ հայկական մամուլը, մասնավորապես «Ազգը», որը պարբերաբար ներկայացրել է ինչպես տեղեկատվական, այնպես էլ վերլուծական-մեկնողական բնույթի նյութեր: Մեր այս հրապարակումը տարբեր է նախորդներից նրանով, որ ֆրանսահայ պատմաբան-արվեստաբան Կլոդ Մուքաֆյանը «Հայաստան. գրչության կախարդանքը» մարսելյան ցուցահանդեսի որոշ փակ էջեր է բացում - հայացք ներսից:

Հայաստանից

Ա էջից

շաբաթական երկու թռիչք էր իրականացնում (երկուշաբթի եւ ուրբաթ օրերին): Նախատեսված էր, որ Հայաստանից գործերը ապրիլի 13-ին կբերվեն «Ռուսսի» օդանավակայան, կմասնակցեն LP Art փոխադրական ընկերության կողմից, ապա Մարսել կուղարկվեն ապրիլի 16-ին, որպեսզի տեղ հասնեն շաբաթավերջին, վերջին շաբաթը թողնելով սփյուռքի հասարակությունների եւ հավաքների ընդունմանն ու տեղավորմանը: Միաժամանակ մենք «Սոմոժի» հրատարակչության հետ ամեն ջանք գործադրում էինք ցուցահանդեսի բացման օրը՝ ապրիլի 27-ին ծավալուն գիրք-կատալոգը լույս ընծայելու համար:

«Հայկական հոգսերը» ծայր առան գրի չորս նախաբանների առաջնայնության կապակցությամբ: Դրանց հեղինակներն էին քաղաքագետ Ժան-Կլոդ Գոդենը, Շրջանային խորհրդի նախագահ, ցուցահանդեսի գլխավոր մեկենաս Միշել Վոզելը, երկրորդ մեկենաս «Կրեդի ագրիկոլը» եւ դեսպանը: Սովորույթը եւ արձանագրությունը ենթադրում էին հետեւյալ կարգը. Գոդեն, Վոզել, Նալբանդյան, «Կրեդի ագրիկոլ»: Ապրիլի 3-ին դեսպանը խնդրեց **«Հայաստանի միակ ներկայացուցչի՝ դեսպանի նախաբանը զետեղել առաջին կամ գոնե երկրորդ տեղում, ֆրանսիական կողմի որեւէ նախաբանից հետո, որպեսզի հարգվի հավասարակշիռ մոտեցումը»**: Հայկական կողմը նաեւ պահանջեց **«ստորագրված պայմանագիրը եւ հաղորդակցության բոլոր փաստաթղթերի (ազդագրեր, հրավեր, մամլո վավերագրեր եւ այլն) նախագծերը»**: Խնդրո առարկա պայմանագիրը վերաբերում էր հայտնի անձանց անունների հարցերին. դեսպանի համար գլխավորը անունների ստուգումն էր (մասնավորապես համոզվելը, որ Նելլի Տարդիվիեի անունն այնտեղ չկա), դրանց հերթականությունը եւ տառերի չափերը: Ամսի 5-ին հրատարակիչն ստացավ մի սպառնալի նամակ. **«1. Ֆրանսիայում Հայաստանի տարին բնավ նշված չէ կազմի առաջին էջում: 2 Հայաստանի տարվա խորհրդանիշը կազմի չորրորդ էջում, գրեթե անտեսանելի գծիկավոր կողի կողմին դնելը կարող է ընկալվել որպես հարգանքի բացակայության նշան: 3. Ֆրանսիայում Հայաստանի ամենաբարձրաստիճան ներկայացուցչի՝ դեսպանի տեքստը վերջնականապես չորրորդ տեղում դնելը նույնպես կարող է ընկալվել որպես հարգանքի բացակայության նշան: Այդ պահանջներն անտեսվեցին, եւ հայկական կողմը չի կարող վավերացնել նախագիծը ներկա տեսքով»**: Հրատարակչի պատասխանը. «Ինչ վերաբերում է կազմի առաջին էջում «Ֆրանսիայում Հայաստանի տարի» նշմանը, դա անհնար է, քանզի առաջին էջում կան միայն հրատարակչի եւ համահրատարակչի պայմանանշանները: Ինչպես տեսնում եք, ես նշումը բավական տեսանելի ձեւով ավելացրել եմ կազմի չորրորդ էջում»:

Վտանգված ցուցահանդես

Ապրիլի 11-ին Cultures France-ը եւ LP Art-ը Երեւանից ստացան հետեւյալ նամակը. **«Կուզենայի ձեզ հայտնել, որ Ֆրանսիայում Հայաստանի տարվա գլխավոր պատասխանատու Վիգեն Սարգսյանը հրաժարվում է ստորագրել Մարսելի «Հայաստան. գրչության կախարդանքը» ցուցահանդեսի պայմանագրերը, քանզի հաղորդակցության փաստաթղթերի հրապարակմանը վերաբերող հայկական կողմի պահանջները շարունակում են անտեսվել, իսկ Հայաստանն այնտեղ պատշաճորեն ներկայացված չէ: Գործերի առաքումն առկախված է: Եթե առաջիկա օրերին այս հարցը չկարգավորվի, մենք ափսոսանքով ստիպված կլինենք չեղյալ հայտարարել ցուցահանդեսը»**: Ամեն ինչ ասված էր:

Դեսպանը քանիցս հարգանք էր դրսեւորել իմ հանդեպ, եւ ես մտածեցի, որ իրավիճակի հարթման միջոցը կլիներ նրան անմիջականորեն հեռաձայնելը: Բայց նա սահմանափակվեց միայն ֆրանսիական կողմի վրա իր մաղձը թափելով, ինձ չթողնելով մեկ բառ անգամ արտաբերել: Նա պարզաց, որ նման պայմաններում գործերը Հայաստանից չեն բերվի: Լրջորեն մտահոգվելով եւ նույնիսկ խուճապի մատնվելով՝ ես անմիջապես նամակ հղեցի նրան. **«Հուսով եմ, որ մենք երբեւիցե չենք հասնի ցուցահանդեսը չեղյալ հայտարարելու ցավալի ծայրահեղությանը, միջոցառում, որը ողջ աշխարհին պետք է ցուցադրի հայկական մշակույթի հարստությունը: Ազդագիրը ձեզ կհանձնվի տպագրությունից առաջ: Հուսով եմ, որ արդեն պատրաստ 27 բեռնարկղերը Հայաստանից կբերվեն ուրբաթ առավոտյան, քանզի տեղադրման աշխատանքը պետք է սկսվի երկուշաբթի առավոտյան, եւ ժամանակը հաշված է»**: Դեսպանը պատասխանեց. **«Այդ ցուցահանդեսի կազմակերպական ծախողման պատասխանատվությունը կընկնի տվյալ պայմանագիրը ստորագրած, բայց չկատարած անձանց վրա: Առ այսօր՝ ցուցահանդեսից երկու շաբաթ առաջ, մենք չենք ստացել ազդագրերի նախագծերը եւ չենք հաստատել հրավերի նախագիծը»**: Ապրիլի 12-ն էր, հինգշաբթի, եւ նա վստահ էր, որ Երեւանի օդանավակայանում դրված գործերը այդ օրը չեն ուղարկի: Վերջին հույսը ապրիլի 16-ի չվերթն էր: Այդ դեպքում գործերը Մարսել կհասցվեին 18-ին, աշխատանքը կսկսվեր 19-ին՝ երեք օր ուշացումով: Դա տանելի կլիներ, բայց եթե այդ չվերթն էլ բաց թողնվեր, ցուցահանդեսը վերջնականապես կձախողվեր, քանզի հաջորդ չվերթը ապրիլի 29-ին էր: Ես գրեցի Վիգեն Սարգսյանին, նշելով, որ չուղարկումը, բացի աղետալի հետեւանքից, պարունակում էր նաեւ կազմակերպիչների դատավարության վտանգ: Նրա պատասխանն ստացվեց ուրբաթ օրը՝ ապրիլի 13-ի հետմիջօրեին: Նա գործերը չէր ուղարկի, քանի դեռ պահանջները չէին բավարարվել: Եվ ամեն ինչ հարկավոր էր կարգավորել դեսպանատան հետ: Վերջնագրային ձեւով նա նախազգուշացնում էր. օրն ուրբաթ էր, եւ մատաղուները չէր գործում շաբաթ օրը: Ցուցանմուշները երկուշաբթի օրն առաքելու միակ հնարավորությունը մինչեւ ժամը 11-ը դեսպանատան թույլտվության սանալն էր: Ցուցահանդեսի ճակատագիրը կախված էր մի քանի ժամից: Ես մի հուսահատ փորձ անելով գրեցի դեսպանությանը. **«Տեխնիկապես անհնար է անմիջապես ճշգրտումներ կատարել, բայց մենք երաշխավորում ենք մեր գրածները: Հավելումներ եւ ճշգրտումներ կարվեն հնարավորության դեպքում, եւ այդ ամենը դեսպանին կհանձնվի տպագրությունից առաջ: Սա ՄՀԵՄ-ի եւ անձամբ իմ պարտավորությունն է»**: Չնայած մեր խոսմանը, հայկական կողմը զուտ արձանագրային հարցերի պատճառով պատրաստ էր խաչ քաշել երկու տարվա աշխատանքների ու զոհողությունների վրա, համաշխարհային հեղինակավոր հաստատությունների մասնակցության, Վարշավայից Լվովի ավտոբուսը փոխ առնելու կաթողիկոսի խնդանքի վրա, ֆոնդերը միավորելու ՄՀԵՄ ջանքերի, գրեթե պատրաստ ներին հարդարանքի, հայկական մշակույթի շեղ ցուցադրության վրա, որը հենց Վիգեն Սարգսյանը անվանել էր Հայաստանի տարվա **«խոշոր, գլխավոր իրադարձություններից մեկը»**: Անկախ դրդապատճառների արդարացի կամ անարդարացի լինելուց, պատասխանը միանգամայն անհամարժեք էր:

Փրկություն վերջին պահին

Նման իրավիճակում միակ հնարավորությունը վերին աստիճանի դիմելն էր: Հայաստանում նվիրյալ բարեկամները արդեն տագնապահար էին իրավիճակի լրջությունից եւ տեղեկացրել էին վարչապետին: Ըստ երեւույթին, այդ քայլը հասավ նպատակին. ապրիլի 13-ի առավոտյան Վիգեն Սարգսյանից իմ ստացած նամակը հուսադրող էր: Վարչապետի աշխատակազմից եւ Սբ. Էջմիածնից ստացած բազմաթիվ հեռախոսազանգերը վկայակոչելով, նա ավելացնում էր, որ ոչինչ չի փոխվելու եւ որ հարկավոր է բավարարել հաղորդակցությանն առնչվող հայկական կողմի պահանջները: Ինձ խորհուրդ էր տալիս զբաղվել դրանով եւ ոչ թե մեջ գցել իմ բարեկամներին: Բայց Երեւանից ուրբաթ հետմիջօրեին ստացված լուրերը մեզ հուսադրեցին: Միայն շաբաթ հետմիջօրեին ՄՀԵՄ-ն եւ ես ստացանք դեսպանատան հակիրճ նամակը. **«Հաճույքով ձեզ հայտարարում եմ, որ հայկական կողմը հաստատում է այսօր 11.59-ին ուղարկված նախագծերը»**:

Բացումը

Բարոյական եւ նյութական հյուծիչ այդ վայրիվերումների հետեւանքը դարձավ նախապատրաստական աշխատանքների վտանգավոր ձգձգումը: Նման պայմաններում ցուցահանդեսի ձեւավորումը եւ գիրք-կատալոգի ավարտումը սխրանք էին պահանջում: Բարեբախտաբար, «Սոմոժի» հրատարակչության աշխատակցուհի Իլեանա Ալմանը, Օրելի Մատլոն եւ Քրիստիան Բեռնարը (LP Art) բարեհաճ գտնվեցին եւ համբերատար կերպով բացառիկ արդյունավետությամբ աշխատեցին: Գործին միացան Մատենադարանից Գետրգ Տեր-Վարդանյանը եւ Բեռլինից Մելինե Փեհլիվանյանը: Այսպիսով, ցուցադրանքի հիմնական մասը պատրաստ էր ապրիլի 27-ին՝ բացման օրը: Ինչ վերաբերում է կատալոգներին, դրանք ստացվել էին նախօրեին:

Դեսպանը ներկա գտնվեց բացման արարողությանը, ելույթ ունեցավ եւ անմիջապես էլ մեկնեց: Ներկա էին նաեւ մի շարք տեղական պատգամավորներ, այդ թվում՝ պարոնայք Գոդենը եւ Վոզելը: Միակ անձնավորությունը, որը հեռաֆրությամբ հետետում էր արարողությանը եւ հարցեր տալիս ու մեկնաբանություններ անում, Միշել Վոզելն էր: Մինչդեռ քաղաքապետարանի պաշտոնյաներից որեւէ մեկը չբարեհաճեց այցելել ցուցահանդես, որն անցկացվում էր իրենց տիրույթներում:

Ցուցահանդեսի ընթացքը

Ցուցադրությունը տեւեց գրեթե երեք ամիս: Տիկին Վիալը եւ քաղաքապետարանում նրա վերադասները բնավ մեզ չառաջարկեցին պատմել դրա ընթացքի մասին, ամփոփում կատարել կամ արծարծել դժվարությունները: Ամեն ինչ ինքնահոսի էր մատնված: Սրահներից դուրս այցելուներն ուղեցույց-նշաններ չէին տեսնում: Լուսավորությունը պարբերաբար վատանում էր, պահպանությունն անբավարար էր, օդորակիչները հաճախ խափանվում էին այս կամ այն սրահում: Միայն մեր զգոնության շնորհիվ գերծ մնացինք միջադեպերից:

Ցուցահանդեսն ավարտվեց կիրակի օրը՝ հուլիսի 22-ին: Ապամոնտաժումը տեւեց չորս օր. աշխատանքի նրբությունը ենթադրում էր թանգարանի պատասխանատվություն: Քաղաքապետարանը եւ տնօրենությունը բնավ չէին մասնակցում աշխատանքներին: Հինգշաբթի օրը՝ հուլիսի 26-ին իրերը բեռնարկղերի մեջ էին:

Քաղաքապետարանի լրատվական վնասագործությունը

«Վիեյ Շարիտեն» Լուվրը չէ, այնտեղ գալիս են միայն նպատակով: Ահա թե ինչու լրատվությունը (գովազդ, մամուլ, հեռուստատեսություն) վճռական դեր ուներ միջոցառման անցկացման գործում: Մինչդեռ քաղաքապետարանը եւ ՄԹՎ-ն ամեն ինչ արեցին իրադարձությունը լռության մատնելու համար: Հեռուստատեսությամբ որեւէ հաղորդում չցուցադրվեց բացման արարողության մասին, ազդագրեր չկային քաղաքապետարանի վահանակների վրա, գրեթե բացարձակ լռություն էր համացանցի կայքէջերում: ՄԹՎ մամլո ծառայությունը բացակա էր: ՄՀԵՄ-ն եւ անձամբ ես մեր ուժերի չափով փորձեցինք լրացնել այդ բացթողումը. դա դյուրին չէր: Ավելին, պատահեց ձախորդություն. ազգային օրաթերթերի տարածման հետ կապված գործադուլի պատճառով հունիսի 13-ին «Մոնդ» թերթում հրապարակված Միշել Սամսոնի հրաշալի հոդվածը չտպագրվեց եւ մատչելի մնաց միայն համացանցում:

Նման կարեւոր միջոցառման առթիվ քաղաքապետարանի լռությունից զարմացած մարսելցի մի այցելուի նամակին ի պատասխան քաղաքապետի առաջին տեղակալ Ռընո Մյուզելիեն հուլիսի 13-ին փորձեց արդարանալ Շրջանային խորհրդի պատին փակցված մի ազդագրի գոյությամբ, ինչպես նաեւ «Մոնդ» թերթի «հրաշալի հոդվածով»: Այս ամենը ճիշտ է, բայց հիշյալ ազդագրի դիմաց վճարել էր ՄՀԵՄ-ն, իսկ սոցիալիստներից կազմված Շրջանային խորհուրդը որեւէ կապ չուներ Ժողովրդական շարժման միության ներկայացուցիչներից կազմված քաղաքապետարանի հետ: Իսկ հիշյալ հոդվածի հրապարակումը պայմանավորված էր բացառապես մեր միջամտությամբ: Երբ թագավորը մերկ է, նա չի վարանում զարդարվել ուրիշների, երբեմն նույնիսկ իր քաղաքական հակառակորդների հագուստներով:

Իսկ հայերը...

Քաղաքապետարանի բացթողումը կարող էր փոխհատուցվել հայերի վճռական դերով: Մարսելի շրջանում, որտեղ հայտնի է, մոտ 80 հազար հայ կա: Որտե՞ղ էին նրանք: Հայերի մեծ մասը ոչ միայն չայցելեց ցուցահանդես, այլեւ տեղից չշարժվեց: Այս զանգվածային անհետաքրքրությանը գումարվեց Մարսելում հատկապես մեծ ավերներ գործող կլանային «քաղցկեղը». քանի որ ցուցահանդեսը կրում էր ՄՀԵՄ-ի դրոշը, այն արժանացավ մյուս կազմակերպությունների անտարբերությանը: Ինչ վերաբերում է Ֆրանսիայի մյուս շրջանների հայերին, մասնավորապես Գրենոբլ-Լիոն-Մարսել-Նիցցա քառանկյան բնակիչներին, նրանք եւս հետաքրքրություն չդրսեւորեցին:

Ֆրանսահայ մամուլը նույնպես բացակա էր: Միակ բացառություններն էին «Ֆրանս-Արմենի» հանդեսը (որը նախապես հայտարարեց ցուցահանդեսի մասին) եւ «Յառաջը», որտեղ հայր Պզտիկյանը բացման հաջորդ օրը հրապարակեց մի ծավալուն եւ պատշաճ հաշվետվություն: «Նուվել դ՝ Արմենի» հանդեսի էջերում Ռընե Ջագոյանը ուշացումով փրկեց դրությունը, բայց նրա հրաշալի հոդվածը լույս տեսավ միայն հուլիսյան համարում՝ փակումից երկու շաբաթ առաջ:

Երկու խոսք ցուցահանդեսի մասին

Գրչության կարկառուն դեմքեր Շավարշ Միսսարյանին եւ Հրանտ Դինքին նվիրված լինելով՝ «Հայաստան. գրչության կախարդանքը» ցուցահանդեսը ներկայացնում էր աշխարհի բոլոր կողմից բերված 300-ից ավելի բացառիկ նմուշներ: Ցուցանմուշները ներկայացված էին ներքին հիանալի ձեւավորման, խորհրդավորության եւ կախարդանքի պայմաններում, Էդուարդ Սարգսյանի մտահղացմամբ եւ կատարմամբ: Ձեռագրերի ընտրությունը մեծ չափով պայմանավորված էր հնագրագետ Տիգրան Գույումջյանի վերջին գրքով, որն իր գիտելիքներն ու փորձը ծառայեցրեց ցուցահանդեսին, ցուցաբերելով էական օգնություն:

Ցուցադրված գործերի թվում հիշատակենք հայկական հնագույն վիմագրությունները, մետաղե եւ կավե կազմերը, Հռոմի խաչքարը (1246), Անիի գրակալը (1272), հայ առաջին տպագրիչի հինգ գրքերից երեքը (1512-1513), Նոր Ջուղայում տպագրված առաջին գրքի միակ օրինակը (1638), այն գեղեցիկ ցուցափեղկը, որտեղ կողք-կողքի դրված էին «Վեթ Ալեխանդրի» գործի չորս ամենագեղեցիկ ձեռագրերից երեքը (չորրորդը՝ Մանչեսթրինը, ցավոք, առկա էր փոխ տրված նյութերի մեջ, բայց անտեսվել էր ՄԹՎ-ի կողմից): Բացի այս ամենից, կային չորս առասպելական առարկաներ, որոնք երկար ժամանակ կորած էին համարվում.

- 1198-ին՝ Հայաստանի վերջին թագավորության հիմնադրման տարում ստեղծված հոյակերտ Լվովի ավտոբուսը: Դա նրա համաշխարհային առաջին ցուցադրությունն էր, որն ուղեկցվել էր անչափ խիստ նախազգուշական միջոցներով. ձեռնագիրը տեղափոխվել էր մասնավոր օդանավով, պահապանների ուղեկցությամբ եւ ցուցադրվում էր Իսրայելում պատվիրված հատուկ ազդանշանման համակարգի առկայությամբ:

- 17-րդ դարասկզբի ճանապարհորդությունը պատմող Սիմեոն Լեհացու ձեռագրի բնօրինակը, որը, բարեբախտաբար, բերվել էր Վարշավայից եւ նույնպես ցուցադրված էր առաջին անգամ:

- 1700-ին գործված եւ բոլոր գրքերում հիշատակված «Գոհար» հրաշալի գորգը, որը հաստատեց մարդիկ էին տեսել, Տիգրան Գույումջյանը կարողացել էր այն գտնել Բոստոնի մասնավոր հավաքածուներից մեկում:

- Բոլոնիայում պահպանված Երեմիա Չելեբի Քյոմուրճյանի նշանակալի Քարտեզը, որն առաջին անգամ ներկայացվել էր Վատիկանում 1999-ին «Ռոմա-Արմենիա» ցուցահանդեսի շրջանակներում, Գաբրիելա Ուլուհոգյանի միջամտության շնորհիվ այն փոխ տվեց երկրորդ եւ վերջին անգամ:

Գիրք-կատալոգը

Ներկայացված գործերից յուրաքանչյուրը, անշուշտ, իր պատկերը եւ բնութագրումն ուներ գրականության ցանկ պարունակող ծավալուն գիրք-կատալոգում, որը «Սոմոժի» հրատարակչությունը լույս էր ընծայել ՄՀԵՄ-ի համագործակցությամբ: 432 էջանոց հրատարակության մեջ կան 350-ից ավելի գունավոր պատկեր, 332 նոթագրություն, 63 հոդված եւ 8 քարտեզ: Այդ աշխատանքին մասնակցած 5 տասնյակ անձանց մեջ հարկ է առանձնացնել Ագնես Ուզունյանին, որի հայերենի իմացությունը հավասարազոր է իր նվիրվածությանն ու գիտական խստապահանջությանը: Աշխատությունը զգալի հաջողություն ունեցավ, քանի որ 3 հազար օրինակ ընդհանուր տպաքանակի մեջ «Սոմոժիի» քվոտան արդեն սպառված է:

Եզրակացություն

Չնայած քաղաքապետարանի վարչության մշտական թշնամանքի մթնոլորտին, չնայած Հայաստանի որոշ պատասխանատուների դիրքորոշման պատճառով երկու շաբաթ կախված դամոկլեսյան սրին, աշխատանքի արդյունքը դարձավ մի բացառիկ ցուցահանդես, որի գործերի բարձրարժեքությունը զուգորդում էր դրանց ներկայացման որակի հետ: Այցելուները դա միահամուռ խոստովանեցին: Ու թեեւ նրանք այնքան էլ շատ չէին, բայց որակը փոխարինեց քանակին: Ավելին, այդ ցուցահանդեսը թույլ տվեց վերագտնել մինչ այդ տեղայնացված որոշ կարեւորագույն գործեր եւ առիթ դարձավ որակյալ գիրք-կատալոգի հրատարակման համար:

Այդ արդյունքն անհնար կլիներ առանց բազմաթիվ կազմակերպությունների եւ Հայաստանում, Ֆրանսիայում, ողջ աշխարհում բարեկամական կապերի մի ամբողջ ցանցի արդյունավետ օգնության: Դա անհրաժեշտություն էր

«Յառաջ», 4 նոյեմբեր, 2007

Թարգմ.՝ ՊԵՏՐՈՍ ԲԵՇԻԿՅԱՆԻ

ԱԶԳ-ՆԵՐԴԻՐ

Զրախոսություն

Կարոլիս Սուրենեանի ԿԵԱՆՔԻ ՄԱՏԵԱՆԸ

ԵՐԱՆ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆ

Զառմանահրաշ երեւոյթ է, երբ գրող մը՝ ութսունամեայ ոտաստանի տարիքին, իր կեանքի վիթխարի գլուխ-գործոցը՝ աւելի քան 1600 էջերէ բաղկացեալ երկհատորեայ Օրագիրը՝ պեղէ, վերամշակէ, խմբագրէ ու հրամցնէ ընթերցողին: Այսպիսի հրաշանման երեւոյթի մը դէմ յանդիման կը գտնուի ընթերցողը, երբ իրեն կը մատուցուի տաղանդաւոր գրող ու թարգմանիչ Կարոլիս Սուրենեանի Օրագիրը, որ կ՚ընդգրկէ շուրջ 60-ամեայ կեանքի մը օրագրութիւնը՝ 1943-2001, որ անցեալէն է իր հարուստ բովանդակութեամբ, խոհա-փիլիսոփայական խորաթափանց վերլուծութիւններով, մարդկային գոյութենական եւ տիեզերական խորային հարցերու ամենալայն ընդգրկումով, ինչպէս նաեւ հայ մարդու, մեր երկրի ու ժողովուրդի ճակատագրին հետ առնչուող հիմնական խնդիրներու խորազնին քննարկումներով: Միաժամանակ տարեգրութիւնն է անիկա մեր ժողովուրդի եւ երկրի աւելի քան կէս դարեայ կեանքին՝ իր վերիվայրումներով, խորխորատներով եւ խիզախումներով:

Պատանի տարիքէն Կարոլիս Սուրենեան սկսած է օրագրել՝ առօրեայ զինք յուզող երեւոյթներու տպաւորութեանց մասին, պատմողական խոհագրութեան (narrative essay) ձեւով, որ ներդաշնակորէն իրարու կը միահիւսուին զգայականօրէն ընկալուած պատկեր-արտայայտութիւններն ու խոհա-փիլիսոփայական վերլուծութիւնները, յուզա-իմացական ոգիով եւ գեղարուեստական հզօր շունչով: Պատճառը՝ առաջին հերթին գրելու ներքին զօրաւոր մղումն է, ներքին «դեւը», որ գրողին ի վերուստ տուած ճակատագիր է յայտնապէս, նմանապէս լիցքաթափուելու պահանջը, ինքնաբուժուելու համար առօրեայի առթած խորունկ տագնապներէն ու տարայանքներէն...: Ամէնէն աւելի, սակայն, կը գրէ աւելի լաւ ճանչնալու համար մարդ-գաղտնիքը, կեցութեան բարդ խնդիրները, մարդկային եւ ազգային ճակատագիրը, տիեզերքի եւ բնութեան բազմաթիսի եւ անպատասխան «ինչու»ները...: Արդիւնքը՝ պարզ օրագրութենէ մը շատ աւելի, «իր կեանքի գործ»ն է, հոգեկան կենսագրութիւն եւ ինքնախոստովանանք ի խորոց սրտի եւ ամենայն անկեղծութեամբ՝ ինքն իր առջեւ, սեփական խղճի եւ սեփական գոյութեան բարձր պատասխանատուութեան առջեւ: Մտերմագոյն ու խորագոյն մենախօսութիւն մը՝ արդարեւ, լայն կտաւի վրայ պատսպարուած, որ կը դառնայ՝ միտք ու հոգի հարստացնող սեփականութիւնը ընթերցողին, գրական հազուագիւտ գանձ մը անգտանելի, որ կը պեղէ նաեւ ընթերցողին սեփական ներաշխարհը, յարուցելով գոյութենական ու տիեզերական «ինչու»ներ, զայն մղելով աւելի լաւ ճանչնալու մարդկային ու ազգային ճակատագրի, սեփական երկրի ու ժողովուրդի հիմնահարցերը...: Տակաւին, ընթերցողը կը համակէ մասնատրաբար կեանքի հրաշք-խորհուրդովը՝ «տերեւի մը խարտեաշին մէջ տեսնելու տիեզերական զօրութեան գաղտնիքը» եւ զգալու «էակցութիւնը, որ կայ բուսական էութեան եւ մարդկային էութեան միջեւ», ընդհուպ հասնելու համար բուն իրականութեան հետ հաղորդակցութեան, արտայայտուած յատկապէս սփինոզայական իմացական սիրովն առ Աստուած (Amora Dei Intellectualis) եւ հնդկական «Դա դու ես» բանաձեւումին մէջ:

Կարոլիս Սուրենեան կը ծնէր Եղեռնէն մազապուրծ գաղթականներու խոնարհ յարկին տակ՝ Աթէնքի մէջ եւ կը մեծնար դժնդակ կեանքի մը պայմաններու ներքոյ: Իր մանկական հոգին, սակայն, ի բէտ օժտուած ըլլալով ներքին, պայծառ ժպիտով, պիտի սնէր իր կօշկակար հօր լուսապաշտ ոգիով, անոր պատմած Աստուածաշունչի պարզ պատմութիւններով ու առակներով, իր անգրագէտ մեծմօր պարզունակ հեթիաթներովն ու առածներովը, Եգնիկ աղայի խօսք ու զոյցովը անցեալի հարազատ աշխարհին մասին եւ պիտի հմայուէր հին յունական դիցաբանութեան առասպելներով...: Տակաւին հինգ կամ վեց տարեկան եռախայ՝ հմայուած զառմանքով պիտի նայէր ոսկեյորդ ծագող արեւին՝ Ակրոպոլիսի եւ Պարթենոնի վրայ, եւ պիտի զգար կեանքի, պարելու նախնական ուրախութիւնը: Ուրախութեան այս ներքին ժպիտը պայծառ ու մաքուր պիտի մնար իր մէջ, հակառակ կեանքի վերիվայրումներուն եւ հոգին ալեկոծող տառապանքներուն: Ոգին՝ անընկճելի:

Պատանեկութիւնը պիտի անցընէր Կիպրոսի մէջ, Մելգոնեան կրթական հաստատութեան գիշերօթիկ փակ միջավայրին մէջ, ուր իր հոգեմտաւոր տեսադաշտին առջեւ պիտի բացուէր գիրքերու ընդարձակ աշխարհը՝ գրականութեան, արուեստի, գիտութեան եւ փիլիսոփայութեան աշխարհը, որ պիտի կլանէր զայն հոգեկան անհուն բերկրանքով: Իսկ դասական բարձր երաժշտութեան երկերը, յատկապէս Բեթհովենի Ինն երդ սիմֆոնիան զայն հաղորդակից պիտի դարձնէին գոյութեան գեղագոյն խորհուրդին, «կրօնական» գեղագոյն զգացումին հետ: Տակաւին, մեծ «ինչու»ներու խորվը տակն ու վրայ պիտի ընէր իր գիտակցութիւնը, փոթորկէր իր հոգին, երբ իր անյագ ընթերցասիրութեան առջեւ պիտի բացուէր մասնատրաբար Շէյքսպիրի ողբերգութիւններու եւ Դոստոյեւսկիի վէպերու խորախորհուրդ աշխարհը, մանաւանդ Դոստոյեւսկիի «Կարամազով եղբայրները» հանճարեղ երկը, որ իր մէջ «հոգեկան մրրիկ» պիտի յարուցէր այնքան, որ պիտի երդուէր օր մը թարգմանել զայն ըստ արժանւոյն: Ուրի խորերէն դէպի դուրս բացուող այդ գեղարուեստական խոստովանանքը՝ ան պիտի նկատէր էական այն գիծը, որով իրարու կ՚առնչուին աստուածաշնչեան Յոբը, Նարեկացին, Շէյքսպիրը եւ Դոստոյեւսկին, եւ այնքան հարազատ իր իսկ հոգեմտաւոր խառնուածքին:

Սուրէնեանի տաղանդաւոր գրիչին տակ կը վերաշնչատրուին Մելգոնեանի ինքնուրոյն միջավայրն ու մթնոլորտը, եւ մեր աչքերուն առջեւ կը յառնէ գիշերօթիկ այդ մեծ կրթարանին, այսօր աւա՜ղ փակ, կենդանի յուշարձանը: Այդ սքանչելի «Ծաղկաբլուր»ին, ուր գիշերօթիկ կեանքին մէջ կ՚ապրէր՝ իրարու եղբայրացած տղաներու եւ աղջիկներու մեծ ընտանիքը՝ **«ուսումնական եւ մարզական կարգ ու կանոնի մթնոլորտով, ուր պատանեկացայ ու ամրացայ ֆիզիքապէս ու հոգեպէս, ունենալով զարգացող իմացականութեան ու զգացական աշխարհի բազմաթիւ ապրումներ...»**:

Իր ուսուցիչներուն մէջ Պօղոս Գէորգեանը յատկապէս տեսակ մը հոգեհայր պիտի դառնար իրեն, իր առջեւ բանալով համաշխարհային մտքի աշխարհը, սիրցնել տալով իրեն նաեւ մեր գիր ու գրականութեան, մեր մշակոյթի մթնոլորտը:

Մանաւանդ՝ պիտի սովորեցնէր **«ճիշդ ապրելու մեծագոյն արուեստը»**, որուն պէտք է ձգտէր մարդ, ինչ պայմաններու մէջ ալ իյնար կեանքի մէջ:

Սուրէնեանի համար Մելգոնեանը իր պատանեկութեան աշխարհն է, զոր ապրած է **«այդ սքանչելի Ծաղկաբլուրի ամէն մի հարազատացած էնքի, ծառի ու քարի հետ...»**:

Պատանեկութեան այդ օրերէն իր մէջ պիտի արթննար աշխարհի, բնութեան, տիեզերական գոյի հանդէպ գեղագիտական, պանթէիստական, ինչպէս նաեւ իմացական խորային հետաքրքրութիւնը, որ պիտի չմարէր երբեմ իր ամբողջ կեանքին ընթացքին:

Արդա պիտի կատարուէր սուր շրջադարձ իր կեանքէն ներս, երբ կը ներգաղթէր հայրենիք, ուր **«սպասիեան անասարուռ բռնապետութեան խաւարը մթագնեց առաջին երիտասարդութիւնը մի ամբողջ տասնամեակ»**: Այս եւ իր ժողովուրդին դէմ գործուած նախճիրն ու շարունակուող անարդարութիւնը պիտի դառնային երկու անմոռանալի չարիք, որոնք տեւաբար պիտի խռովէին զինք: Չարիքներ, որոնց վրայ պիտի բարդուէին մեր «խղճակիրթ» դարուն՝ տակաւ ահագնացող համաշխարհային տագնապները...:

Ի հեծուկս սակայն իր հոգեկան տարայանքներուն, ստեղծագործական ազատ մտքի վրայ բռնադատուած ճնշումներուն, ի հեծուկս «ախտարական» կարգալիճակէն բխող նուաստացուցիչ խտրականութեանց եւ բնակարանային մեծաւ մասամբ կիսանկոտային պայմաններուն, ան ստեղծագործական աննկուն ոգիով եւ Ոգիի թելադրանքով պիտի գրէր իր խոհա-գեղարուեստական երկերը՝ «Բնիկ ո՞րտեղացի ես», «Արետրդիներ», «Երանութեան կղզին», «Ոգու ամրոցներ»,... եւ **«ոգեշունչ երկյուղածութեամբ»** պիտի թարգմանէր «Կարամազով եղբայրները» եւ ապա՝ «Ֆոտայթներ»ի պատմութիւնը, մխիթարուելով գէթ, որ կան իր ընթերցողները: Եւ միշտ ու միշտ, իր գլխատոր յենարանը պիտի ըլլար խորային այն խաղաղութիւնը, որով տիեզերական զգացողութեամբ պիտի ընկալէր ան իրերն ու երեւոյթները կեանքի՝ բնութեան մեծ համայնապատկերին մէջ, եւ կեանքի խորհուրդն զգալու մէջ պիտի տեսնէր երջանկութեան գաղտնիքը, իր բնածին հոգեկան պայծառ խառնուածքին հետ միասեղ...:

Իսկ խորունկ ինքնաբեր խոկման պահուն ան պիտի ունենար իրականութեան ամենազգաստ, բանականօրէն վճիռ զգացողութիւնը: **«Աստուած բուն իրականութիւնն է»**, թէ՛ մեզմէ դուրս, թէ՛ մեր մէջ: **«Մեր գոյութեան բուն էութիւնն է, խորհուրդն ու իմաստը»**:

Այլ հարթութեան վրայ, ան պիտի վերուծէր **«ժողովուրդ»** հասկացութիւնը, որ աւելի ոգեկան իրականութիւն է, Ոգին՝ որուն առկայութեան շնորհիւ միայն կրնայ ապրիլ ու յարատեւել ժողովուրդ մը ի հեծուկս իր ճակատագրի խորխորատներուն: Եւ այնքան իմաստալից կերպով ան պիտի խորհրդաբեր, յայտնաբերելով մեր պատմութեան յարատեւման խորհուրդը խորին.-

Զգաստ խոհականութեամբ պիտի վերուծէր մեր յեղ-անկախացման տարիներու իրականութիւնը, որ **«արեւմտեան դեմոկրատիա»** կոչուածը՝ իր բերած **«հումանիտար»** օգնութիւններով եւ **«հոգուս»** մեզ պարտադրելով իր այլազան «ազատութիւնները» եւ մանաւանդ **«շուկայական հարաբերութիւնները»**՝ այլասերման վտանգ ունէին իրենց մէջ:

Այդ ազատութիւնները՝ մեր անկախութեան թշուառացած ու շուարած առօրեային մէջ, ընկալուեցան որպէս սանձարձակութիւն, հասնելով նոյնիսկ անիշխանականութեան: Մասը ճիշդ վերին վրայ դնելով, Սուրէնեան պիտի խորհրդաբեր. **«Սա էլ ավելացավ Ոգու շաղախած մեր ժայռացման գլխին, որ քանդվեց, ու ավազացնի դարձյալ, փոշիացնի նույնիսկ, ...: Եւ այդպես հասնի 21-րդ դարի այս առաջին տարիներին: ...Ամենամեծ վտանգը հիասթափության, հուսահատության կամ փոխոգության դրդմամբ օտարացումն է հայրենի հողից ու սեփական ժողովրդից: ... Էականը ոգեկանն է: Ոգեկանի խամրումն է պատճառը օտարացման՝ լինի արտագաղթելով, լինի նույնիսկ մնալով հայրենիքում, բայց նիհիլիստական վերաբերվելով ազգային բուն արժեքներին...»**:

Այստեղեր, Սուրէնեան կը հաստատէ, որ հակառակ ժամանակակից նենգադաշտիր **«ազատություններով»** շրջուած հարուածներուն, Ոգին կը շարունակէ այժմ աւելի դժուար պայքարը հնագոյն ժողովուրդի մեր երկար-երկար պատմութեան ընթացքին մէջ:

Այնքան ուսանելի բան կայ հեղինակի պատմա-յայտնատեսական զգացողութենէն բխած մտորումներուն մէջ, որ կարելի չէ գէթ քանի մը տողով չանդրադառնալ անոնց: Արդարեւ, անցեալ 15 տարիները պիտի պարզէին, որ սովետական ամբողջատիրութիւնը պիտի փոխարինուէր մի այլ, այսպէս կոչուած «դեմոկրատիայով» գունազարդուած ամբողջատիրութեամբ՝ համահարթեցնող համաշխարհայնացման ձգտող եւ խորին մէջ շահադիտական ռազմամոլ քաղաքակրթութեանց բախումով, զանգուածային արիւնաբու ահաբեկչութիւններով:

Անաչառ ինքնաքննադատութեամբ, մեծ գրողը նաեւ մատը կը դնէ մեր իսկ սեփական թերութիւններուն վրայ, որոնք կը գոյատեւեն դեռեւս խորենացիի օրերէն: **«Լինելով հերոսապաշտ, բայց նաեւ անհատապաշտ, տեղական զգացումներով հայրենասեր, բայց նաեւ կողմնակի միտումներով օտարասեր, միշտ էլ գանգատվել ենք, թե մեր ազգին պակասում է քաղաքական հասունությունը, դիվանագիտական ողջամիտ գլուխներ չունենք, իսկ այդպիսի գլուխները կա՛մ անտեսվել են, կա՛մ նույնիսկ հալածվել, հենց խորենացին, օրինակ, ոմանք էլ գնացել ծառայել են օտարին, անգամ թշնամուն: Պարծենալով մեր ազատասիրությամբ, ավելի գործել ենք խոր մտածելուց առաջ, քան խոր մտածել՝ գործելուց առաջ...»**:

Իր ծննդեան 80-ամեակը առիթ կը դառնայ կարծէք ընդհանուր արժեւորումը կատարելու իր կեանքին եւ ապրած տարիներուն, մտաբերելով ու վերլուծելով մանկութեան օրերուն՝ իր անուանակոչութեան տօնին իրեն ուղղուած յայտնի մաղթանքը.- **«Անունովդ ապրիս, երկար ապրիս, էն ապրիս»** - պարզ ու սեղմ խօսքեր, որոնք ամբողջ կենսափիլիսոփայութիւն մը կը խտացնեն իրենց մէջ: Արդարեւ, տաղանդաւոր գրողը եղեր է հաւատարիմ իր անունին, հաղորդակից դառնալով հանդերձ հարիւրաւոր հեղինակներու երկերուն՝ հնագոյն դարերէն մինչեւ այսօր, որոնք հարազատ դարձեր են իր մարդկային էութեանը, իր անձին պէս: Սակայն, իր անունովն է ապրեր այդ բոլորի հետ եւ երբեմ չէ կաղապարուեր ոչ մի բանով...: Ապրեր է երկար եւ տեսեր է շատ ու շատ բան. 20-րդ դարը՝ համաշխարհային կոչուող պատերազմներով եւ արիւնով ողողուած, իսկ 21-րդ դարը՝ այսօր, որ հրաշալի գիտահնարներով նոր արհաւիրք սկսած է դառնալ ահաբեկչական անկանխատեսելի գործողութիւններով: Տակաւ կը պակսի մարդկային կեանքէն այն հոգեկան ուրախութիւնը զոր Բեթհովենը երգեց Շիլլերի հետ իր գլուխգործոց Ինն երդ սիմֆոնիայի մէջ, երգեց Մեծարենցը իր «Արդի մարդուն Հայր մեր»՝ անանձնական ուրախութիւն հայցող աղօթքին մէջ: Եւ **«Իրերի կուսակման տակ, չորանում է բուն իսկ աղբյուրը ճշմարիտ ուրախության՝ ոգին»**: Ապրեր է էն ներքուստ, իր ներքին ժպիտով լուսատր ի հեծուկս ընթացիկ կեանքի բոլոր դառնութիւններուն, որոնց նայեր է նոյնիսկ **«բանական ժպտուն մի հանդուրժամտությամբ»** եւ միշտ կասարեր է իր պարտականութիւնները: Եղեր է սակայն անհաշտ, որպէս հայ եւ որպէս մարդ էակ, իր ժողովուրդի եւ գեղասանի գլխուն գործուած մեծագոյն ոճիրին նկատմամբ եւ այդ բացայայտ ցեղասպանութեան յանցագործ ժխտումին ու նենգափոխումին, որ դեռ կը շարունակուի լկտիօրէն յաչս աշխարհին: Կրցեր է, մասնատրաբար, զրկանքներու գնով՝ տուրէ չտալ մտքի, հոգիի վրայ բռնացող ճնշումներուն: Եւ եղեր է էն ոգեպէս, կեանքի հրաշք-խորհուրդի ապրումով, գիտնալով հանդերձ կեանքի եւ գոյութեան մութ կողմերը...:

Միաւասիկ հոգեկան կենսագրութիւնը եւ խոստովանանքը մի մարդու, Հայ մարդու եւ նաեւ Համամարդու, յանձին մեծ գրող ու թարգմանիչ Կարոլիս Սուրենեանի, որ խորահայեաց լուսարձակով կը պեղէ մարդ էակի, տիեզերքի եւ բնութեան գոյիմաստն ու խորհուրդը, հայ մարդու եւ հայ ժողովուրդի պատմական ճակատագրի խնդիրը՝ գեղարուեստական ապրումներով եւ խոհավերլուծական թափանցումներով, միշտ ունկնդիր իր ներքին ճշմարտութեան ձայնին, Ոգիի ձայնին, խորապէս զգալով միաժամանակ կեանքի հրաշք-խորհուրդը, որ ներքին հոգեկան երջանկութիւն է, անանձնական ուրախութիւն եւ կենսարբեցում, ի հեծուկս բոլոր դառնութիւններուն, զրկանքներուն եւ տառապանքներուն: Կենսագրութիւն՝ որ կը դառնայ մարդկային անպարտելի Ոգիի յաղթանակը, անհատական եւ ազգային մակարդակներու վրայ: Բուն մարդուն, բուն ժողովուրդին, բուն ուրախութեան եւ բուն իրականութեան լուսայայտումը՝ առօրեայ կեանքի մակերեսին տակ թաքնուած:

Երեւոյթ է այս մատեանը մեր գրականութեան մէջ: Վիթխարի երեւոյթ: Մարդկային եւ ազգային խորունկ ինքնագիտակցութիւն խթանող, միտք ու հոգի հարստացնող եւ ազնուացնող կոթողային երկ: Տակաւին, բնութեան, կեանքին ու աշխարհին հանդէպ լիանուէր սէր ներշնչող, ուրիշ ճշմարիտ ուրախութիւն պարգեւող երկ, զոր պէտք է ընթերցել ու վերընթերցել՝ հաղորդուելու համար անոր տողերուն եւ բառերուն մէջ թաքնուած Իմաստին ու Ոգիին հետ...:

Իր կեանքի վաղ արշալոյսին, Արեւածագի խորհուրդին առջեւ, Կարոլիս Սուրենեան նախնական ուրախութեան եւ բնութեան խորարդումը կ՚ունենար, ինքզինք նոյնացած զգալով աշխարհին հետ, ինքնաշխարհի մէջ, աշխարհը՝ իր մէջ...: Իսկ հիմա Մայրամուտի խորհուրդն է, իրիկուան լոյսը ծիրանի, որ զինք կը համակէ թախծեալ ուրախութեան ժպիտով...: Բայց **«վաղը կրկին ծագելու է արեւը»**:

Ոսկելոյս Արեւածագն ու ծիրանավառ Մայրամուտը...: Ասոնց միջեւ ընթացող կեանք մը, որ կը ծիածանուին **«ձեւերն ու երանգները»** գոյութեանց ու տարրերուն...: Կեանք մը՝ խորարդուած ճանաչողութեամբ, բնութեան եւ աշխարհի խորհուրդի զգացողութեամբ ու արբեցութեամբ...: Կեանք՝ ապրուած ի խորոց սրտի ու մտքի, որուն մասին է այս կոթողային մատեանը: Անոր ընթերցումը կը դառնայ հայեցողական ու գեղարուեստական ճշմարիտ խրախճանք մը հոգեմտաւոր, որուն ընծայումին համար՝ սրտագին ու երախտագին կը շնորհաւորենք տաղանդաւոր հեղինակը, սիրելի Կարոլիս Սուրենեանը, մաղթելով ի սրտէ, որ երկար ապրի, էն ապրի, դեռ նոր ծագելիք արշալոյսներու հեռանկարով...:

Հոդվածագիրը Կիպրոսում լույս տեսնող «Ազատ ձայն» թերթի գլխավոր խմբագիրն է:

ՎԵՐԱՐԺԵԼՈՐՈՒՄ

Ազնվության ձայնը

Այն, ինչ այսօր էլ կատարվում է նախկին ԽՍՀՄ ողջ տարածքում, վերաբերում է նաեւ մեզ: Այն մարդիկ, ովքեր սիրով էին վերաբերվում այդ տարածքում ապրող մարդկանց ու ժողովուրդներին եւ ովքեր իրենց կյանքը տգնապով ու ողբերգությամբ ապրեցին այդ տարածքի մարդկային վսեմ գեղեցկության եւ բարձր բարոյականության, հոգեւոր հարստության եւ հոգեկան մաքրության համար, հարկ է, որ եթե ոչ թանկ, ապա գոնե ճանաչելի եւ գնահատելի լինեն նաեւ մեր կողմից:

Այդպիսի մի բացառիկ անձնավորություն էր ոռա նշանավոր գիտնական, սոցիոլոգ, փիլիսոփա, գրող եւ մտածող Ալեքսանդր Զինովեւը (1922-2006), զարմանալի հարուստ ու գեղեցիկ կյանքի եւ դառն ու դժվար ճակատագրի տեր մի մարդ ու բարձր մտավորական: Մի քանի տասնամյակ առաջ նրան վտարեցին ԽՍՀՄ-ից, Արեւմուտքում՝ Եվրոպայում եւ Ամերիկայում նա հասավ մեծ ճանաչման, փառքի եւ համբավի, բայց երբեք չեղավ Արեւմուտքի առջեւ ծնրադիր աղոթող եւ արեւմտյան կյանքի ու բարքերի փառաբանող: 1999-ին նա, խորհրդային սոցիալական համակարգի հայտնի հետազոտող ու նրա սուր քննադատներից մեկը, վերադարձավ Ռուսաստան: Ավաղ, նրա ձայնը, ինչպես որ Ալեքսանդր Սոլժենիցինի ձայնը, այս «նոր» Ռուսաստանում եղավ ու մնաց «ձայն բարբառոյ յանապատի»... Երկրի համատարած ասպատակման, գիշատիչների ու զավթիչների ժամանակներն էին, եւ ոչ թե Սոլժենիցինի ու Զինովեւի... Այնուամենայնիվ, Զինովեւն այն մարդկանցից մեկն է, որոնց մասին ապագայում զարմանքով պիտի ասեն՝ լավ, ինչպե՞ս է, որ ոչ ոք ունկնդիր չի եղել այդ մարդկանց ձայնին, մի՞թե լիովին ոչնչացել էր գիտական ու ստեղծագործ մտավորականությունը, տեխնոկրատիան, ազգային նկարագրի եւ խառնվածքի մարդիկ...»: Պատասխանը կհասկացվի ինքնաբերաբար...

Թարգմանաբար ընթերցողին եմ ներկայացնում 2001 թվականին «Լիտերատուրնայա գազետա»-ում տպագրված Ալեքսանդր Զինովեւի ուշագրավ հարցազրույցը:

Յուրի ԽԱՆՅԱՏԻՆ

Հրատարակված հիշողությունները Ալեքսանդր Ալեքսանդրովիչ Զինովեւը անվանել էր «Ես ինքս անկախ ոչ-տություն եմ»: Այդպիսի բան կարող էր հայտարարել ուժեղ անձնավորությունը, որն ինքն է նվաճել իր ազատությունը: Զինովեւը պահպանեց իր ազատությունը իշխանություն ունեցողներից, ամբողջատիրական գաղափարախոսության համահարթող ազդեցությունից, «կրքյալ ամբոխի» տիրական կարծիքներից... Նրան ինքն իրենից հանեց «խորհրդայնությունը», արեւմտականությունից նա ինքը փախավ, ինչպես թակարդից են փախչում: Նա տրամաբան էր, սոցիոլոգ, գրող, աղեսագետ: Բայց ամենից առաջ նա մտածող էր, հատկապես փիլիսոփայության այն տեսակը դավանող, որի մասին շատ ճշգրիտ է ասել Օրտեգա-ի-Գասետը. «Փիլիսոփայությունը երբեք չի կարող համընթաց քայլել ինքնավստահ ու ինքնահավան բոլոշության հետ: Փիլիսոփայությունը տեսական վսեմ հերոսության հոմանիշն է»:

- Ալեքսանդր Ալեքսանդրովիչ, ինչպե՞ս գրող դարձաք:

- Ես առանձնահատուկ տեսակի գրող եմ: Ամենից առաջ ես հետազոտող եմ, սոցիոլոգ: Նախկինում իմ մասնագիտության նյութն ու առարկան եղել են տրամաբանությունը եւ մաթեմատիկան: Զուգահեռաբար զբաղվել եմ սոցիոլոգիայով, բայց առանձնահատուկ սոցիոլոգիայով,- ես այն անվանում եմ «տրամաբանական»,- ոչ թե այն սոցիոլոգիայով, որ հանրահայտնի է: Աշխարհում հիմա մի քանի հարյուր հազար սոցիոլոգ կա, բայց ես նրանց կարգին չեմ պատկանում: Ես ստեղծել եմ իմ սեփական տեսությունը:

Ես եղել եմ հոգեբանության, տրամաբանության եւ մաթեմատիկայի ուսուցիչ դպրոցում, տասնյակ տարիներ եղել եմ պրոֆեսոր տարբեր ուսումնական հաստատություններում: Գրող եմ դարձել մի շարք հանգամանքների բերումով:

Այն բանից հետո, երբ իմ գրքերը սկսեցին լույս տեսնել եւ որոշակի տպավորություն թողեցին, ինձ հարցնում էին՝ որտեղի՞ց ես հայտնվեցի գրականության մեջ եւ ի՞նչ վերաբերմունք ունեմ գրական ավանդույթների հանդեպ: Ես պատասխանում էի. եկել եմ ոչ գրականությունից, ավանդների հանդեպ վերաբերմունք չունեմ: Ես եկել եմ սովետական գրական մտավորականային բանահյուսությունից:

Օրինակ, պատերազմից առաջ ես մի պոեմ էի գրել՝ «Պոեմ դավաճանության մասին» (հետո դա ես հրատարակեցի իմ «Մեր պատանեկության թռիչքը» գրքում, որ պատրաստել էի Սալինի մահվան 30-ամյակի առթիվ): Եթե ժամանակին ընկներ համապատասխան մարմինների ձեռքը, ինձ հաստատ բանտ կնստեցնեին:

Ինձ առանց դրա էլ բանտարկեցին, բայց այլ բանի համար՝ իբրեւ հակասալինականի, 1939-ին: 1945-ին ես մի բժշկաձառ գրեցի Հաղթանակի համար Սալինի ասած բժշկաձառ-կենացի առթիվ,- լավ է, որ գրել էի տպագիր տառերով,- 2-րդ օդային բանակի ամբողջ հատուկ բաժինը մի ամիս փնտրում էր հեղինակին: Ի բարեբախտություն ինձ, չկարողացավ գտնել:

Իմ նախընտրելիը ոչ թե առանձին կենցաղային մանրամասների քննադատությունն էր, այլ սոցիալական ողջ համակարգի եւ գաղափարախոսության: Ես մասնագիտացել էի մարքսիզմի, կոմունիզմի, սովետական համակարգի շուրջ ստեղծված եւ հորինված անեկդոտների, կատակների, ամեն տեսակ երգիծանքի, ծաղրի եւ ֆելիետոնների ասպարեզում:

Գրող դարձել եմ գրեթե պատահականորեն: Աշխատում էի իբրեւ տրամաբան, իմ հետազոտություններում հասել էի մեծ հաջողությունների, համաշխարհային ճանաչում ունեի: Գրող լինելու մասին մտքովս անգամ չէր անցնում: Բայց պատահեց այնպես, որ ես իմ մասնագիտական գործունեության մեջ հայտնվեցի մեկուսացված վիճակում, զրկվեցի իմ ուսանողներից եւ ասպիրանտներից: Եվ ահա պարզվեց, որ ազատ ժամանակ ունեմ, եւ ես կես տարում գրեցի «Անդնդախոր բարձունքները»: Իմ ծանոթներից մեկը, որին կարդացի գրքից մի հատված, անմիջապես մատնել էր ՊԱԿ-ին, եւ ես ստիպված եղա գիրքը շատ արագ ավարտել ՊԱԿ-ի հսկողության ներքո, այլապես երբեք չէի կարող ավարտել:

Հետո ինձ շրջեցին Արեւմուտք, որտեղ ըստ մասնագիտության աշխատելը գործնականում անհնարին էր, ստիպված եղա իմ օրվա հացը վաստակել գրական աշխատանքով: Քսան գործ գրեցի: Դրանք թարգմանվեցին 25 լեզվով, շատերը բեստսելլեր եղան՝ «Անդնդախոր բարձունքները», «Պայծառ ապագան», «Հոմո սովետիկուսը», «Գնում եմ դեպի Գողգոթա», «Կործանառուցումը» եւ մյուսները:

Երկու տարի առաջ տարագրությունից վերադարձա Ռուսաստան եւ գալուցս առաջ ավարտեցի վերջին գիրքս, որ դեռեւս հրատարակված չէ: Եվ ասացի ինքս ինձ՝ վերջ, վերջ գրականությանն ու գրական գործին: Հիմա ես հիմնականում զբաղվում եմ սոցիոլոգիայով եւ տրամաբանությամբ:

ԱԼԵՔՍԱՆԴՐ ԶԻՆՈՎԵՎ

ԻՄՊԵԼՈՎ ԱՆԴՆԴԱԽՈՐ ԲԱՐՁՈՒՆՔՆԵՐԻՑ

- Գերհասարակության մեջ ոչ մի վատ բան չկա, ինչպես որ ոչ մի լավ բան էլ չկա: Դա սոցիալական կազմակերպության ավելի բարձր աստիճան է, քան այն, որի պայմաններում ապրում էին մարդիկ անցյալ դարում: Այդ մակարդակը ընդգրկում է բոլոր ոլորտները: Մենք մի հարյուրամյակ ապրել ենք պետությամբ: Բայց ահա հայտնվում է պետության վրա գերպետական իշխանության մակարդակը: Տնտեսության մեջ նոր մակարդակը գերտնտեսական է:

Առաջացել է այն, ինչ ես անվանում եմ «փոքրային ամբողջատիրություն»՝ համաշխարհային նոր ֆինանսական համակարգ: Դա արդեն ավելին է, քան տնտեսությունը: Այն ընդունակ է հրամայորեն ազդել պետությունների քաղաքականության վրա: Գերհասարակության մեջ նշանակալից չափով փոխվում են սոցիալական համակարգերը: Նախկին ազգային ընտրյալ խավերի վրա բարձրանում են գերընտրյալ-խավային նոր կազմավորումներ, այսինքն՝ գերընտրյալ խավ:

Արեւմտյան աշխարհը միասնականացել է իբրեւ մի ամբողջություն, եւ նրա ներսում գոյացել է համաշխարհային ընտրյալ խավ: Նրա մեջ մտնում են մեծ կարողություններ ունեցողները, ֆինանսական հզոր կազմակերպությունների (օրինակ, Համաշխարհային բանկ, Արժույթի միջազգային հիմնադրամ), տնտեսական ու տեղեկատվական վիքիպեդիաների կայքերի ղեկավարները: Կարծում եմ՝ գերընտրյալների շարքը կարելի է դասել միլիոնավոր մարդկանց: Նրանք միավորված են ճյուղավորված կառույցների մեջ, որոնք դեռեւս վատ են ուսումնասիրված: Փաստորեն դրանց ուսումնասիրման վրա արգելք է դրված, քանի որ այդ կառույցների ներսում բոլորովին այլ կարգի հարաբերություններ են հաստատված, քան սովորական մակարդակի ընտրյալ խավերի ներսում:

Գերվերնախավային կառույցները զավթել են իշխանությունը գաղափարախոսական, մշակույթի բնագավառում, զավթել են կինոն, հեռուստատեսությունը, գրականությունը... Հետխորհրդային Ռուսաստանի վերնախավի ներկայացուցիչները ստիճանաբար ներհյուսվում են համաշխարհային գերվերնախավին:

Գերվերնախավի գլխավոր նպատակը աշխարհի վրա իշխանությունը պահպանելն է: Դրա համար մարդկանց հիմարացնելու, պարզունակացնելու վիքիպեդիայի ընթացքի է գնում: Բարեբնորհ կարգախոսներ են հռչակում, հրաշալի ճառեր են արտասանում, բարի գրքեր են գրում, ֆիլմեր են նկարահանում, խոսել որ՝ բոլորն էլ լավ են սովորել... Բայց այդ գերվերնախավը մարդկության համար ինչ է անում գործնականորեն: Ինչին է ծառայում: Նա միայն մշակում է մարդկանց զանգվածի վրա իշխելու մեթոդներ: Այո, պայքար է գնում եւ գերվերնախավի ներսում էլ, բայց այն դադարում է, երբ գերվերնախավի շահերը ընդհանուր առումով հայտնվում են վտանգի տակ:

- Ռուսական վերնախավը ուրիշ ազգերի վերնախավից ավելի թույլը դուրս եկավ, եւ առաջին հերթին տեղի ունեցածը հասկանալու առումով: Նա չհասկացավ աշխարհում տեղի ունեցող ընթացքների էությունը: Մեր վերնախավը ապրում էր աշխարհի մասին հնացած օրենքներով եւ վատ պատրաստված դուրս եկավ ժամանակների պահանջների դիմաց: Արդյունքը այն եղավ, որ նա պարտվեց «սառը պատերազմում» եւ հիմա էլ պարտվում է այլ պատերազմներում, ասենք, ֆինանսական: Չի երեւում, թե մեր վերնախավը համարժեքորեն է իմաստավորում տեղի ունեցածը: Իր շահերի պաշտպանության համար երկիրը չի դիմադրում: Այդպիսի խնդիրներ, երեւում է, նույնիսկ չեն էլ դրվում: Եվ լավագույն ուղեղները չեն էլ հավաքվում-համախմբվում, ինչպես անում են դա ԱՄՆ-ի «ուղեղների ֆաբրիկաներում», ասենք «ՌԷՆԴ քորփորեյշընի» կամ «Հերիթիջ ֆաունդեյշընի» կարգի...

- Դուք շատ ճիշտ բնութագրեցիք վիճակը: Ես ուրախ եմ, որ կան մարդիկ, որ հասկանում են դա: Մեր ազգային վերնախավը երկրում կատարված իրադարձությունների ընթացքում իրեն դրսեւորեց ոչ ամենալավ ձեւով: Այն գործառումները, որ նա պարտավոր էր կատարել երկրի ու ժողովրդի շահերից ելնելով, վերնախավը չկատարեց: Արեւմտյան գաղափարախոսության եւ քարոզչության հզորության դիմաց նա պարզապես անճնատոր եղավ:

Մեր վերնախավը դարձավ Արեւմուտքի «հինգերորդ շարասյունը»: Եվ, ըստ էության, դավաճանական դեր խաղաց: Մեր վերնախավի դավաճանությունը երկրում կատարված աղետի վերջին գործոնը եղավ: Չի երեւում, թե ռուսական վերնախավը գիտակցում է, թե ինչ դեր է խաղացել ինքը: Նա չի էլ գիտակցել նաեւ այն դրությունը, որի մեջ հայտնվել է Ռուսաստանը: Չեն երեւում վերնախավի գործողություններն ու գործունեությունը ի շահ ռուսական ժողովրդի: Ավա՜ղ, բայց այսպես է:

Այնքան ժամանակ, քանի դեռ մեր ազգային վերնախավը չի հասկանա, թե մենք ինչ ունենք եւ ինչ կորցրինք, թե ինչո՞ւ տեղի ունեցավ աղետը եւ ո՞ւմ մեղքով, եւ քանի դեռ երկրում չեն հասունացել ուժեր՝ ընդունակ դիմակայելու քայքայիչ ու ավերիչ ընթացքներին, խոսք անգամ չի կարող լինել Ռուսաստանի ու ռուս ժողովրդի որեւէ վերածնունդի մասին: Մեր ազգային վերնախավի իրական դեմքն ու վիճակը Ռուսաստանի վերածնության հիմնական գործոնն են:

- Երեւի, կարելի է հույս դնել միայն նոր սերունդների՞ վրա:

- Միայն եւ միայն նոր սերունդների: Բայց Ռուսաստանում կհայտնվի՞ ազգային նոր վերնախավ, որ ընդունակ կլինի վերածնելու երկիրը...

Շարունակելի

ՎԱՂԴԻՄԻՐ ՊՈԼՅԱՐՈՎԱ

* Հասկանալի է, որ Ալեքսանդր Չինովեւը նկատի ունի եվրոպական եւ Մոսկվայի համալսարանների պրոֆեսորների աշխատավարձը (Ծ. Թ.):

ԱԶԳ-ՆԵՐԴԻՐ

Հրաժեշտ խոսքեր

ԼՈՒՅՍԻ ՀՆՉՅՈՒՆՆԵՐ. ԿԱՌԼՀԱՅՆՑ ՇՏՈՔՀԱՈՒԶԵՆ

ԱՐԹՈՒՐ ԱՎԱՆԵՍՈՎ

Դեկտեմբերի 5-ին Քյոլնի մերձակա գյուղաղաքներից մեկում՝ Կյուրտենում վախճանվել է արդի խոշորագույն երաժիշտ, արվեստագետ եւ մտավորական՝ կոմպոզիտոր Կառլհայնց Շտոքհաուզենը: Կոմպոզիտորի մահը հատկապես նշանակալից ու ցավալի է, քանի որ նա կարծես եզրափակում է արվեստի զարգացման մի ամբողջ ժամանակաշրջանի՝ երաժշտական ավանգարդի պատմությունը:

«Ես բոլոր վերացական կոմպոզիտորներից ամենավերացականն էի: Այժմ, երբ ես հանգեցի գիտակցության նոր իրականությանը եւ խզեցի կապս անցյալի, հիշողության, նախաձեւավորված աշխարհի հետ, ծանոթ երեւույթները դարձել են շատ խորհրդավոր»: Կոմպոզիտորի այս խոսքերը չափազանց հատկանշական են նրա կյանքի եւ ստեղծագործության համար: Նրա ստեղծագործական դիմանկարն անհնար է արտահայտել մի քանի ընդհանուր վրձնահարվածով՝ այնքան բազմազան ու բովանդակալից էր նրա անցած ուղին: Սակայն նախեւառաջ Շտոքհաուզենը XX դարի այն խոշորագույն մտածողներից էր, ովքեր անմար հետք թողեցին արվեստում՝ լինելով վերջինիս բարեփոխողն ու շարժիչ ուժը:

Գերզգայուն լինելով ամեն նորի նկատմամբ՝ Շտոքհաուզենը որպես կոմպոզիտոր աշխատել է բազմաբնույթ ոճերում, կոմպոզիցիայի արմատապես տարբեր տեխնիկաներով: Նրա պատմական վաստակն է գաղափարների հսկայական կուտակումը, նրանց անհատական վերամշակումը, եւ այնուհետեւ՝ հիրավի տիեզերական մասշտաբներով մատուցումը:

Կոմպոզիտորը ծնվել է 1928-ին գերմանական Ալտենբերգ քաղաքում: Երաժշտական կրթությունը ստացել է Քյոլնի բարձրագույն երաժշտական դպրոցում՝ միաժամանակ բանասիրություն եւ փիլիսոփայություն ուսումնասիրելով նույն քաղաքի համալսարանում, այնուհետեւ որոշ ժամանակ՝ Փարիզի կոնսերվատորիայում: Սակայն իր հիմնական երաժշտական «մկրտությունը» Շտոքհաուզենն անցել է Դարմշտադտի հայտնի ամառային ակադեմիայում, որի հիմնական ոգեշնչողն է դարձել տարիներ անց: Դարմշտադտի ամառային դասընթացները, որոնք գործում են առ այսօր, բացառիկ հնարավորություն են ընձեռում երիտասարդ կոմպոզիտորներին ու նոր երաժշտության կատարողներին կողք կողքի աշխատելու, ծնունդ տալու նոր ստեղծագործություններին, մասնակցելու աշխարհահռչակ երաժիշտների դասախոսություններին ու վարպետության դասերին: Այստեղ է, որ 1950-ականների սկզբին երիտասարդ Շտոքհաուզենը ծանոթանում է այդ ժամանակվա ամենաառաջատար կոմպոզիտորների՝ Առնոլդ Շյոնբերգի, Անտոն ֆոն Վեբերնի, Օլիվյե Մեսիանի երաժշտությանը: Այդ ծանոթությունը բախտորոշ դեր է ունեցել նրա հետագա ողջ գործունեության վրա:

Շտոքհաուզենը, ստեղծելով երաժշտական ուրույն մի լեզու, մշտապես գտնվելով երաժշտության գրեթե բոլոր նորամուծությունների բովում, առաջիններից էր, ում ստեղծագործական ուղին հատկանշվեց եվրոպական երաժշտության բնականոն զարգացման տրամաբանության խախտմամբ՝ հրաժարվելով ստեղծագործությունը որպես կոմպոզիտորի «ես»-ի արգասիք դիտարկելուց, վերանձնական բնույթ հաղորդելով իր երկերին եւ խզելով հեղինակ-կատարող-ունկնդիր անսասան թվացող ամուր շղթան: Նրա անցած ճանապարհը բարդ էր, սակայն լի զանազան հայտնագործություններով ու հանկարծակի պայթառացումներով: Ինչպես նշում է Շտոքհաուզենի դարմշտադտյան երթմնի դասախոսներից մեկը՝ ֆրանսիացի երաժշտագետ Անտուան Գոլեան, «նա հետպատերազմյան ավանգարդի ամենացայտուն, ամենավիրտուոզ ներկայացուցիչն է: Նրան հաջողվում էր այն, ինչ չէր հաջողվում Բուլեզին՝ ամենավճռական պահին միշտ գտնել ելքը այն թունելից, որի մեջ նա սուզվում էր մտադրաբար, սակայն երեւացող համոզվածությամբ»:

Թերեւ կարելի է ասել, որ Շտոքհաուզենի ստեղծագործական կերպարը չափազանց ռոմանտիկ էր անցյալ դարի համար, ուստի նրա հսկայական ձեռքբերումները մասամբ շարունակվում են դիտարկվել որպես կոմպոզիտորի ստեղծած անհասանելի Ուտոպիայի պատահաբար հաջողված պատառիկներ, մասամբ էլ, փոխակերպվելով, ծնունդ են տվել երաժշտական պոստմոդեռնին՝ ոճերի, լեզուների եւ ժամանակաշրջանների Բաբելոնյան աշտարակին, որտեղ յուրաքանչյուր ստեղծագործող անձ անխուսափելիորեն գիտակցում է ինքն իրեն որպես մի ատոմ՝ գաղափարների վայրագ հորձանուտում: «Իմ գործերից որեւիցե մեկն ընդունելու համար ունկնդրին նույնքան ժամանակ է պետք, որքան անհրաժեշտ էր ինձ՝ այդ երաժշտությունը ստեղծելու համար», իրավացիորեն խոստովանում էր կոմպոզիտորը:

Շտոքհաուզենի ստեղծագործական ճանապարհը սկսվել է այսպես կոչված հետվեբեռնյան դպրոցին հատուկ ոճի խիստ կանոնակարգվածությունից, որը երաժշտության պատմության մեջ մտավ «տոտալ սերիալիզմ» անվանմամբ: Այդ ոճի համար հատուկ էր երաժշտության այնպիսի կազմակերպումը, երբ կոմպոզիտորը մասամբ կորցնում է իր խմահաճույքով եւ լոկ զգայական ներընդունմամբ երաժշտությունը կառավարելու իրավունքը՝ հետեւելով մանրամասնորեն մշակված համակարգին: Այսպես ծնունդ առան նրա առաջին, այժմ արդեն «դասական» դարձած ստեղծագործությունները՝ «Կոնտրապունկտներ» (10 գործիքի համար, 1953), «Խաչաձեւ խաղ» (հոբոյի, բաս-կլարնետի, հարվածայիններ եւ դաշնամուրի համար, 1951) եւ մի շարք ուրիշներ: Սակայն ոճի սահմանները միշտ նեղ էին չափազանց ինքնաշխիժ այդ արվեստագետի համար: Տարիներ անց նա խոստովանեց, որ երաժշտության արտահայտչականությունն այդ երկերում ստեղծվում էր համակարգից «դուրս ընկնող», «սխալ» նոտաների հաշվին: Էլ ավելի ուշ նա փորձում էր նոր կյանք տալ այդ գործերին՝ վերաթելով դրանք լուսային եւ միկրոֆոնային հնարներով ողողված բեմական մի ծիսակատարության: Եվ երաժշտությունը պատրաստակամորեն արձագանքում էր կոմպոզիտորի այդ ձգտումին. հավանաբար, երաժշտությունը որպես միստիկական ակտ վերարտելու պահանջն ի սկզբանե հատուկ էր Շտոքհաուզենին:

Նոր երաժշտական ձեւի ստեղծման հնարավորությունը գտնված էր 1956-ին, երբ երեւան է եկել դաշնամուրային հայտնի «Klavierstück XI»-ը, որը հիշատակվում է ժամանակակից երաժշտության պատմության գրեթե բոլոր դասագրքերում եւ հանրագիտարաններում: Շտոքհաուզենի գաղափարը բավականին պարզ էր: Ցանկանալով այլեւս պահպանել երաժշտական ձեւի կառուցման մենաշնորհը՝ կոմպոզիտորը փոխանցում է այն... կատարողին: Ստեղծագործությունը բաղկացած է տարբեր երկարության հատվածներից, որոնք կարելի է կատարել ցանկացած հերթականությամբ, ամեն անգամ բացահայտելով նոր տրամաբանություն: Այդ պատճառով էլ երթմնը ընդունված է լինում այդ պիեսը կատարել միեւնույն համերգում երկու անգամ՝ հատվածների տարբեր դասավորությամբ: «Klavierstück XI»-ը հրատարակվում է մոմած թղթի հսկայական մի թերթին դասավորված կոչուն թիթեղիկների վրա գրի առնված հատվածների տեսքով: Նույն ձեւով գրված է նաեւ «Zyklus»-ը՝ հարվածայիններ համար (1959):

1950-ականները հատկանշվեցին երիտասարդ Շտոքհաուզենի եւս մեկ ապշեցուցիչ բացահայտմամբ, որին այնուհետեւ վիճակված էր լինելու Արիադնեի թելի պես անցնել նրա ողջ ստեղծագործության միջով: Այն տարիներին, երբ ԽՍՀՄ-ում դեռ նոր էր սկսում ռեաբիլիտացվել այդչափ դասականորեն պարզ ու մատչելի Շոստակովիչի, Պրոկոֆյեւի, Խաչատրյանի արվեստը, Շտոքհաուզենը աշխատում էր իր «Պատանիների երգը» ստեղծագործության վրա (1956), որը հետագայում անվանվելու էր էլեկտրոնային երաժշտության առաջին ցայտուն նմուշ՝ սկիզբ տալով ժամանակակից երաժշտարվեստի չափազանց կարեւոր այդ ճյուղին: Էլեկտրոնային՝ ձայներիզի համար երաժշտությունը նրա հայտնագործությունը չէր: Դեռ 40-ական թվականներին ֆրանսիացի կոմպոզիտորներ Պիեռ Շեֆֆերը եւ Պիեռ Անրին աշխատում էին ձայնագրված կենցաղային աղմուկների մշակման վրա, իսկ այն ստուդիան, որտեղ հետագայում հիմնավորվելու էր Շտոքհաուզենը, հիմնել է կոմպոզիտոր Հերբերթ Այմերսը: Սակայն նա առաջինն էր, ում հաջողվեց ստեղծել գեղարվեստական այնպիսի բարձրարժեք կոթող, որը գրավել է ամբողջ երաժշտական աշխարհի



սեւեռուն ուշադրությունը եւ հետաքրքրություն շարժել էլեկտրոնային երաժշտության նկատմամբ:

Այդ հետաքրքրությունը շատ արագ դուրս է եկել նեղ մասնագիտական շրջանակներից. Շտոքհաուզենը, թերեւս, միակն էր ավանգարդի դպրոցի փայլուն ներկայացուցիչներից, ում արվեստը ծանոթ եւ ընդունելի եղավ ակադեմիական շրջանակներից անդին աշխատող երաժիշտների համար: Ջոն Լենոնը հիացած էր «Պատանիների երգով»՝ ջերմ նամակ հղելով կոմպոզիտորին: Շատ շուտով կոմպոզիտորի դեմքը հայտնվում է «The Beatles»-ի հայտնի «Sgt. Peppers Lonely Hearts Club» ձայնաթնակի կազմին: Իսկ տասնամյակներ անց համբուրգյան մի ռոքխումբ ընտրում է իր համար «Stockheinz Karlhausen» անվանումը:

Տողերիս հեղինակին մի քանի ամիս առաջ բախտ է վիճակվել այցելելու Ֆրայբուրգի SWR (Südwester Rundfunk) հեռուստակայանի էլեկտրոնային երաժշտության ստուդիան, որտեղ դեռեւս կոմպոզիտորի կյանքի օրոք ստեղծվել է նրա հետ կապված փոքրիկ մի թանգարան՝ լուսանկարներ, պարտիտուրների ձեռագիր էջեր, նրա ձեռքով արած նշումներ: Այդ ամենը խնամքով պահպանվում է ստուդիայի աշխատողների կողմից, որոնց թվում

կան այնպիսիք, ովքեր աշխատել են կոմպոզիտորի հետ եւ ծանոթ են նրա էլեկտրոնաստիկ երաժշտության մոդերացիայի (կառավարման) գաղտնիքներին: Վերջինիս առանձնահատկությունները կարող են նոտագրվել միայն մոտավորապես, ուստի երաժշտության պատմությանն մեջ կրկին անգամ կտրուկ աճել է բանավոր ավանդույթի փոխանցման դերը: Ինքը կոմպոզիտորը թողել է այդ առումով բավականին հստակ կարգադրություններ. նա թույլ չէր տալիս կատարել իր վերջին շրջանի ստեղծագործություններն այն երաժիշտներին, ովքեր չեն աշխատել անմիջապես իր, կամ էլ՝ իր հետ սերտորեն առնչվող հետեւորդների հետ:

1950-60-ականների սահմանագլխին հայտնվեցին Շտոքհաուզենի առաջին խոշորածավալ ստեղծագործությունները՝ ծնունդ տալով նոր գաղափարների: Այդ թվում՝ «Պահեր» սոպրանոյի եւ նվագախմբի համար (1969), «Խմբեր» 3 նվագախմբի համար (1957), «Կարե»՝ 4 նվագախմբի եւ 4 երգչախմբի համար (1960): Այդ ստեղծագործությունները պահանջում էին հսկայական թվով երաժիշտներ եւ աչքի էին ընկնում գաղափարների հիրավի տիեզերական մասշտաբով: Այդ առումով Շտոքհաուզենը խորը ներքին կապեր է բացահայտում Վագների հետ:

Հենց այդ նույն 60-ականներին էր, երբ ծագել է Շտոքհաուզենի հետաքրքրությունը Արեւելքի փիլիսոփայական ուսմունքների նկատմամբ: Յոգա, մեդիտացիա, ներհայեցում, անատմանի հասկացություն՝ որպես հրաժարում սեփական «ես»-ից՝ այդ ամենը չափազանց գերում էր կոմպոզիտորին: Այդ մասին վկայում են նրա մի շարք ստեղծագործություններ, որոնցից ամենայուրօրինակը «Ինտիվ երաժշտության տեքստերն» են (1968): Այստեղ կոմպոզիտորն առհասարակ հրաժեշտ է տալիս ավանդական նոտագրությանը՝ բուն երաժշտությունը փոխարինելով վերջինիս տեքստային նկարագրությամբ. նա միայն ուրվագծում է երաժշտության ստեղծման նախադայմանները, այնինչ հնչյունները ծագում են ինքնաբերաբար, խորը հայեցության հետեւանքով: Ահա այդ տեքստերից մեկը.

«Նվագեք թրթիռներ՝ տիեզերքի ռիթմով
Նվագեք թրթիռներ՝ երազի ռիթմով
Նվագեք թրթիռներ երազի ռիթմով
Եվ դանդաղորեն փոխակերպեք այն տիեզերքի ռիթմի
Կրկնեք դա հնարավորինս հաճախ»:

Նրանք, ովքեր կարող են կարծել, որ սա լոկ ավանգարդի հերթական սոթեկուլացիա է, պետք է իմանան, որ Շտոքհաուզենն ընդհանրապես վերաբերվում էր երաժշտության որեւէ կատարմանը որպես հոգեւոր պրակտիկայից բխող մի գործողության, եւ խորը կլանվածություն էր պահանջում ոչ միայն «...տեքստերի», այլ առհասարակ իր երաժշտության կատարողներից: Եվ եթե նա երբեմն ստեղծում էր անսովոր ձեւի կամ բովանդակության ստեղծագործություններ (ինչպես, օրինակ, «Կենդանակերպ՝ 12 մեղեդի երաժշտական ժամացույցի համար», կամ հռչակավոր «Ուղղաթիռային լարային կվարտետը», որտեղ խառյակի անդամներից յուրաքանչյուրը նվագում է առանձին մի ուղղաթիռի մեջ՝ թռիչքի ընթացքում, իսկ երաժշտությունը լսվում է համերգասրահում տեղադրված դինամիկներից), ապա դա արվում էր ոչ միայն հանդիսատեսին «զվարճացնելու» կամ «աղբեցնելու» համար, այլ՝ գեղարվեստական նպատակներից դրդված, որոնք գրեթե միշտ արդարացնում էին տարօրինակ արտահայտչամիջոցները:

1977 թ-ից ի վեր Շտոքհաուզենը աշխատում էր «Լույս» օպերային վիթխարի հեպտալոգիայի վրա: Օպերային այդ շարքի յոթ մասերը կրում են շաբաթվա օրերի անվանումներ. հիմնական գործող անձինք՝ Եվան, Միքայել հրեշտակապետը, Լյուցիֆերը. հիմնական թեման՝ Տիեզերք՝ արարչություն եւ կործանում, եւ անպայման՝ հետագա վերածնունդ: Այդ ժամանկվանից սկսած նրա ստեղծած բոլոր առանձին երկերն այս կամ այն չափով առնչվում էին օպերային նախագծին: Ու թեպետ այդ շարքը մնաց անավարտ, երաժշտության հիմնական մասը գրվել է, իսկ շարքի առանձին օպերաները վաղուց բեմականացվել եւ ձայնագրվել են: Այդ բոլոր կատարումների ընթացքում միքեռային վահանակի մոտ էր մշտապես ինքը՝ հեղինակը միախառնելով էլեկտրոնային ֆոնոգրամների հնչողությունը կենդանի կատարողների ձայներին եւ կառավարելով հնչյունների տիեզերքի խառը, «բաժանելով Լույսը սվերից»:

Իր կյանքի վերջին տարիներին կոմպոզիտորը բազմիցս արտահայտվում էր կրոնի, Բարու եւ Չարի մշտական պայքարի կամ փոխհամարման մասին: 2001 թ-ի աշնանը կազմակերպված մամլո ասուլիսի ընթացքում նրա հետեւյալ խոսքերը. «ՄԻՔԱՅԵԼԸ, ԵՎԱՆ, ԼՅՈՒՑԻՖԵՐԸ առասպելական կերպարներ չեն, նրանք գոյություն ունեն այսօր. օրինակ, ԼՅՈՒՑԻՖԵՐԸ այժմ Նյու Յորքում է, որտեղ ստեղծել է կործանման արվեստի գլուխգործոց»՝ նկատի ունենալով սեպտեմբերի 11-ի տխրահռչակ դեպքերը, թյուր մեկնաբանություն են ստացել լրատվամիջոցներում՝ հարուցելով նրա անվան հետ կապված վերջին սկանդալը: Այնինչ ինքը՝ կոմպոզիտորը մշտապես վեր էր իրեն վերագրվող «փղոսկրյա աշտարակում ներփակված», իրական կյանքին անհաղորդ արվեստագետի կերպարից՝ իր օպերային շարքում կրկին անգամ հաստատելով Լույսի իդեալները:

...Շտոքհաուզենի հոգեհանգիստը, իսկ այնուհետեւ՝ հուղարկավորությունը տեղի է ունեցել հինգշաբթի օրը, դեկտեմբերի 13-ին, Կյուրտենի Վալդֆրիդհոֆ մատուռում: Գերմանական այդ փոքրիկ գյուղաղաքն այսուհետեւ ընդմիշտ մտնելու է երաժշտության պատմության մեջ՝ որպես մի վայր, որտեղ մեծ կոմպոզիտորն ապրել է իր կյանքի վերջին տարիները եւ ստեղծել իր օպերային շարքը՝ գրեթե ավարտված, սակայն ոչ լրիվ, ինչպես Բախի «Ֆուգայի արվեստը»:

Ինչպես հայտնում է կոմպոզիտորի անհատական www.stockhausen.org ինտերնետային կայքը, «Բարեկամական զգացմունքներով եւ շնորհակալությամբ այն ամենի համար, որ նա արել է անձամբ մեզ եւ մարդկության համար՝ իր սիրով ու երաժշտությամբ, մենք հրաժեշտ ենք տալիս Կառլհայնց Շտոքհաուզենին, ով ապրում էր երկնային երաժշտությունը մարդկանց բերելու համար, իսկ մարդկային երաժշտությունը՝ երկնային էակներին, որպեսզի Մարդը կարողանա լսել Աստծուն, իսկ Աստված՝ Իր զավակներին»: ■

Հարցազրույց

ԵՐԲ ԱՆՃՆԱՎՈՐՎՈՒՄ ԵՆ ՊԵՏԱԿԱՆ, ԱԶԳԱՅԻՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ...

Արգամ Այվազյանը Ջուղայի գերեզմանատանը, 1981 թ.

Օծոփի Սուրբ Աստվածածին վանքը

Հայագետ-նախիջեւանագետ Արգամ Այվազյանը՝ մի կամավոր նվիրյալ, իր կյանքի իմաստը Նախիջեւանի կորսվող հայկական արժեքների՝ հուշարձանների, վիմագրության, որմնանկարչության, քանդակագործության, խաչքարերի, հոգեւոր ու աշխարհիկ ճարտարապետության ուսումնասիրումն ու դրանք ապագային ժառանգելու առաքելությունն է համարում: 200-ից ավելի աշխատություններ՝ 21-ը առանձին գրքերով՝ մի մասը անգլերեն եւ ռուսերեն հրատարակություններ, մասնակցություն բազմաթիվ միջազգային գիտաժողովների: Նախիջեւանյան հայ մշակույթի՝ ադրբեջանցիների կողմից ոչնչացմանը զուգահեռ ինքն անխոնջ մշակի աշխատանք է տանում այդ ամենը փաստագրել-վավերագրելու: Հավաքված հսկայական նյութն առավել շահեկանորեն օգտագործելու եւ տարածելու համար Ա. Այվազյանը դիմել է նաեւ ֆիլմարվեստին: 2003-ին Հայաստանի ամերիկյան համալսարանում կայացավ Նախիջեւանի 5 գավառների մասին «Բանված հայ աշխարհ» ֆիլմաշարի առաջին՝ «Ջուղա. խզված մեղեդի» ֆիլմը, որ հաստատաբար ցուցադրվեց հայկական հեռուստատեսությամբ, ինչպես նաեւ ԱՄՆ-ում, Ռուսաստանում, Ֆրանսիայում, Իրանում, Հունաստանում եւ եղան մամուլի արձագանքներ: Մեր զրույցը Արգամ Այվազյանի հետ վերաբերում է մասնավորապես այդ ֆիլմին եւ դրա հետ առնչվող որոշ խնդիրների:

Ազնաբերդի Ս. Գրիգոր եկեղեցու որմնանկարներից

- Պրն Այվազյան, Ձեր կատարած հետազոտական աշխատանքների հրատարակությունները իրականացնելը լուրջ դժվարություններ ունի: Դյուրին չէ նաեւ ֆիլմաշարի մտահղացումն իրականացնելը: Ինչո՞ւ դիմեցիք արվեստի այս տեսակին:

- Ցնցված 2002-ին ադրբեջանցիների՝ բուլդոզերներով Հին Ջուղայի գերեզմանատան խաչքարերի անտառը հիմնահատակ կործանելու փաստից՝ համոզվեցի, որ Նախիջեւանի տարածքում շուրջ 40 տարիների իմ կատարած հետազոտական-փաստագրական նյութերը անհապաղ անհրաժեշտ է հրատարակել: Այդ հսկայածավալ աշխատանքն իրականացնելու համար 2003-ի հունվարին «Հայաստանի Հանրապետություն», ապա՝ «Голос Армении», «Առավոտ» թերթերում տպագրվեց «Տերը փնտրենք մեր ժառանգությանը» իմ հոդվածը, որտեղ պատրաստակամություն էի հայտնում համագործակցելու այս խնդրին լրջորեն եւ հետեւողականորեն վերաբերվողների հետ: Նաեւ տեղեկացրել էի Նախիջեւանի հուշարձանների, Ջուղայի խաչքարերի եւ վիմագրերի 6 հատորի հասնող 9-19-րդ դարերի վիմագրերի եւ նման այլ մտահղացումների մասին փաստագրական ֆիլմաշար ստեղծելու մասին:

Եվ ի՞նչ եք կարծում, որեւէ մեկը, պետական ու հասարակական կազմակերպություն կամ անհատ արձագանքե՞ց՝ ո՛չ մեկը: Ստիպված եղա հոդվածը կից գրությամբ ներկայացնել նախկին վարչապետ Անդրանիկ Մարգարյանի, ԱԺ այն ժամանակվա նախագահ Արմեն Խաչատրյանի, Ամենայն հայոց կաթողիկոս Գարեգին Երկրորդի եւ այլոց ուշադրությանը: Դարձյալ՝ լռություն: Վարչապետին ուղղված գրությունը հասցեագրվել էր մշակույթի նախարարություն, որտեղից ո՛չ գրավոր, ո՛չ էլ բնավոր պատասխան չստացա: 2006-ին վարչապետին ուղղված դիմումս այս անգամ նախարարությունում ճնշարկվեց՝ ինձ դիմեցին նախիջեւանյան հատորների հրատարակման եւ ֆիլմաշարի համար ծախսերի նախահաշիվ ներկայացնելու անհրաժեշտությամբ: Ներկայացված նախահաշվին հետեւեցին մի շարք գործողություններ, մասնավորապես հրատարակչական գործի գործակալության պատասխան-գրության հիման վրա նախարարությունը նպատակահարմար էր համարել 2007-ի պետպատվերի մեջ ներառել աշխատության 1-ին եւ 2-րդ հատորների (պետք է լինի 3-րդ եւ 4-րդ) հրատարակչական ծախսերը, իսկ մնացած երեքի (պետք է լինի 2-ը) հրատարակությունները՝ հաջորդաբար հետագա տարիներին: Խոսքը «Նախիջեւանի վիմագրական ժառանգությունը» 6 հատորյա մատենաշարի մասին է, որի 3-րդ հատորը ընդգրկվել է 2007-ի պետպատվերի ծրագրում եւ հույս ունեմ, որ մի քանի ամսից լույս կտեսնի:

Ինչ վերաբերում է ֆիլմաշարին, ապա դրա ստեղծման աջակցության խնդրանքս կառավարությունը մերժել է, «Հայկ» վավերագրական կինոստուդիայի կարծիքն այս մասին ստանալուց հետո:

- Գուցե Ձեր կազմած նախահաշի՞վն անիրականանալի էր:

- Ֆիլմաշարն ընդգրկում է Նախիջեւանի պատմական գավառների բոլոր հայկական բնակավայրերն ու դրանց հուշարձանները՝ վանքերն ու եկեղեցիները, խաչքարերն ու մշակութային այլ արժեքներ, 1-1,5 ժամ տեւողությամբ 6 ֆիլմ եւ 1000 օրինակ DVD եւ բացի բնագրային տարբերակը, անգլերենով, ռուսերենով, ֆրանսերենով համառոտ օրինակներ: Դրան հավելած սցենարների, նկարահանումների եւ ֆիլմերից յուրաքանչյուրի վրա կատարված մյուս բոլոր աշխատանքների գումարը կազմում էր 8 մլն դրամ:

- Եվ ի՞նչ հիմնավորումով էր «Հայկ» կինոստուդիայի գեղարվեստական խորհուրդը նախահաշվարկային ծրագիրը մերժել:

- Մշակույթի նախարարին ուղղված Ռուբեն Գետրգյանցի գրության մեջ նշված էր, որ «նման ծավալի ու նշանակության ֆիլմաշար ստեղծելու համար նամակում նշված տեսաշարային նյութը բավարար չէ, առավել եւս՝ ոչ կինեմատոգրաֆիկ եւ որ այն կարող է հիմք ծառայել միայն հեռուստատեսային հաղորդաշարի ստեղծման համար»:

- Կարծիք հայտնելն արդյոք կինոստուդիայի իրավասություններից դո՞ւրս է:

- Իհարկե, ոչ: Կինոստուդիան, անշուշտ, իրավունք ունի ներկայացված այս կամ այն առաջարկներին ու ծրագրերին բացասական կամ մերժողական պատասխաններ տալու: Սակայն վերոհիշյալ որոշումը կայացվել է ճնշարկմանը ինձ մասնակից չդարձնելու, որեւէ անգամ որեւէ բանով ինձ չդիմելու եւ ոչ մի հարցի պարզաբանում չստանալու հանգամանքներում: Կինոստուդիայի գեղարվեստական խորհրդի արգո անդամները փաստորեն տեղյակ չլինելով 8-9 ժամ տեւողությամբ այդ 6 ֆիլմերի տեսանյութի բնույթին ու ծավալին, ի՞նչ «հանճարեղ» զգացողությամբ են եզրակացրել, որ այդ նյութերը ոչ միայն բավարար չեն, առավել եւս ոչ կինեմատոգրաֆիկ են: Ինձ զարմացնում է մեր ազգային արժեքների ճակատագրով մտահոգ մտավորականի եւ գեղարվեստագետի՝ նախարարությանն ուղարկված որոշման մեջ արձանագրված հետեւյալ՝ «Սպարտակ Ղարաբաղցյանի եւ Աշոտ Մովսիսյանի «Վկայարան» տեսաֆիլմերի 6 եւ 7-րդ մասերում արդեն բավականին ծավալուն եւ հիմնավոր անդրադարձ կա վերոհիշյալ՝ Նախիջեւանի տարածքում հայկական հուշարձանների նկատմամբ դրսեւորվող ավանդական վանդալիզմի թեմային» միտքը: Նախ՝ Նախիջեւանը վերոհիշյալ տարածք չէ, այլ պատմական Հայաստանի անքակտելի մշակութային եւ ստրատեգիական նշանակության շատ կարեւոր մի երկրամաս է: Եվ բացի այդ «Վկայարան» տեսաֆիլմաշարում, եթե չեմ սխալվում, ընդամենը 5-6 րոպեանոց անդրադարձ կա, որի ցուցադրանյութն ընդգրկում է Ջուղայի գերեզմանատան եւ երկու այլ բնակավայրերի հուշարձանների ավերման փաստերը: Կարծում եմ՝ սա ամենեւին էլ բավարար չէ, որպեսզի խնդրին այլեւս չանդրադառնանք:

Այն դեպքում, երբ 1998-2006 թվականներին Նախիջեւանի տարածքում ամբողջովին ու հիմնահատակ կործանվել է հայկական 5 գավառների ճարտարապետական ողջ ժառանգությունը, որի թիվն անցնում է 27.000 միավորից (վանքեր, եկեղեցիներ, գերեզմանատներ, խաչքարեր, տապանաքարեր, վիմագրեր եւ պատմական այլ արժեքներ):

- Այդուհանդերձ «Հայկը» նախաձեռնում է եւ այս թեմայով նոր ֆիլմի ստեղծում:

- Դա հենց վկայում է այդ թեմային անդրադառնալու անհրաժեշտության մասին, լինի դա ֆիլմի (գիտափաստագրական թե խաղարկային), թե՞ հրատարակությունների ձեւով: Ավելին՝ փաստագրական նյութի կարիք շատ է զգացվում, այլապես ինչո՞ւ են դրներդտ ընկել համապատասխան նյութ հայթայթելու համար: Իսկ ի՞նչն է ստիպում նրանց այսպես անտեսել Նախիջեւանում հիմնահատակ վերացված հայկական հուշարձաններից մնացած միակ վավերագիր փաստերն ու լուսանկարները եւ համարել «ոչ կինեմատոգրաֆիկ»: Տասնամյակների իմ դժվարին ուսումնասիրություններից մնացած նախիջեւանյան կործանված պատմամշակութային հուշարձանների ամբողջական, իր տեսակի մեջ եզակի ու փաստական՝ 10 հազարի հասնող նյութերը պահպանվում են միայն ինձ մոտ: Ինձ վկայակոչելով, ամենեւին չեմ ուզում անձնացույց երեւալ, դա ուղղակի պարզ ճշմարտություն է՝ փաստված թե՛ մասնագետ-գիտնականների, թե՛ այս թեմայով հետաքրքրվողների կողմից: Տեղին է հիշել 1915-ի Հայոց մեծ եղեռնի իսկությունը պատկերող՝ գերմանացի սպաների եւ այլոց կողմից լուսանկարված կադրերը, որոնք որպես փաստական նյութեր ներառված են այդ թեմայով հայ եւ օտար ռեժիսորների նկարահանած գրեթե բոլոր մեծ ու փոքր ֆիլմերում եւ որեւէ մեկի մտքով չի անցել դրանք համարել ոչ կինեմատոգրաֆիկ: Ռուբեն Գետրգյանցը, որի անձը եւ մասնագիտական կարողությունները հարգում եմ, պարզապես ընդունել է ինքնակամ որոշում-եզրակացություն՝ ցուցաբերելով անձնավորված մոտեցում:

Այդուհանդերձ, շատ ուրախ կլինեմ, որ այդ ֆիլմի նկարահանման՝ խաչատուր Մարգարյանի նախաձեռնությունը հաջողությամբ պսակվի: Ի դեպ, ասեմ, որ նա 2006-ի կեսերին դիմել էր ինձ՝ ֆիլմի աշխատանքներին օժանդակելու առաջարկությամբ, որին ես սիրով համաձայնել եմ՝ խնդրելով ինձ ընդգրկել ֆիլմի ստեղծագործական խմբի կազմում, որպես խորհրդատու: Սակայն ոչ մի պատասխան դրանից հետո չստացա:

Առիթից օգտվելով՝ հրապարակավ ստեղծագործական խմբին հիշեցնեմ նաեւ, որ առանց իմ թույլտվության ֆիլմում իմ հրատարակություններից, հեռուստահաղորդումներից նյութեր օգտագործելը հեղինակային իրավունքի խախտում է, եւ այս դեպքում ես արգելում եմ դա անել:

- Ձեր ֆիլմին չանդրադառնալու պատճառներից մեկը նկարահանումների սիրողական մակարդակն է, ինչպես նշել է Ռ. Գետրգյանցը: Ինքս եղել եմ ֆիլմի առաջին՝ շնորհանդեսային ցուցադրությանը եւ հիշում եմ՝ ներկաների վրա թողած հուզական մեծ տպավորությունը: Նաեւ այն, որ ընդգրկված նյութը հսկայական ծավալ ունի փաստական առումով եւ հանդիսատեսը ճանաչողական իմաստով մեկ անգամից ընկալելու խնդիր ունեցավ:

- Այստեղ Գետրգյանցն ամենեւին հայտնություն չի կատարել, ես համաձայն եմ նրա կարծիքին: Մամուլում հրապարակված վերոհիշյալ իմ հոդվածը, ինչպես ասացի, անտարբերության մատնվեց, ոչ մի կինոգործիչ, որեւէ մեկը նվազագույն աջակցություն չուզեցավ անգամ ցույց տալ: Եվ ֆիլմի նկարահանումները կատարեցի ոչ պրոֆեսիոնալ կինոխցիկով՝ մոնտաժման, ձայնագրման աշխատանքները իրականացնելով ոչ ժամանակակից տեխնիկայով, որովհետեւ չեմ տնօրինում պետական կամ ոչ պետական կինոստուդիաների արդի տեխնիկան եւ ոչ էլ դրանք վարձելու միջոցներ ունեմ: Եթե հիշում եք, ֆիլմի շնորհանդեսի օրն էլ ասացի, որ կինոաշխարհի մասնագետ չեմ եւ միտում չունեմ այդ բնագավառում խոսք ասելու, որ այն դեռ ավարտուն չէ, սրբագրման տեղեր կան: Սակայն «Բանված հայաշխարհ» տեսաֆիլմաշարը արձանագրման լավագույն միջոցն է՝ տարիների ամբարված բազմահազար նյութերի, հանրային տարածման, դրանով իսկ սերունդներին ի պահ տալու: Ֆիլմաշարին ձեռնամուխ եմ եղել նաեւ այն պատճառով, որ մեր կինոռեժիսորներն այդ ուղղությամբ աշխատանքներ չեն տարել:

Ինչ վերաբերում է ֆիլմի՝ ձեր նկատած հուզականությանը, ես կարծում եմ, որ ավելի լավ է հանդիսատեսի միտքն ու հոգին փոթորկող նյութ տրամադրել, քան անընդհատ ասելիքը ներկայացնել կինոտեխնիկայի ամենաարդի, բազմազան՝ թեկուզ հետաքրքրական հնարքների միջոցով, բայց արհեստական տպավորություն թողնել:

- Գուցե խորհրդային ժամանակնե՞րն էին պատճառը եւ տիրող տոտալիտար գաղափարախոսության եւ տարվող քաղաքականության պայմանները նպաստավո՞ր չէին:

- Այո, ոչ մի բեմադրիչ իրավունք չի ունեցել մտնելու Նախիջեւան՝ նկարահանումներ կատարելու: Դա իրոք այդպես է, եւ տեղական իշխանությունները մշտապես արգելքներ են հարուցել: Այդուամենայնիվ, ուզում եմ ընդգծել, որ Նախիջեւանը ամենեւին դուրս չի գտնվել մեր կինոբեմադրիչների ուշադրությունից, որքան էլ՝ անարդյունք: Այսպես, «Մխիթար սպարապետ» ֆիլմը նկարահանելիս՝ տաղանդավոր կինոբեմադրիչ Էդմոն Քեոսայանը Նախիջեւանում եւ մասնավորապես Ագուլիսում ծրագրել էր նկարահանումներ կատարել: Սակայն հանդիպելով Հ. Ալիեւի դիմադրություններին՝

Տես էջ 5

Փոքր պատվածք հոգիի եւ մարմնի մասին

ՀԱԿՈԲ ՀԱԿՈԲՅԱՆ

Դեպքերը տեղի են ունենում նկարչի արվեստանոցում

ԳՈՐԾՈՂ ԱՆՁԻՆՔ

1. Երիտասարդ, տակավին անծանոթ նկարիչ: Աղքատ, ամաչկոտ, նաեւ կարծում է, որ գեղեցիկ չէ, եւ հույս չունի, որ կարող է ընկերուհիի մը ուշադրության արժանանալ: Շրջապատն իր վրա ուշադրություն չի դարձնում: Ինքն իր աղրիլը չի պատկերացնում առանց նկարելու: Իր միակ հույսը նկարչությունն է, որով մի օր կրնա մարդկանց ուշադրության արժանանալ: Իր ունեցածը «բնորդ» մըն է, դերձակուհիի «մանեկեն» մը՝ իր միակ հարստությունը եւ արվեստանոցում իր մինակության մխիթարությունը, տեսակ մը իր հարազատը: Ինքը աղրում է իր արվեստագեսի կյանքը: Իրեն պարտական չի զգում որեւէ մեկին, ազատ է:

2. Թաղի մեծահարուստի տղա, չափսատող, օրն անցկացնող ընկեր-ընկերուհիներու հետ անբանի կյանքով զվարճություններու մեջ: Երիտասարդներու խումբին առաջնորդը:

3-րդ գործող անձը՝ դերձակուհիի «մանեկեն» մը, արվեստանոցի մշտական բնակիչը եւ նկարիչի նկարներում հիմնական հերոսը:

4. Թաղի աղջիկները եւ տղաները, որոնք միշտ իրար հետ են, ուզում են ուրախ կյանքով աղրիլ: Զվարճանալը իրենց հիմնական նպատակն է:

ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՍԿԻԶԲԸ

Բեմը եւ սրահը մութ են: Կամաց-կամաց բեմը սկսում է լուսավորվիլ, եւ արեւի ճառագայթը ընկնում է ու առաջինը մենք տեսնում ենք մանեկենը: Հետո սենյակն է սկսում լուսավորվիլ: Մենք նկատում ենք երկաթե մահճակալին վրա երիտասարդ նկարիչը, որ շարժվում է ու սկսում է զարթնել: Սենյակը լուսավորվում է:

Բալետի լիբրետտո
Մի արարով ներկայացում

Երիտասարդը վեր է կենում անկողնից, եւ օրը սկսում է:

Եվ ահավասիկ, սակայն, թաղի տղաները եւ աղջիկները իրենց ղեկավարի առաջնորդությամբ կխուժեն նկարչի արվեստանոցը եւ կսկսին անկարգություններ անել, երգել, պարել, Նկարչին, որուն ծանոթ են անշուշտ հակառակ որ իրենց խումբին չէ, քաշկրտել, ձեռ առնել: Բայց կան նաեւ, որ սիրում են նկարիչին: Եվ հանկարծ խումբին առաջնորդը կնկատի «մանեկենը», կսկսի պարել մանեկենի հետ, գնդակի պես իրարու նետել:

Նկարիչին աղաչանքները՝ մանեկենին ձեռք չտալու, չեն լսում, մի կողմ են քաշքշում նկարիչին: Վերջապես կհեռանան արվեստանոցից: Եվ հանկարծ նկարիչը կնկատե, որ խումբին ղեկավարին շարֆը ընկած է գետնին: Նկարիչը իր ամբողջ դառնությունը կթափե շարֆին վրա եւ կոխկրտելով շարֆը կսկսի պարել խումբին պարողներու ձեւերը նմանեցնելով: Հետո հոգնած կերկննա իր մահճակալին: Ընթացին խումբին առաջնորդը կվերադառնա իր շարֆը վերցնելու համար: Կմտնե արվեստանոց, կվերցնե իր շարֆը եւ նկատելով, որ նկարիչը քնած է, անգամ մըն ալ նկարիչին հոգում հետ խաղալու համար մանեկենն ալ վերցնելով կհեռանա արվեստանոցից չարախնդալով:

Նկարիչը երբ կզարթնի իր մրափեն եւ կտեսնե, որ մանեկենը տարել են կատաղութենե չի իմանում ինչ անե, լաց է լինում, իրեն գետինները է գցում, թավալում, մազերն է փետտում:



Հետո արդեն ուժասպառ, հուսահատ ընկնում է անկողինին վրա:

Բեմը կամաց-կամաց մթնում է: Գիշեր է: Եվ հանկարծ բեմին մի կողմից խումբը սուտալով անցնում է եւ մյուս կողմից դուրս է գալիս: Հետո մթությունը սկսում է կամաց-կամաց լուսավորվիլ: Առավոտ է: Նկարիչը վեր է կենում անկողինից եւ տեսնում է, որ իր մանեկենը տեղում է: Անշուշտ, երիտասարդները այնքան ալ չար չէին կրնար ըլլալ իրենց ընկերոջ հանդեպ: Իրենց մեղքը խավում են:

Արեւը ծագել է նորից: Արեւը իր կենարար լույսը նվիրում է բոլորին: Նոր օր է սկսում: Կյանքը շարունակվում է: Բարին պիտի գործե իր բարությունը, չարը իր գործը պիտի անի: Հոգին եւ մարմինը պիտի մնան հակառակորդներ, բայց իրարից անբաժան:

Այս է կյանքը:

Երբ անձնավորվում են ...

Ցղնայի Ս. Աստվածածին եկեղեցին

Է էջից

այդպես էլ չկարողացավ իր ծրագիրն իրականություն դարձնել:

Մեկ ուրիշ փաստ: Մեծանուն կինոբեմադրիչ Փարաջանովը Սայաթ-Նովա («Նռան գույնը») ֆիլմը նկարահանելիս՝ 1966 թ. գարնանը օպերատոր Ս. Շահբազյանի, բեմադրող-նկարիչ Ստեփան Անդրանիկյանի հետ մեկնել են Նախիջեւան՝ Հին Ջուղա՝ տեղանին ծանոթանալու եւ ֆիլմի որոշ կադրեր Ջուղայի գերեզմանատանը նկարահանելու մտադրությամբ: Սակայն տեղում կալանավորվել եւ բերվել են Նախիջեւան՝ պետանվտանգության կոմետե, որի նախագահն էր Հեյդար Ալիեւը: Երկար հարցաքննությունից հետո, երբ արգելվել է Ջուղա գնալու ծրագիրը, վերադարձրել են վերցված փաստաթղթերը:

- Սա բացարձակ ֆաշիզմ է,- փաստաթղթերը վերցնելով, հանգիստ ասել է Փարաջանովը:

- Ինչ,- զայրույթից բռունցքը սեղանին զարկելով՝ բղավել է Ալիեւը: Ես Ձեզ ֆաշիզմ ցույց կտամ:

Այս խոսակցությունից հետո խումբը եւս 5-6 ժամ փակվել է պետանվտանգության նկուղային սենյակներում: Կարծում եմ՝ այս բաները ծանոթ են Փարաջանովի մասին փաստավավերագրական ֆիլմ նկարահանած Ռուբեն Գետրգյանցին:

Մեկ այլ փաստ: 1983, թե 1984 թիվն էր: «Մոսֆիլմի» պատվերով բազմասերիանոց ֆիլմ էր նկարահանվում Արամ Խաչատրյանի մասին: Ֆիլմի ստեղծագործական խումբը նկարահանումների համար ուզում էր մեկնել Նախիջեւան՝ Գողթն գավառ եւ մասնավորապես Խաչատրյանի ծննդավայր Ազա գյուղ: Ֆիլմի աշխատանքներին իրենց խնդրանքով մասնակցեցի նաեւ ես: Իմ խորհրդով նկարահանեցին Երնջակ գետահովտի բնակավայրերը, սակայն Շահկերտ գյուղում ինչ-ինչ հանգամանքներում գտնվող 2 միլիցիոներ մեզ կալանավորեցին: 6-7 ժամյա բանակցություններից հետո ժամավենը հետ վերցնելով՝ մեկնեցինք Ազա՝ անհրաժեշտ նկարահանումներն ավարտելու: Դրանց մի մասը ընդգրկվեց մեծ կոմպոզիտորի կյանքին ու գործունեությանը նվիրված ֆիլմում: Այո, դժվարություններ ու բազմաստեղ արգելքներ են եղել, բայց դրանք հաղթահարողներ էլ են եղել, որոնք ազգային մտածողության տեր անձինք էին, ոչ թե միայն դիրքի, կոչումների, կինոփառատոներում դափնիներ վաստակելու ու փառքի ձգտողներ:

- Ձեր վրդովմունքը հասկանալի է: Հայ իրականության մեջ ազնիվ մղումով եւ նվիրումով ապրող եւ առավելապես գործող անձինք հայտնվում են անբարենպաստ պայմաններում, լավագույն դեպքում անտեսվում են, իսկ հաճախ էլ՝ հալածվում ու դատապարտվում: Այսուամենայնիվ, մտադրություն ունեք ֆիլմաշարի աշխատանքները շարունակելու:

- Այժմ աշխատում եմ «Ագուլիս» եւ «Գինեվէտ Գողթն» ֆիլմերի վրա: Սցենարների հիման վրա արդեն ավարտել եմ ֆիլմերի նկարահանման աշխատանքները, սակայն դրանց դանդաղ տեմպերը, ինչպես հասկանում եք, անհրաժեշտ ֆինանսների բացակայության պատճառով է: Առիթից օգտվելով՝ ասեմ, որ ֆիլմում ընդգրկելու եմ Ռուբեն Գետրգյանցի՝ բավականին նշանավոր տոհմի լուսանկարներից, այդ գերդաստանի արդեն կործանված շիրմաքարերի պատկերներ՝ անտեսելով դրանք «ոչ կինեմատոգրաֆիկ» համարվող նրա կարծիքը: Ժամանակին «Փոքրիկ Փարիզ» համարված Ագուլիսից սերող իր տոհմի վերաբերյալ ինքը տեղեկություններ կարող է ստանալ իմ «Գինեվէտ Գողթն» աշխատության 38-39 էջերի տեսքից եւ լուսանկարների մասում զետեղված Գետրգյանցների ընտանեկան ու տոհմական պատկերներից:

- Եվս մեկ՝ վերջին հարցը: Անցած տարի «Ազգ-մշակույթ-հավելվածում» հրապարակվեց Ձեր «Եղեռնագործություն գրքի հանդեպ» խորագրով հոդվածը՝ «Նախիջեւան. գիրք հուշարձանաց» եռալեզու գրքի 25.000 տպաքանակի ոչնչացման մասին: Որեւէ բան պարզվեց, թե ինչո՞ւ էին ոչնչացրել գրքի տպաքանակը:

- Ինձ համար շատ զգայուն հարց ես տալիս: Այո՛, ոչնչացվեց գրքի տպաքանակը եւ ոչինչ էլ չկարողացա պարզել: **«Ազգի»** հոդվածի հրապարակումից հետո այն կցեցի գլխավոր դատախազին ուղղված դիմումիս՝ խնդրելով պարզել գրքի տպաքանակի հետ կատարված դեպքի իսկությունը: Եվ մինչեւ այսօր որեւէ տեղեկություն չունեմ, անգամ չի գտնվում դատախազի մակագրությամբ հանձնարարականով իմ դիմումը: Զարմանալի է, բայց փաստ է:

Այնպես որ, եթե Ադրբեջանը ծրագրված է ավերում մեր հուշարձանները, ապա՝ մենք ոչնչացնում ենք դրանց վերաբերյալ գրականությունը: Եթե Ադրբեջանը մշտապես խոչընդոտում է Նախիջեւան մեկնող ՅՈՒՆԵՍԿՕ-ի եւ Եվրոմիության հանձնաժողովները, մեզ մոտ էլ անհետեւանք են թողնում հանցագործության հանցանքաններ պարունակող գրքի տպաքանակի ոչնչացման փաստը:

Վերջերս նախիջեւանյան խնդիրների հարցերով Ամերիկայի Միացյալ Նահանգներում էի: Հարվարդի համալսարանի «Դեվիս» կենտրոնում բացվեց Նախիջեւանի հուշարձանների լուսանկարչական իմ ցուցահանդեսը, տեղի ունեցավ նաեւ հասուկ գիտաժողով: «Խզված մեղեդի՝ Ջուղա» ֆիլմի ցուցադրությամբ եւ այլ ծրագրերով ներկայացա Լոս Անջելեսի հայ համայնքին: Ադրբեջանը Կանադայում եւ ԱՄՆ-ում իր դեսպանների ու ներկայացուցիչների միջոցով ջանացել էր ամեն կերպ կասեցնել միջոցառումները: Չնայած, որ ի հեճուկս հայկական կողմի, Ադրբեջանը գործում էր բոլոր ճակատներով, մեր ծրագրած միջոցառումները կայացան, այն էլ՝ ամերիկյան բարձր մակարդակով: ԱՄՆ-ում նախիջեւանյան միջոցառումները խափանելու մասին մեկ օրինակ միայն՝ ադրբեջանական սայթերից մեկում կարդում ենք, որ Ադրբեջանի ԱԳ նախարարության մամլո քարտուղար Խազար Իբրահիմը հայտարարել է, որ ԱՄՆ-ում իրենց դեսպանատունը դիվանագիտական բոլոր միջոցները կօգտագործի՝ խափանելու տվյալ (մեր) միջոցառման անցկացումը: Հայաստանում կինոստուդիայի ղեկավարն ու գեղխորհուրդն էլ մի որոշում են կայացնում, մերժելով տարիների իմ դժվարին աշխատանքի շնորհիվ հավաքված հսկայական նյութը եւ ոչ պիտանի համարելով՝ փաստորեն արժեզրկում այն: Իսկ գլխավոր դատախազությունում իմ գրքի տպաքանակի ոչնչացման խնդիրը չպարզաբանող անհետեւողական մոտեցում է ցուցաբերվում: Նմանություն չեմ տեսնում նրանց եւ մեր գործելակերպերի միջեւ:

Այնպես որ Ադրբեջանին հասուկ ջանքեր ու գործելակերպեր պետք չեն, որ իրենց կողմից նախիջեւանյան եւ հայկական մնացած պատմամշակութային արժեքների ոչնչացման փաստերը չհրապարակվեն եւ տարածում չգտնեն: Մեր անհեռատես քաղաքականությունը, պետական, ազգային խնդիրները անձնավորելու, միմյանց խոչընդոտելու, անտեսելու հայկական անհանդուրժողականությունը բավարար է, որպեսզի Ադրբեջանը գործի ավելի սանձարձակ՝ հաշվի չառնելով հայկական կողմի տեսակետները, կարծիքը, մոտեցումները, առավել եւս՝ իրավունքները:

Հարցազրույցը վարեց
ՄԵԼԻՆԵ ԲԱՂԱԼՅԱՆԸ

Հին Ջուղա. խաչքարերի խումբ, 16-17-րդ դդ.

Հրաժարականի պահանջ թուրքական զինված ուժերի գլխավոր շտաբի պետին

Դեկտեմբերի 8-ին «Ազգը» թուրքական քրեական օրենսգրքի չարաբաստիկ 301-րդ հոդվածի խորհրդին արմատներին անդրադառնալիս, դրա գոյությունը պայմանավորել էր թեմալական ազգայնականության սկզբունքներով եւ նշել էր, որ Թուրքիայում Քեմալ Աթաթուրքի կենսագրության, թուրքական զինված ուժերի գլխավոր շտաբի գործունեության, հայկական եւ քրդական հարցերի վրա դրված տաբուները սերտորեն կապակցված են:

Տաբուների կապակցվածության պայմաններում դրանցից մեկի ճեղքվածքն անխուսափելիորեն անդրադառնում է մյուսի վրա: Դրա թերեւ վառ օրինակը Հայկական հարցն է, այն առումով, որ Հայոց ցեղասպանության հարցի ակտիվ վերարծարծումը երկրում նախադրյալներ է ստեղծել Աթաթուրքի կյանքին եւ գործունեությանն առնչվող առանձին մանրադրվագների արծարծման համար: Նույնը պետք է ասել քրդական հարցի արծարծումների պարագայում, որն անխուսափելի է դարձնում ՊԿԿ-ի դեմ ծավալվող այսպես կոչված հակաահաբեկչական պայքարի անմիջական պատասխանատու զինված ուժերի գլխավոր շտաբի գործունեության վիճարկումները:

Հատկապես այն դեպքում, երբ վիճարկման համար առիթ է տալիս գլխավոր շտաբի պետ, բանակի գեներալ Յաշար Բույուքանիթը, հայտարարելով, թե Թուրքիայում ահաբեկչությունը հաղթահարվել է, ինչը հանգեցրել է դրա հետագա օրինականացմանը: Խոսքը քրդական «Ժողովրդավարական հասարակարգ» կուսակցության մասին է: Հուլիսի 22-ի ընտրություններում Թուրքիայի ազգային մեծ ժողովում պատգամավորական 22 տեղ ստացած այս կուսակցությանը թուրքական հաղթական շրջանակները մեղադրում են որպես խոսափող ՊԿԿ-ին ծառայելու մեջ:

Գլխավոր շտաբի պետի դեկտեմբերի 11-ի հայտարարությանը դեկտեմբերի 12-ին բուռն հակազդեցությամբ արձագանքել են «գորշ գայլերի» հաղթական կազմակերպության՝ Ազգայնական շարժում կուսակցության պատգամավորները: Ինչպես նախորդ օրվա համարում տեղեկացրել է «Միլլիեթը», նրանցից Օսման Դուրմուշը գեներալ Բույուքանիթի հայտարարությունը որակել է անփառունակ եւ ավելացրել. «Իբրեւ քաղաքական գործիչ ՊԿԿ-ի օրինականացման մասին նրա խոսքերը խիստ դատապարտում եմ եւ հայտնում իմ տարակուսանքը: Մեր երկրում ահաբեկչության դեմ պայքարը դեռեւս չի ավարտվել, որ նա այդպիսի խոսքեր ասի: Դրանք անհաջողության յուրահատուկ խոստովանություն են: Երկրում հրաժարականի ինստիտուտ գոյություն ունի, մեծարգո Բույուքանիթը պետք է հրաժարական տա»:

Կուսակցության մյուս պատգամավորները լռելու կոչ անելով Բույուքանիթին, նրան մեղադրել են երկրում ահաբեկչությունն օրինականացնելու մեջ, որոնց միացել են վարչապետ Էրդողանի «Արդարություն եւ բարգավաճում» կուսակցության որոշ պատգամավորներ: Թերեւս Բույուքանիթին Թուրքիայի նախկին նախագահ Սուլեյման Դեմիրելն է պաշտպանել:

Նկատի ունենալով Թուրքիայում բանակի, առավել եւս գլխավոր շտաբի գերիշխող դիրքը երկրի քաղաքական կյանքում, աննախադեպ պետք է համարել ընդդիմադիր կուսակցության պատգամավորի այդպիսի բուռն հակազդեցությունը շտաբի պետին, առավել եւս հրաժարականի պահանջը: Սա նշանակում է, որ բանակի միջամտությունը քաղաքականությանը սահմանափակելու վարչապետ Էրդողանի կառավարության ջանքերը սկսել են երկրում տալ դրական արդյունքներ:

Հ. ՉԱԲԲԱՆ

Կոնգրեսը ԿՀՎ-ին արգելեց խոշտանգել հարցաքննության ժամանակ

Կոնգրեսի սենատին պալատը երեկ հավանություն է տվել մի օրինագծի, որը ԿՀՎ-ին արգելում է հարցաքննությունների ժամանակ խոշտանգել եւ նվաստացնել կալանավորներին: Ասուլիսի ընթացքում գործակալությունը հաղորդում է, որ օրինագծի օգտին արտահայտվել են 222, դեմ՝ 199 պատգամավորներ: Հուսով փաստաթուղթը կներկայացվի Սենատի քննարկմանը: Եթե վերին պալատը հաստատի, ապա կմնա միայն նախագահ Ջորջ Բուշի ստորագրության անհրաժեշտությունը: Ի դեպ, Սպիտակ տունն արդեն սպառնացել է վետո դնել օրինագծի վրա:

Սենատին պալատի ընդունած օրինագծի մեծ մասի բովանդակությունը գաղտնի է պահվում, թեեւ որոշ դրույթներ հրապարակվել են: Խոշտանգումների արգելումից բացի, փաստաթուղթը պահանջում է կոնգրեսականներին տեղեկացնել, թե հատուկ ծառայությունների աշխատակիցները հետետնՀ են արդյոք կալանավորների հետ դաժան եւ անմարդկային վերաբերմունքն արգելող դրույթներին:

Ներկայացուցիչների պալատը նաեւ շրջափակել է հատուկ ծառայությունների 2008-ի բյուջեի 70 տոկոսի ծախսումը, քանի դեռ Սենատի հետախուզական հանձնախմբերը չեն տեղեկացել 2007-ի սեպտեմբերի 6-ին Սիրիայի ենթադրյալ միջուկային օբյեկտներին իսրայելցիների հասցրած հարվածի մասին: Սա վերջին 3 տարիներին հատուկ ծառայությունների միջոցների ծախսման վերաբերյալ Կոնգրեսի զույգ պալատների համաձայնեցրած առաջին օրինագիծն է, նշում է գործակալությունը:

Եգիպտոսն Իսրայելի միջուկային ներուժը վտանգավոր է համարում

Եգիպտոսի արտգործնախարար Ահմեդ Աբուլ Գեյթը հայտարարել է, որ Իսրայելի միջուկային ներուժը սպառնալիք է Մերձավոր Արեւելքի անվտանգության համար:

Ռուսական կասարելիք այցի նախօրեին Ինտերֆաքս գործակալությանը տված հարցազրույցում արտգործնախարարը հիշեցրել է, որ Եգիպտոսի նախագահ Հոսնի Մուբարաքը ավելի վաղ հանդես էր եկել Մերձավոր Արեւելքը զանգվածային բնաջնջման բոլոր զինատեսակներից եւ առաջին հերթին միջուկային զենքից ազատելու նախաձեռնությամբ:

«Կասկած չկա, որ այդ նախաձեռնությունը մեծ կարեւորություն է ստացել իրանական ճգնաժամի զարգացման պայմաններում: Ժամանակն է, որ միջազգային ընկերակցությունը կատարի իր պարտավորությունները եւ կատարի տվյալ նախաձեռնության իրագործմանն ուղղված գործնական քայլեր, ինչպես նաեւ բավարար ուշադրություն դարձնի Իսրայելի միջուկային ներուժին, քանի որ դա սպառնում է Մերձավոր Արեւելքի կայունությանն ու անվտանգությանը», հայտարարել է նախարարը:

Անդրադառնալով Իրանի միջուկային ծրագրին, Գեյթն ասել է, որ Կահիրեում մեծ ուշադրությամբ են հետեւում այդ ծրագրի հետ կապված իրավիճակի զարգացմանը: «Եգիպտոսը դիրքորոշում ունի զանգվածային բնաջնջման զենքի չտարածման խնդրի առնչությամբ. մենք համաձայն չենք տարածաշրջանում նոր միջուկային ուժերի գոյությանը», ընդգծել է նա:

Միեւնույն ժամանակ արտգործնախարարը կարեւորել է միջուկային էներգիայի խաղաղ օգտագործման իրավունքի պահպանումը, «քանի որ այդ իրավունքն ունեն Միջուկային զենքի չտարածման պայմանագրի անդամ բոլոր երկրները»: Նախարարի խոսքերով, «շատ կարեւոր է, որ միջուկային գործունեությունն իրականացվի երաշխիքների վերաբերյալ ՄԱԳԱՏԷ-ի հետ ստորագրված համաձայնագրին համապատասխան եւ ամբողջովին լինի գործակալության վերահսկողության տակ»:

Ահմեդ Աբուլ Գեյթը հիշեցրել է, որ Եգիպտոսն իր շահագրգռությունն է արտահայտել Իրանի հարցի քաղաքական-դիվանագիտական կարգավորմամբ:

ՎԱՇԻՆԳՏՈՆ

Ներգաղթը՝ ԱՄՆ նախագահական ընտրարշավի գլխավոր թեմա

ԱՄՆ-ում նախագահական ընտրարշավի մասնակիցները քվեներ շահելու նպատակով ջանում են «չդիպչել» ազգային համայնքներին: Սակայն մի շարք նահանգներում ներգաղթյալների թվի զգալի աճը թեկնածուներին ստիպում է ուշադրությունը բեւեռել ներգաղթի խնդրի վրա, հետին պլան մղելով Իրաքի պատերազմի հարցը:

Այս կապակցությամբ Փարիզի «Ֆիգարո» թերթը հիշատակում է նախագահության դեմոկրատ թեկնածու, Նյու Յորքի սենատոր Հիլարի Քլինթոնի հետ Այովայի նահանգի փոքր ավաններից մեկում պատահած միջադեպը: Ընտրական հավաքի ժամանակ մի երիտասարդ մեքսիկուհի տիկին Քլինթոնին գանգատվել է, որ ինքը 1,5 տարի չի տեսել մորը, քանի որ իշխանությունները նրան հետ են ուղարկել Մեքսիկա: Երիտասարդ մեքսիկուհին ծնվել է ԱՄՆ-ում, ունի այդ երկրի քաղաքացիություն եւ ԱՄՆ-ում է մնում ուսումը շարունակելու նպատակով: Հիլարի Քլինթոնը չի կարողացել որեւէ լուծում առաջարկել ծանր կացությանը վերջ դնելու համար:

Վերջերս բուռն վեճերի առարկա դարձած օրինագծի համաձայն, նախատեսվում է ամրացնել ԱՄՆ-Մեքսիկա սահմանը եւ միաժամանակ 12 մլն անօրինական ներգաղթյալներին հնարավորություն տալ խոշոր տուգանք վճարելու եւ անգլերեն սովորելու պայմանով օրինականացնել երկրում իրենց ներկայությունը: Հիլարի Քլինթոնի խոսքերով, «նրանք, ովքեր հավակնում են ներգաղթը դադարեցնել միլիոնավոր ընդհատակյա ներգաղթյալներին արտաքսելու միջոցով, սխալվում են, քանզի դա անիրագործելի ծրագիր է. իրականում այդ ամբոխավարները երկարաձգում են սպասուս քվոն, որը ձեռնտու է անօրինական ներգաղթյալներին»:

Խոսքը, փաստորեն, անօրինական ներգաղթյալներին համաներում շնորհելու մասին է, թեեւ նախագահության թեկնածուներն ամեն կերպ խուսափում են այդ բառն օգտագործելուց: Մասնավորապես, Նյու Մեքսիկոյի նահանգապետ Բիլ Ռիչարդսոնը դատապարտում է Մեքսիկայի սահմանի երկայնքով պարիսպ կառուցելու ԱՄՆ-ի ծրագիրը: Մեկ ուրիշ թեկնածու՝ Ջոն Էդվարդսը պահանջում է կազմել սեզոնային աշխատավորների ընդունման ծրագիր:

Ամբողջ ԱՄՆ-ում իսպանալեզու համայնքը վերջին տարիներին արագորեն աճում է եւ ներկայումս ունի 45 մլն ներկայացուցիչ: Իսպանախոսները ԱՄՆ-ի առաջին ազգային համայնքն են: Այս ընտրազանգվածը կարող է զգալի չափով ազդել նախագահական ընտրությունների արդյունքների վրա ոչ միայն Տեխասում, Նյու Մեքսիկոյում, Արիզոնայում, Կալիֆորնիայում, այլեւ հեռավոր Նեւադայի, Կոլորադոյի եւ Այովայի նահանգներում: Մասնավորապես, ԱՄՆ-ի խորհրդում գտնվող Այովայում լատինամերիկյան ծագում ունեցող ներգաղթյալների թիվն այժմ հասնում է 114,7 հազարի: 2000-ից ի վեր նահանգում նրանց թիվն աճել է 28 տոկոսով:

Ազդեցիկ «Ուոլ սթրիթ ջոռնալ» թերթը քննադատում է ներգաղթյալներին ԱՄՆ-ի բոլոր չարիքների պատճառ համարող նախագահության թեկնածուներին, նշելով, որ նրանց դիրքորոշումը «պահպանողականությամբ քողարկված հետադիմական պոպուլիզմ է»: Բայց իրականում սա սթափ ընտրական հաշվարկ է, քանզի լատինամերիկացի ներգաղթյալների 57 տոկոսը մտադիր է քվեարկել դեմոկրատ թեկնածուների օգտին, ինչը լրջորեն մտահոգում է հանրապետականներին:

ԱՄՆ մուտքի այցագիրը թանկանում է

ԱՄՆ պետդեպարտամենտը երեկ հայտարարել է մուտքի այցագրի ավելի քան 30 տոկոս թանկացման մասին: «Արդեն 2004-ին, երբ հաշվարկում էին մուտքի այցագրերի հետ կապված տուրքերի չափերը, 100 դոլարանոց վարձավճարը չէր ծածկում բոլոր ծախսերը», ասվում է ԱՄՆ արտաքին քաղաքական գերատեսչության հայտարարության մեջ, որից մեջբերում է անում Ֆրանսիայի գործակալությունը: Իսկ մասնահետքերը վերցնելու կարգի սահմանումը էլ ավելի թանկացրեց ծախսերը:

2008-ի հունվարի 1-ից աշխարհի երկրների մեծ մասում այցագրերի գինը կդառնա 131 ԱՄՆ դոլար: Մինչեւ 2007-ի դեկտեմբերի 31-ը այցագրի հայտն անձամբ ներկայացրած քաղաքացիները վարձավճարը կմուծեն հին սակագնով (100 դոլար): Եթե օտարերկրացին այցագրի համար դիմել է մինչեւ հունվարի 1-ը, բայց անձամբ չի ներկայացել հյուպատոսարան, ապա ստիպված կլինի ավելացնել 31 դոլար:

ԱՄՆ մուտքի այցագրերը վերջին անգամ թանկացել էին 2002-ին: Առանց այցագրի ԱՄՆ մուտք գործելու իրավունքից օգտվում են աշխարհի երեք տասնյակ երկրների, այդ թվում՝ Եվրոմիության, Ավստրալիայի եւ Ճապոնիայի քաղաքացիները:

Թմրամոլությունը թուլացնում է բրիտանական բանակը

Պաշտպանական հարցերի հետազոտման համատեղ ծառայությունների թագավորական ինստիտուտի հաշվետվության համաձայն, ամեն տարի բրիտանական բանակը թմրադեղերի օգտագործման պատճառով զրկվում է գրեթե 800 զինծառայողից: Ֆրանսիրեսը նշում է, որ դա ավելին է, քան Իրաքի եւ Աֆղանստանի պատերազմներում բրիտանական բանակի կրած ընդհանուր կորուստները:

Վերջին 3 տարում թմրադեղ օգտագործող զինվորների թիվն ավելացել է 30 տոկոսով: Եթե 2003-ին ստուգումներով թմրադեղ էր հայտնաբերվել 517 զինծառայողի արյան մեջ, ապա 2006-ին այդ ցուցանիշը հասավ 769-ի: Նույն ժամանակամիջոցում կոկաին օգտագործողների թիվը քառապատկվել է:

Մեծ Բրիտանիայի բանակի գլխավոր հրամանատար Ռիչարդ Դանաթի խոսքերով, իրավիճակը բարդացնում է նաեւ այն փաստը, որ զինվորների մարտական ոգին բավական ցածր է:

Պաշտպանության նախարարության ներկայացուցիչներից մեկը Ֆրանսիրեսի թղթակցին հայտնել է, որ թմրամոլության մեջ մեղադրված զինծառայողների 90 տոկոսն անհապաղ հեռացվում է, իսկ մնացյալ 10 տոկոսն ամենից հաճախ շարքային են:

Ռուսաց լեզվի իմացությունը կօգնի երկու ժողովուրդներին ավելի լավ հասկանալու իրար

Դեկտեմբերի 17-21-ը Մոսկվայում՝ Կրեմլի Գեորգեյան դահլիճում տեղի կունենա եզրափակիչ հանդիսություն՝ նվիրված աշխարհում ռուսաց լեզվի տարվան: «Ռուսազառուբեժկենտրոնի» ներկայացուցիչ, ՀՀ-ում ՌԴ դեսպանատան խորհրդական Անատոլի Նիկոլաևի խոսքերով, այդ լայնամասշտաբ միջոցառմանը կմասնակցեն աշխարհի 100 երկրների ներկայացուցիչներ, իսկ ամեն երկրից հրավիրված են երկուական դասվիրակներ:

Հայաստանում այդ դասվին արժանացել են ԵՊՀ-ի ռուսաց լեզվի եւ գրականության ֆակուլտետի դեկան Պավել Բալայանը եւ ռուսաց լեզվի մասին լավագույն շարադրության միջազգային մրցույթի հաղթող, Սլավոնական համալսարանի միջազգային հարաբերությունների ֆակուլտետի առաջին կուրսի ուսանողուհի Թամարա Մելիխեթյանը: Արդյունքների դասավորը եզրափակմանը հանդես կգան Ռուսաստանի նախագահ Վլադիմիր Պուտինը եւ ռուսաց լեզվի մրցույթի կազմկոմիտեի նախագահ, ՌԴ վարչապետի առաջին տեղակալ Դմիտրի Մեդվեդեւը:

Ինչպես հայտնեց ռուս դիվանագետը, հայերը ռուսաց լեզվի տարածման տեսանկյունից դարձյալ առաջ են բոլորից: Մեզանից հետո անցած տարում ռուսաց լեզուն եւ մշակույթը ակտիվ են ուսումնասիրում Ուզբեկստանում, Չիլիում, Ավստրիայում եւ Ֆրանսիայում: Չնայած այդման էլ շատ ժամանակ չի մնացել մինչեւ հանդիսությունների սկիզբը, սակայն դեռ հայտնի չէ՝ կմասնակցե՞ն սլավոնեղբայրները Ուկրաինայից եւ հյուրերը Վրաստանից:

Ի դեպ, Հայաստանում մինչեւ տարվա վերջ նախատեսվում է «Ռուսաց լեզուն ԱՊՀ երկրներում. նրա ժամանակակից կարգավիճակը եւ զարգացման հեռանկարները» գիտամեթոդաբանական միջազգային կոնֆերանսի անցկացումը, ինչպես նաեւ «Ռուսաց լեզուն Հայաստանում» Հայաստանի ռուսագետների եզրափակիչ կոնֆերանսը:

Օրերս Երեւանի Հարավ-արեւմտյան զանգվածի ռուսաց լեզվի ուսուցմամբ դասարաններով թ. 176 միջնակարգ դպրոցում ՀՀ-ում ՌԴ-ի դեսպանատան, «Սլավոնական տուն» հասարակական կազմակերպության եւ «Ռուսազառուբեժկենտրոնի» աջակցությամբ տեղի ունեցավ «Մենք սիրում ենք քեզ, ռուսաց լեզու» ակցիան: Առաջին դասարանցիները եւ աղագա՝ շրջանավարտները, ընդ որում առավելապես հայկական դասարանների սովորողները, դարձան իսկական տոնի մասնակիցներ ավանդական «աղ ու հացով», ռուսական ժողովրդական երգ ու պարով: Իսկ կրտսեր տարիքի աշակերտները ներկա գտնվողներին հետաքրքրական եւ հանրամատչելի ձեւով պատմեցին Մոսկվա քաղաքի պատմության, կայացման եւ զարգացման մասին: «Սլավոնական տուն» ՀԿ-ի նախագահ, Ռուս-հայկական համալսարանի դասախոս Նոննա Գուստովայի խոսքերով, պատահական չէ, որ միջոցառման կազմակերպման գաղափարը առաջացավ տվյալ դպրոցում: Այստեղ շատ բարձր մակարդակի վրա է անցնում ռուսաց լեզվի դասավանդումը եւ լիովին օրինաչափ է, որ դպրոցի բազմաթիվ շրջանավարտներ շարունակում են ուսումը Սլավոնական համալսարանում:

«Թեպետ աշխարհում ռուսաց լեզվի տոնը մոտենում է ավարտին, այդուհանդերձ մեր երկու ժողովուրդների միջեւ մշակութային կապերին նախկինի պես մեծ ուշադրություն կդարձվի», ասաց Ա. Նիկոլաեւը: Համաձայն պայմանավորվածությունների, որոնք տեղի ունեցան ՌԴ մշակութային գործիչների վերջերս Հայաստան կատարած այցի ընթացքում, 2008 թվականի սկզբներին մեր երկրում կբացվի Ռուսաստանի երիտասարդ թատերական կոլեկտիվների փառատոնը, որի պատասխանատուն է նշանակված Մոսկվայի երգիծանքի թատրոնի ղեկավար, հայտնի դերասան Ալեքսանդր Շիրվինդը: Իսկ Սովետական Միության ժողովրդական դերասան Առմեն Ջիգարխանյանը խոստացավ, որ առաջինն այդ փառատոնում հանդես կգան իր թատրոնի դերասանները: Ի դեպ, արդեն բանակցություններ են ընթանում եկող տարի Հայաստանում Մարինյան թատրոնի ելույթների վերաբերյալ: Այնպես որ մեր բազմակողմ կապերը նախկինի պես կմերձեցնեն մեր ժողովուրդներին, իսկ ռուսաց լեզուն կօգնի ավելի լավ հասկանալու իրար:

ՏԻԳՐԱՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Թատրոնը դարշել է մոնոպոլիա: Ամեն մեկն իր շրջապատին հավաքում է ու սկսում բեմադրություններ անել

Գժգոհում է Հասմիկ Տեր-Կարապետյանը

Երեկ «Հայելի» ակումբում տեղի ունեցած մամուլի ասուլիսը կրկին նվիրված էր թատրոնի խնդիրներին ու բաց բեմ հասկացությանը: Հրավիրված հյուրերը՝ դերասանուհի **Հասմիկ Տեր-Կարապետյանը** եւ Հրաչյա Ղափլանյանի անվան դրամատիկական թատրոնի դերասան **Հովհաննես Բաբախանյանը** ունեին տարբեր կարծիքներ:

Հասմիկ Տեր-Կարապետյանի բնորոշմամբ ազատ բեմ հասկացությունը լավ ծրագիր է եւ իրականացման դեպքում կբերի ազատ մտքեր, արվեստագետների ազատ փոխհարաբերություններ, իսկ երիտասարդների համար կդառնա ինքնարտահայտման վայր:

Հովհաննես Բաբախանյանն էլ ծրագիրը ողջունելուց զատ չի զլանում խոսել այնտեղ առկա բացթողումների մասին: «Եթե սկսնակները խաղան, ասենք, անհատական կոմերցիոն ներկայացումներում, նրանց սխալվելու հավանականությունը շատ է: Դա պետք է տալ փորձառուներին: Նրանք թատրոնի սանդարտներից դուրս չեն գա: Յուրաքանչյուր երիտասարդ կայանում է ավագի ներողամտության հաշվին», ասում է դերասանն ու բերում անձնական օրինակը: «Ես էլ եմ անցել, մինչեւ հասատվել եմ»:

Հասմիկ Տեր-Կարապետյանը համահավասար սկզբունքների կողմնակից է: Նրա խոսքերով, երիտասարդներն ավելի շատ են ենթակա վարակման: «Ժամանակին Սունդուկյանում, երբ կային մեծություններ, բոլոր սկսնակ դերասանները ընդօրինակում էին Խորեն Աբրահամյանին, դերասանուհիներն էլ՝ Մետաքսյա Սիմոնյանին: Քչերն են կարողանում այդ շաղումից դուրս գալ»:

Հ. Բաբախանյանն առաջարկում է մինչեւ բեմ տրամադրելը նախ տեսնել, թե ներկայացումներն ինչ ասելիք ունեն: «Թե չէ կհավաքեն 300 հոգի ու այնպիսի բոտն անճաշակություն կտան, որ դրանից հետո 10 անգամ Շեխսպիր նայեն ու էլի խելքի չգան»:

Հ. Տեր-Կարապետյանն էլ ներկայացնում է ընդհանուր թատերական դաշտի սարսափելի վիճակը՝ մատնացույց անելով Կամերային թատրոնը, «որ անգամ կարգին գրիմանոց չունի»: Կամ «Փոսի թատրոնը», «որ անունը կա, ամանումը չկա: Ինչ-որ մի տեղ ծվարած աշխատում են»:

ՀԱՍՄԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Ալիծ Աղբաբյանը ներկայացրել է Հայաստանը Ստոկհոլմում

Դեկտեմբերի սկզբներին Շվեդիայի մայրաքաղաքում անցկացվող «Մանկական գրքի միջազգային շաբաթին» Ստոկհոլմի հանրային գրադարանի հրավերով մասնակցել է նաեւ լոսանջելեսաբնակ մանկագիր Ալիծ Աղբաբյանը, որն ըստ «Արմինյն միրոր սփեքթեյթր» շաբաթաթերթի լրատվության, ներկայացրել է Հայաստանը: Դպրոցական երեխաներին եւ մեծահասակներին ուղղված իր պատմողական ելույթներում նա անդրադարձել է հայկական մանկական գրականության պատմությանն ու բնույթին, արծարծված թեմատիկային եւ օգտագործված լեզվին: Հանդիպումներ են եղել նաեւ հայ համայնքի երեխաների հետ:

Շաբաթաթերթի տվյալներով, ավելի քան 8000 հայեր են ապրում այժմ Շվեդիայում, հիմնականում Լիբանանից, Իրանից եւ Մերձավոր Արեւելքի այլ երկրներից արտագաղթածներ:

Մանկական գրքի շաբաթն արդեն 4-րդ անգամն է անցկացվում Ստոկհոլմում եւ նպատակ ունի խթանելու ընթերցանությունը տարբեր մշակույթների երեխաների շրջանում: Միջոցառումը կազմակերպում է հանրային գրադարանի (որտեղ պահվում են աշխարհի 129 լեզուներով ավելի քան 220 հազար վերնագրերով գրքեր) «միջազգային գրադարան» բաժինը:

Բացի Աղբաբյանից, այս տարի իրենց երկրները ներկայացնելու համար Ստոկհոլմ են հրավիրվել նաեւ գրողներ, գրադարանավարներ եւ ուսուցիչներ Կորեայից, Ճապոնիայից, Հնդկաստանից, Լեհաստանից եւ Սոմալիից:

Որպես մանկագիր Ալիծ Աղբաբյանը բազմաբեղուն կյանք է վարում Լոս Անջելեսում, կազմակերպելով թեմատիկ դասախոսություններ, ցուցահանդեսներ, գործնական հանդիպումներ եւ փառատոներ:

Հիմնադրել է «Ծիլ ու ծառ» հրատարակչությունը, որն անցած ավելի քան 10 տարիների ընթացքում երեխաների սեղանին է դրել բարձրորակ եւ հետաքրքրաշարժ գրքեր: Ծնունդով լիբանանահայ Ալիծ Աղբաբյանը (Ճեպեճյան) որպես սփյուռքահայ ուսանող սովորել եւ ավարտել է Երեւանի պետհամալսարանի ռուսաց լեզվի եւ գրականության բաժինը:

Հ. Ծ.

ԿԱՐԵՎՈՐ ՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆ

Նարեկացիական նոր մոտեցումներ

«Նաիրի» հրատարակչությունը լույս է ընծայել (2006 թ.) Հ. Միրզոյանի «Գրիգոր Նարեկացու բառաստեղծական արվեստը» արժեքավոր ուսումնասիրությունը, որն ամփոփում է Նարեկացու կյանքին, գործունեությանը, գրական ժառանգությանը նվիրված հեղինակի արդեն իսկ տպագրված շուրջ երկու տասնյակ հոդվածներից ընդամենը չորսը: Դրանցում առաջին անգամ ներկայացվում են Գրիգոր Նարեկացու, Խոսրով Անձեւացու, Անանիա Նարեկացու ստեղծած նորակազմությունները («Նարեկացու բառաբխարհը»), միաժամանակ ցույց է տրվում այն վիթխարի ազդեցությունը, որ նարեկյան դպրոցի երեք կարկառուն դեմքերը թողել են հետագայի հայ մատենագրության վրա՝ մեծապես նպաստելով լեզվի հարստացմանը («Նարեկացու լեզվական ազդեցությունը հետագա դարերի հայ մատենագրության վրա»): Գրքում զետեղված են նաեւ «Գրիգոր Նարեկացին եւ հայոց գրերը» եւ «Նարեկացիական բառի արժեքը» խորագրերով հոդվածները, որոնցից առաջինում քննվում է Նարեկացու այբուբեն-ակրոստիխոս պարունակող խաչի ներբողը, իսկ երկրորդում վեր է հանվում Նարեկացու ստեղծագործության մեջ բառագործածության մի հետաքրքրական իրողություն:



Օգտվելով «Նոր բառագիրք հայկազեան լեզուի» բառարանից՝ Հ. Միրզոյանը փաստում է, որ շուրջ 1800 նորաբանություն վկայված է Գրիգոր Նարեկացիով, որից շուրջ 820-ը միայն «Մատյանում»: Հանգամանալի քննությամբ վեր են հանվում այն բոլոր նորակազմությունները, որոնք խթանել են հայոց լեզվի հետագա զարգացումը: Հեղինակը կատարում է արժեքավոր հետեւություններ. «Նարեկացուն ճիշտ հասկանալու համար նախ եւ առաջ պետք է ուսումնասիրել նրա բառաբխարհն ու դրա ստեղծման արվեստը»: Նշվում է նաեւ, որ Նարեկացու ստեղծագործական հասունացմանը զուգընթաց «կատարելագործվել եւ աննախադեպ զարգացման է հասել նաեւ բառաստեղծական արվեստը», ինչի հանգամանալի հետազոտությունը հնարավորություն կընձեռի ճշտելու մեծ մտածողի ստեղծագործությունների ժամանակագրությունը կամ «Նարեկացուն վերագրված առանձին աշխատությունների հեղինակային պատկանելությունը»: Ելնելով իր կազմած բառացանկերից՝ Հ. Միրզոյանը բերում է փաստեր, որոնք օգնում են նարեկացիագիտության մեջ կատարել հսկայեցումներ՝ կապված «Մատյանի» Դբ եւ Դգ գլուխների հետ. անառարկելի է դառնում «խնդրո առարկա գլուխները Նարեկացուն պատկանելու փաստը»:

Քննելով նարեկյան դպրոցի լեզվաշինարարության հարցը, հեղինակը նշում է, որ դպրոցի ներկայացուցիչները փորձել են միեւնույն նախադասության մեջ որքան հնարավոր է շատ նորակազմություններ օգտագործել, եւ եթե դպրոցի վաղ ներկայացուցիչները (օր.՝ Խոսրով Անձեւացին) ստեղծում էին աճանցավոր եւ երկարմատ բառեր, ապա հաջորդները ստեղծում են եռարմատ բառեր: Գրքում հանգամանորեն տրվում են թե՛ Գրիգոր Նարեկացիով, թե՛ Խոսրով Անձեւացիով, թե՛ Անանիա Նարեկացիով վկայված բառացանկեր, թե՛ տարբեր հեղինակների զուգադրումներով, օրինակ՝ Անձեւացի ու Գրիգոր Նարեկացի, Անանիա Նարեկացի ու Գրիգոր Նարեկացի եւ այլն... Առաջ փաստական նյութով Հ. Միրզոյանը ներկայացնում է Գրիգոր Նարեկացու լեզվական ազդեցությունը թե՛ հայ մատենագիրների մի հսկայական բանակի (Ասողիկ, Գրիգոր Մագիստրոս, Արիստակես Լաստիվերտցի, Գրիգոր-Վահրամ Վկայասեր, Անանիա Սանահնեցի, Հովհաննես Սարկավագ Իմաստասեր, Սամվել Անեցի, Ներսես Շնորհալի, Սարգիս Շնորհալի, Իգնատիոս, Բենիկ, Գրիգոր Բ Տղա, Մխիթար Գոշ, Վանական Վարդապետ, Ներսես Լամբրոնացի, Մխիթար Հերացի, Գրիգոր Սկեւռացի, Կիրակոս Գանձակեցի, Հովհաննես Երզնկացի, Վահրամ Ռաբունի, Ստեփանոս Օրբելյան, Վարդան Մեծ, Մխիթար Այրիվանեցի, Մխիթար Ամարանցի, Հովհաննես Գառնեցի, Եսայի Նչեցի...), թե՛ այդ շրջանում այլ լեզուներից թարգմանված երկերի վրա...

Հեղինակը գրքում պարզաբանում է նաեւ բազմաթիվ բանասիրական այլ հարցեր, որոնք առ այսօր չեն շոշափվել, կատարում է արժեքավոր եզրահանգումներ...

«Նարեկացիական բառի արժեքը» հոդվածում հանգամանորեն քննելով միայն մեկ բառի («միջոց») գործածությունը Գրիգոր Նարեկացու «Մատյանում»՝ Հ. Միրզոյանն իրավացիորեն եզրահանգում է, որ առ այսօր «Մատյանի» աշխարհաբար կամ օսար լեզուներով թարգմանություններում միջոց-ը ներկայացվում է տարածություն իմաստով, այնինչ կոնտեքստում ունի ժամանակ իմաստը: Սոսկ այս մի բառի հետ կապված մեկնաբանությունը հուշում է, թե որքան էական է բառը Նարեկացու գործերում՝ դրանք միանշանակ եւ ճիշտ ընկալելու տեսանկյունից:

Այս գիրքը, որ հարուստ է առաջ փաստական նյութով, լուրջ խորհելու տեղիք է տալիս. Նարեկացին ընկալվում է նորովի՝ շատ ավելի խոր եւ ճշմարտությանը մոտ:

Հ. Միրզոյանի վերոհիշյալ աշխատությունը բարձրարժեք գործ է, որն ունի պրագմատիկ ուղղվածություն՝ նարեկացիական բառագանձն «իբրեւ երկրի ընդերքի ադամանդ կամ օվկիանոսի հատակում գտնվող մարգարիտ» վեր հանել եւ դնել լայն գործածության մեջ:

ՄԱՐԻԱՄ ՇԱՀԽԱՏՈՒՆ
Բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ

ԾԱՂԻԿԱԳՐՈՂԻ ԱՉՔԵՐՈՎ

«World Soccer»-ի ընտրյալը եւս Կական է

Անգլիական «World Soccer» հանրահայտ ամսագիրն ավանդույթի համաձայն, յուրաքանչյուր մրցաշրջանի ավարտին որոշում է տարվա լավագույն ֆուտբոլիստին, մարզչին, երիտասարդ ֆուտբոլիստին եւ թիմին:

Ամսագրի անցկացրած հարցման արդյունքներով 2007-ի աշխարհի լավագույն ֆուտբոլիստ է ճանաչվել Բրազիլիայի հավաքականի եւ իտալական «Միլանի» կիսապաշտպան Կական, որին վերջերս հանձնվեց Եվրոպայի լավագույն ֆուտբոլիստի համար սահմանված «Ոսկե գնդակ» մրցանակը: Նա ստացել է ձայների 52,8 տոկոսը: Կական զգալիորեն գերազանցեց 2-րդ տեղը զբաղեցրած «Բարսելոնի» եւ Արգենտինայի հավաքականի ֆուտբոլիստ Լիոնել Մեսիին, որին ձայն են տվել հարցման մասնակիցների 17,6 տոկոսը: Լավագույն տասնյակում տեղ են զբաղեցրել նաեւ Քրիստիանու Ռոնալդուն («Մանչեսթր Յունայթեդ»)՝ 16 տոկոս, Դիդյե Դրոգբան («Չելսի»)՝ 4,4, Խուան Ռամոն Ռիկելմեն («Բոկա Խունիորս»)՝ 1,2, Սեսկ Ֆաբրեգասը («Արսենալ»)՝ 0,8, Ֆրանչեսկո Տոտին («Ռոմա»)՝ 0,7, Զլատան Իբրահիմովիչը («Ինտեր»)՝ 0,6, Ռուդ վան Նիստելոոյը («Ռեալ»)՝ 0,5 եւ Ռոնալդինյոն («Բարսելոնա»)՝ 0,4:

«World Soccer»-ի մրցանակաբաշխությունն անցկացվում է 1982-ից: Առավել հաճախ՝ 3 անգամ լավագույն ֆուտբոլիստի մրցանակին արժանացել է բրազիլացի Ռոնալդոն (1996, 1997, 2002-ին): Երկուական անգամ դափնեկիր են դարձել Միշել Պլատինին, Ռուդ Գուլիտը, Մարկո վան Բաստենը եւ Ռոնալդինյոն:

«Մանչեսթր Յունայթեդի» շոտլանդացի գլխավոր մարզիչ Ալեխ Ֆերգյուսոնը յուրօրինակ ռեկորդակիր դարձավ: Նա 3-րդ անգամ (նախկինում՝ 1993, 1999-ին) ճանաչվեց աշխարհի լավագույն մարզիչ: Ֆերգյուսոնի օգտին քվեարկել է մասնակիցների 26,4 տոկոսը: Նրան ընդամենը ձայների 0,8 տոկոսով է զիջել «Սելտիայի» գլխավոր մարզիչ Խուանդե Ռամոսը, որի գլխավորությամբ թիմը նվաճել է ՈւԵՖԱ-ի գավաթը: Իսկ 3-րդ տեղը գրավել է չեմպիոնների գավաթակիր իտալական «Միլանի» գլխավոր մարզիչ Կառլո Անչելոտին (14,8 տոկոս): Լավագույն տասնյակում են Արսեն Վենգերը («Արսենալ»)՝ 8,4 տոկոս, Ռոբերտո Մանչինին («Ինտեր»)՝ 6,5, Ժոզե Մուրինյոն («Չելսի»)՝ 5,2, Զորվան Վիեյրան (Իրաքի հավաքական)՝ 4,2, Ալեխ Մակլայնը (Շոտլանդիայի հավաքական)՝ 3,1, Ֆաբիո Կապելոն («Ռեալ»)՝ 1,2 եւ Ռաֆայել Բենիտեսը («Լիվերպուլ»)՝ 0,5:

Հիշեցնենք, որ անցյալ տարի լավագույնն էր ճանաչվել Իտալիայի հավաքականի գլխավոր մարզիչ Մարչելո Լիպին, որի գլխավորությամբ իտալացիներն աշխարհի չեմպիոնի տիտղոսին արժանացան: 2 անգամ լավագույնն է ճանաչվել Ժոզե Մուրինյոն:

Երկրորդ տարին անընդմեջ լավագույն երիտասարդ ֆուտբոլիստ է ճանաչվել «Բարսելոնի» հարձակվող Լիոնել Մեսին: Նա հավաքել է ձայների 33,6 տոկոսը: 2-րդ տեղում Սեսկ Ֆաբրեգասն է («Արսենալ»)՝ 22,8 տոկոս: Լավագույնների թվում են նաեւ Քրիստիանու Ռոնալդուն («Մանչեսթր Յունայթեդ»)՝ 14,8, Սերժիո Ագուերոն («Ատլետիկո»)՝ 10,4, Զիովանի դոս Սանթոսը («Բարսելոն»)՝ 6,3, Ալեխանդրե Պատոն («Ինտեր», «Միլան»)՝ 4,2, Ուեյն Ռունին («Մանչեսթր Յունայթեդ»)՝ 2,1, Ալան Հուտոնը («Գլազգո Ռեյնջերս»)՝ 1,2, Ռոբինյոն («Ռեալ»)՝ 0,6 եւ Անդերսոնը («Պորտո», «Մանչեսթր Յունայթեդ»)՝ 0,4: Նշենք, որ լավագույն երիտասարդ ֆուտբոլիստը որոշվում է 2005-ից: Առաջին դափնեկիրը եղել է Ռոբինյոն:

Որոշ չափով անսպասելի են լավագույն թիմի մրցույթի արդյունքները: Ասիայի գավաթակիր Իրաքի հավաքականը գերազանցել է չեմպիոնների լիգայի գավաթակիր «Միլանին» ու ճանաչվել աշխարհի 2007-ի լավագույն թիմ: Իրաքի հավաքականին ձայն են տվել 22,2 տոկոսը, «Միլանին»՝ 21,5 տոկոսը: Լավագույն տասնյակում են նաեւ «Սելտիան»՝ 16,6 տոկոս, «Մանչեսթր Յունայթեդը»՝ 10,5, «Բոկա Խունիորսը»՝ 9,1, Բրազիլիայի հավաքականը՝ 6,8, Արգենտինայի հավաքականը՝ 5,2, «Ռեալը»՝ 1,1, Շոտլանդիայի հավաքականը՝ 1,0 եւ «Բարսելոնը»՝ 0,8:

Լավագույն ֆուտբոլիստները

1982 թ. Պաոլո Ռոսի	«Յուվենթուս»	Իտալիա	23
1983 թ. Զիկո	«Ուդինեզե»	Բրազիլիա	28
1984 թ. Միշել Պլատինի	«Յուվենթուս»	Ֆրանսիա	54
1985 թ. Միշել Պլատինի	«Յուվենթուս»	Ֆրանսիա	21
1986 թ. Դ. Մարադոնա	«Նապոլի»	Արգենտինա	36
1987 թ. Ռուդ Գուլիտ	«Միլան»	Հոլանդիա	39
1988 թ. Մ. վան Բաստեն	«Միլան»	Հոլանդիա	43
1989 թ. Ռուդ Գուլիտ	«Միլան»	Հոլանդիա	24
1990 թ. Լոթար Մատեուս	«Ինտեր»	Գերմանիա	22
1991 թ. Ժան Պ. Պապեն	«Մարսել»	Ֆրանսիա	25
1992 թ. Մ. վան Բաստեն	«Միլան»	Հոլանդիա	19
1993 թ. Ռոբերտո Բաջիո	«Յուվենթուս»	Իտալիա	14
1994 թ. Պաոլո Մալդինի	«Միլան»	Իտալիա	27
1995 թ. Զանլուկա Վիալի	«Յուվենթուս»	Իտալիա	18
1996 թ. Ռոնալդո	«Բարսելոն»	Բրազիլիա	17
1997 թ. Ռոնալդո	«Ինտեր»	Բրազիլիա	27
1998 թ. Զինեդին Զիդան	«Յուվենթուս»	Ֆրանսիա	23
1999 թ. Ռիվալդո	«Բարսելոն»	Բրազիլիա	42
2000 թ. Լուիս Ֆիգու	«Ռեալ»	Պորտուգալիա	26
2001 թ. Մայքլ Օուեն	«Լիվերպուլ»	Անգլիա	31
2002 թ. Ռոնալդո	«Ռեալ»	Բրազիլիա	26
2003 թ. Պավել Նեդվեդ	«Յուվենթուս»	Չեխիա	36
2004 թ. Ռոնալդինյո	«Բարսելոն»	Բրազիլիա	29
2005 թ. Ռոնալդինյո	«Բարսելոն»	Բրազիլիա	38,9
2006 թ. Ֆ. Կանավարո	«Ռեալ»	Իտալիա	40,1
2007 թ. Կական	«Միլան»	Բրազիլիա	52.8

Լավագույն մարզիչները

1982 թ. Էնցո Բեարզոտ	Իտալիա	49
1983 թ. Զեմ Պիտերսեն	Դանիա	29
1984 թ. Միշել Հիդալգո	Ֆրանսիա	30
1985 թ. Թերի Վենեյբլս	«Բարսելոն»	30
1986 թ. Գի Տիս	Բելգիա	15
1987 թ. Յոհան Կրույֆ	«Այաքս»	25
1988 թ. Ռինուս Միխելս	Հոլանդիա, «Բայեր»	48
1989 թ. Արիգո Սակի	«Միլան»	42
1990 թ. Ֆրանց Բեկենբաուեր	Գերմանիա	53
1991 թ. Միշել Պլատինի	Ֆրանսիա	42
1992 թ. Ռիչարդ Մյուլեր Նիլսեն	Դանիա	28
1993 թ. Ալեխ Ֆերգյուսոն	«Մանչեսթր Յուն.»	21
1994 թ. Կառլոս Ալբերտո Պարեյրա	Բրազիլիա	17
1995 թ. Լուիս Վան Գալ	«Այաքս»	42
1996 թ. Բերտի Ֆոգտս	Գերմանիա	28
1997 թ. Օսմար Հիցֆելդ	«Բորուսիա» (Դ.)	17
1998 թ. Արսեն Վենգեր	«Արսենալ»	28
1999 թ. Ալեխ Ֆերգյուսոն	«Մանչեսթր Յուն.»	60
2000 թ. Դինո Զոֆ	Իտալիա	18
2001 թ. Զերարդ Հոլլիեր	«Լիվերպուլ»	28
2002 թ. Գուս Հիդինգ	Հար. Կորեա	28
2003 թ. Կառլո Անչելոտի	«Միլան»	20
2004 թ. Ժոզե Մուրինյո	«Չելսի»	36
2005 թ. Ժոզե Մուրինյո	«Չելսի»	34,1
2006 թ. Մարչելո Լիպի	Իտալիա	35,7
2007 թ. Ալեխ Ֆերգյուսոն	«Մանչեսթր Յուն.»	26.4

Ֆաբիո Կապելոն ստանձնեց Անգլիայի հավաքականի ղեկը

Իտալացի հանրահայտ մարզիչ Ֆաբիո Կապելոն նշանակվել է ֆուտբոլի Անգլիայի ազգային հավաքականի գլխավոր մարզիչ: 61-ամյա մասնագետն այդ պաշտոնում փոխարինեց Սթիվ Մակլարենին, որի գլխավորությամբ անգլիացիներին չհաջողվեց Եվրո-2008-ի եզրափակիչի ուղեգիր նվաճել: Ըստ BBC-ի, Կապելոյին չորս տարվա պայմանագիր է առաջարկվել տարեկան 4 մլն ֆունտ ստեռլինգ (8 մլն դոլար) աշխատավարձով: Պայմանագրում կետ կա, ըստ որի 2010-ի աշխարհի առաջնությունից հետո Անգլիայի ֆուտբոլի ֆեդերացիան հնարավոր է, որ վերանայի պայմանները:

Ֆաբիո Կապելոն, որ ժամանակին բավական բեղմնավոր մարզչական գործունեություն է ծավալել եվրոպական առաջատար ակումբներում՝ «Միլանում», «Յուվենտուսում», «Ռոմայում» եւ «Ռեալում», առաջին անգամ է ստանձնում ազգային հավաքականի ղեկը: Ժամանակին նա մարզել է Իտալիայի երիտասարդական հավաքականը: Ինչ խոսք, Անգլիայի ազգային հավաքականի ղեկը ստանձնելը մեծ պատասխանատվություն է: Օտարերկրացի մեկ մասնագետ՝ ըստ Սվեն Գորան Էրիկսոնը ժամանակին արդեն իր մաշկի վրա զգացել է այդ ծանր բեռը, ուստի հայտարարել է, որ իրեն այլեւս ոչ ոք չի կարող ստիպել կրկին ստանձնել Անգլիայի հավաքականի ղեկը, քանի որ բրիտանական թերթերում մեկ անգամ չեն անդրադարձել իր անձը վիրավորող հոդվածներով:

Կապելոն ծնվել է 1946-ի հունիսի 18-ին իտալական Պիերիս քաղաքում: Ֆուտբոլիստի կարիերան սկսել է 18 տարեկանից՝ նորամուտը նշելով «Սպալայում»: 20 տարեկանում տեղափոխվել է «Ռոմա», որի կազմում

1969-ին արժանացել է Իտալիայի գավաթակրի կոչմանը: Այնուհետեւ 6 տարի նա հանդես է եկել «Յուվենտուսում»՝ 3 անգամ հոչակվելով Իտալիայի չեմպիոն: 1976-ին Կապելոն բոլորի համար անսպասելի տեղափոխվեց «Միլան», որի կազմում մեկ անգամ եւս ճաշակեց չեմպիոն դառնալու բերկրանքը: Իսկ երբ «Միլանը» տեղափոխվեց «Բ» սերիա, Կապելոն հրաժեշտ տվեց մեծ ֆուտբոլին:

Մարզչական գործունեությունը Կապելոն սկսել է Իտալիայի երիտասարդական հավաքականում, որտեղ աշխատել է չորս տարի, որից հետո վերադարձել է «Միլան» որպես գլխավոր մարզիչ Նիլս Լիդհոլմի օգնական: Իսկ 1987-ի մրցաշրջանի ավարտից 5 տար առաջ, երբ Սիլվիո Բերլուսկոնին պատշաճ արեց Լիդհոլմին, կայացավ Կապելոյի նորամուտը գլխավոր մարզչի պատշաճում: Հասնելով հաջողության, Կապելոն որոշ ժամանակ հեռացավ ֆուտբոլից: 1991-ին վերադառնալով «Միլան»՝ կրկին ստանձնեց գլխավոր մարզչի պատշաճը Արիգո Սակիի պատշաճանկությունից հետո, որը նշանակվել էր Իտալիայի ազգային հավաքականի գլխավոր մարզիչ: «Միլանը» նրա գլխավորությամբ 5 տարում 4 անգամ արժանացավ չեմպիոնի տիտղոսին, 1994-ին էլ նվաճեց չեմպիոնների գավաթը: 1996-ին ստանձնելով Մադրիդի «Ռեալի» ղեկը, նա թիմին չեմպիոնական բարձունքին հասցրեց ու կրկին վերադարձավ «Միլան»: Մեկ տարի այստեղ աշխատելուց հետո Կապելոն ընդունեց «Ռոմայի» հրավերը: 5 տարվա աշխատանքի արդյունքը թիմի չեմպիոնությունն էր: Այնուհետեւ երկու մրցաշրջան նա աշխատեց «Յուվենտուսում» եւ եւս մեկ անգամ թիմին հաջողության հասցրեց: Իսկ 2006-ին նա «Ռեալին» եւս մեկ չեմպիոնական տիտղոսի արժանացրեց: Սակայն «Ռեալում» էլ նա մեկ տարուց ավելի չմնաց:

Կապելոյի նշանակումը տարբեր կերպ է ընկալվել: Սվեն Գորան Էրիկսոնը հավանություն է տվել Անգլիայի ֆուտբոլի ֆեդերացիայի որոշմանը. «Նա շատ լավ մասնագետ ու անձնավորություն է: Նրա նվաճումները վկայում են այդ մասին: Նա տիտղոսների է արժանացել Իտալիայում: Բացի այդ, նա կարողանում է շփվել ֆուտբոլիստների հետ: Կապելոն լավագույն մարզիչներից մեկն է, որին կարելի է վստահել Անգլիայի հավաքականի ղեկը»:

Իսկ ահա Անգլիայի պրեմիեր լիգայի երեք թիմերի գլխավոր մարզիչներ Գարեթ Սաուսգեյթը («Միդլսբրո»), Սթիվ Կոուլը («Ռիդինգ») եւ Մարկ Հյուզը («Բլեքբյորն») դեմ են իտալացի մարզչի նշանակմանը: Նրանց կարծիքով, դա բացասաբար կազդի անգլիական ֆուտբոլի ընդհանուր զարգացման վրա: Նրանք պնդում են, որ Անգլիայի ազգային հավաքականը պետք է գլխավորի անգլիացի մարզիչը:

Իհարկե, առայժմ դժվար է կանխագուշակել, թե ինչ արագաշարժ է սպասում Կապելոյին Անգլիայում: Ժամանակը ցույց կտա, թե որքանով էր ճիշտ Կապելոյի նշանակումը:

Հայ-թուրքական դիմակայություն նաեւ հոկեյում

Հայ-թուրքական մարզական դիմակայությունը գնալով ընդլայնվում է: Ֆուտբոլից բացի, շուտով իրենց հարաբերությունները կպարզեն նաեւ հայ եւ թուրք հոկեյիստները: Հայաստանի եւ Թուրքիայի մինչեւ 20 տարեկանների տափօղակով հոկեյի հավաքականներն ընդգրկվել են 2008-ի աշխարհի առաջնության 3-րդ խմբում: Նրանց մրցակիցները կլինեն Սերբիայի, Նոր Զելանդիայի, Հարավային Աֆրիկայի հավաքականները: Մրցաշարը կանցկացվի հունվարի 16-24-ը, Բելգրադում:

Առաջին հանդիպումը մեր երիտասարդ հոկեյիստները կանցկացնեն հունվարի 16-ին ՀԱՀ-ի հավաքականի հետ: Հաջորդ օրը կկայանա Հայաստան-Թուրքիա մրցախաղը: Հունվարի 20-ին մեր հոկեյիստների մրցակիցը կլինի Նոր Զելանդիայի հավաքականը, իսկ մեկ օր անց հայ մարզիկները կմրցեն Սերբիայի թիմի հետ:

Տափօղակով հոկեյի աշխարհի առաջնությանն է նախապատրաստվում նաեւ Հայաստանի ազգային հավաքականը, որը հանդես է գալու «Գ» խմբում: Մեր թիմի մրցակիցները կլինեն Հունաստանի եւ Բոսնիայի հոկեյիստները: Մրցաշարը կանցկացվի Սարաեւոյում: Առաջին հանդիպումը մեր հոկեյիստները կանցկացնեն փետրվարի 15-ին Բոսնիայի հավաքականի հետ, իսկ հաջորդ օրը կմրցեն հույների հետ:

Շումախերը տափու վարորդի դերում

Օրերս «Ֆորմուլա-1» դասի ավտոմրցավազքի բազմակի չեմպիոն, հանրահայտ գերմանացի ավտոարշավորդ Միխայել Շումախերի հետ հետաքրքրական դեպք պատահեց: Նա տափիով ընտանիքի հետ ուղեւորվում էր օդանավակայան: Զգալով, որ դանդաղ ընթացքի դեպքում կարող են ուշանալ օդանավից, Շումախերը որոշեց տափու վարորդի տեղը գրավել: Նստելով ղեկին, Շումախերը մեծ արագությամբ վարեց մեքենան եւ ժամանակին հասավ օդանավակայան:

Տափու վարորդը պարզապես զարմացել էր. «Տարօրինակ էր գտնվել տափիում ուղեւորի կարգավիճակով, բայց այն, որ մեքենան վարում էր Շումախերը, պարզապես ֆանտաստիկ էր: Նա ընթանում էր մեծ արագությամբ, վարպետորեն էր կատարում բոլոր շրջադարձերը»:

Բավական չէ, որ տափու վարորդը մեքենա վարելու մեծ փորձ ձեռք բերեց, նաեւ առատորեն վարձատրվեց: Շումախերը բացի 60 եվրո տափու վարձը մուծելուց, վարորդին որպես խրախուսանք 100 եվրո ավել է վճարում:

Էջը պատրաստեց ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ

Մեկուսացված Ջավախքում իշխանության խիստ «ձեռն է աշխատում»

1-ին էջից

«Դա հենց այն գիծն է, որ մենք ցանկանում ենք անցկացնել ողջ Վրաստանում, որ բոլոր ներկայացուցիչները, անկախ էթնիկ պատկանելությունից, ակտիվ մասնակցեն ինչպես քաղաքական կյանքին, այնպես էլ տնտեսության մեջ, բիզնեսում: Մենք ծրագրում ենք օժանդակել փոքրամասնություններին վրացերենի յուրացման գործում ոչ թե սիստեմաբար, պարտադրելով, այլ որպեսզի նրանք կարողանան հենց ընդգրկվել բոլոր գործընթացներում»:

Գամկրելիձեի վկայությամբ, որեւէ տեսակի ակտիվություն ամենից առաջ մայրաքաղաքում է, իսկ մայրաքաղաքում առանց վրացերենի շատ բարդ է: «Մենք պատրաստվում ենք լուրջ ֆինանսավորել վրացերենի ուսուցման ծրագրերը: Եվ դա այն ֆոնին, որ մշակութային ինքնությունը շատ կարեւոր է: Մենք պետք է ոչ միայն օգնենք, այլեւ մշտապես աջակցենք, որ մշակութային ինքնությունը պահպանվի, պահպանվեն ավանդույթները»:

Դրա հետ մեկտեղ, «Նոր աջերը» հասկանալի կարեւորում է Սամցխե-Ջավախեթի եւ Քվեմո Քարթլի տարածաշրջանների տնտեսական ինտեգրացիան Վրաստանի տնտեսությանը: «Ցավոք, այս տարածաշրջանները ավելի շատ կողմնորոշված են, Ջավախեթին, օրինակ, դեպի Հայաստան, եւ դա խնդիր է: Հիմա ճանապարհը կառուցվում է, բայց միայն դա չի օգնի: Մենք պետք է ակտիվ քաղաքականություն վարենք՝ օգնելու այնտեղ փոքր եւ միջին ձեռնարկություններ ստեղծմանը, ներդնողներին»:

Ջավախեթիի բնակիչների՝ դեպի Երեւան կողմնորոշումն արտահայտվում է նաեւ կրթական համակարգում: «Այստեղ բացի լեզվի պատնեշից, կան այլ խնդիրներ եւս, եւ մենք պատրաստվում ենք այնպիսի ծրագիր մշակել, որ որոշակի քվոտաներով այդ տարածաշրջանների երիտասարդներին հնարավորություն տվի կրթությունը շարունակելու թբիլիսյան բուհերում: Բացի կրթությունից, կարեւոր է, որ այդ ընթացքում ջավախահայերը ընկերներ ձեռք կբերեն Թբիլիսիում եւ Վրաստանի մյուս շրջաններում»:

Ինչ վերաբերում է մարդու իրավունքներին եւ արդարությանը, ապա, ըստ Գամկրելիձեի, վատ ավանդույթ է, որ Սամցխե-Ջավախեթիի եւ Քվեմո Քարթլիի բնակիչները իրենց ավելի պակաս պաշտպանված են զգում, այնպիսի զգացողություն ունեն, որ դատական համակարգում, ասենք, իրենց իրավունքները ոչ ոք չի պաշտպանի: «Վերջին տարիներին Սահակաշվիլու ռեժիմի ընթացքում մենք բոլորս էլ մեզ անպաշտպան ենք զգում, եւ արդար դատական համակարգն ու օրենսդրությունը կարծես մոռացվել են: Իմ թիմի հիմնական ուղերձը հենց արդարության վերականգնումն է Վրաստանում՝ երկրի բոլոր քաղաքացիների համար»:

Քարոզարշավի ընթացքում «Նոր աջերը» դեռ չի եղել Ջավախեթիում, բայց ծրագրում է: «Կարեւոր է, որ նրանք հավասար, որ որեւէ մեկը չի կարող պարտադրել քվեարկել որեւէ մեկի օգտին: Հունվարի հինգին պետք է որոշենք այս երկրի ապագան եւ այս երկիրը նույնպիսի սեփականություն է Ջավախեթիի կամ Թբիլիսիի բնակչի համար: Ես գիտեմ, որ նրանք շատ պահանջներ ունեն, դրանից ելնելով էլ պիտի ընտրություն անեն»:

«Ավանդույթը, որ իշխող կուսակցությունը, գործող նախագահը Քվեմո Քարթլիում եւ Ջավախեթիում ստանում էին ձայների 98 տոկոսը, հենց այն բոլոր խնդիրների պատճառն է, որ հետո հայտնվում են այդ տարածաշրջաններում: Այդ կերպ ընտրված նախագահներն ու կուսակցությունները համարում են, որ այնտեղ ժողովուրդը հլու է, հնազանդ, նրանց կարծիքը հաշվի առնելու կարիք չկա ու ոչինչ էլ պետք չէ անել, քանի որ նրանք ամեն դեպքում կվերարկեն հոգուս իրենց: Երբ ես լինեմ նախագահ, չեմ ցանկանում, որ ինձ համար նման կերպ քվեարկեն, քանի որ դա նորմալ չէ», գտնում է Գամկրելիձեն:

Ազգային փոքրամասնություններով բնակեցված տարածաշրջանների ընտրողների նման «միաձայնության» առնչությամբ Գամկրելիձեն նշում ու Երեւանում: «Նրանք կարող են միջնորդ լինել Հայաստան-Վրաստան հարաբերություններում, թեեւ գուցե դրա կարիքը չկա: Մարդկային գործոնը բոլոր հարաբերություններում որոշիչ է, եւ դա կարող է օգտակար լինել, որ Վրաստանն ու Հայաստանը միշտ գործեն՝ հաշվի առնելով միմյանց շահերը: Նախընտրելի է, որ մեր տարածաշրջանում Վրաստանը, Հայաստանն ու Ադրբեջանը այնպես ներդաշնակ լինեն իրենց շահերի, օրենսդրության առումով, որ միասին ներկայացնենք այդ շահերը աշխարհում եւ բոլորը ճնշարկեն ու մտածեն տարածաշրջանի մասին որպես ընդհանուր ու բաց շուկայի», նշեց Գամկրելիձեն:

«Ազգի» դիտարկմանը, թե նման գաղափար ժամանակին առաջ էր քաշում նաեւ Միխեիլ Սահակաշվիլին, Գամկրելիձեն արձագանքեց, որ Սահակաշվիլին միշտ էլ ստել է: «Ես մտածում եմ, որ Վրաստան-Հայաստան համագործակցությունը չի կայացել: Որն է պատճառը՝ հստակ չգիտեմ եւ չգիտեմ, թե ով եւ ինչու է մեղավոր: Բայց գիտեմ, որ Սահակաշվիլին մեղավոր է, որ Վրաստանում այսքան խնդիրներ կան, որ ժողովրդավարություն չկա, ավտորիտար ռեժիմ է: Եթե նորից կեղծիքներ կլինեն ու մեքենայություններ, ապա Վրաստանը հնարավորություն չի ունենա հանգիստ կյանքի»:

Նախընտրական ծրագրում հայվրացական պետական հարաբերությունների առումով չկա առանձին կետ: «Այդպիսի դրույթ կա Ռուսաստանի հետ հարաբերությունների առնչությամբ, քանի որ շատ լարված են: Ամենից առաջ պետք է լուծել ռուս-վրացական հարաբերությունների խնդիրը ոչ թե առկա լարվածությունը մեծացնելու, այլ այն լիցքաթափելու ուղղությամբ: Հայաստանի հետ հարաբերություններում մեծ խնդիրներ չկան: Թերեւս այնպիսի մտերիմ ու բարեկամական հարաբերություններ չեն, ինչպիսին պետք է լինեին: Եվ այդ ուղղությամբ մենք անելիքը կենտրոնացնենք Հայաստանի ղեկավարության հետ, թե ինչպես վարել քաղաքականությունը՝ համատեղ մեր շահերը ներկայացնելու առումով ինչպես Ռուսաստանում, այնպես էլ Թուրքիայում, ընդհանրապես աշխարհում: Հայաստանը մեծ հնարավորություններ ունի եւ ոչ միայն սփյուռքի հաշվին: Եվ եթե մեր հնարավորությունները միավորենք, կարող ենք հասնել շատ բաների»:

Վրաստանի կողմից Հայոց ցեղասպանության ընդունման առնչությամբ էլ Գամկրելիձեն գտնում է, որ հարցը բարդ է, թեկուզ հաշվի առնելով, որ Թուրքիան, Ռուսաստանին զուգահեռ, Վրաստանի մեծ հարեւանն է, եւ ակտիվորեն ներկայացված է վրաց տնտեսության մեջ: «Վրաստանը չի կարող միակողմանի լուծել այդ հարցը՝ հաշվի չառնելով Թուրքիայի շահերն ու վրաց-թուրքական հարաբերությունների աղագան: Ասել, թե իմ նախագահ դառնալու դեպքում այդ հարցը կլուծվի, չեմ կարող: Ես չեմ կարծում, որ այսօր Վրաստանը կարող է ընդունել այնպիսի որոշում, որը չկարողացավ ընդունել ԱՄՆ Կոնգրեսը: Ես հասկանում եմ Հայաստանի խնդիրը եւ հայերն ու Հայաստանն էլ պիտի հասկանան այդ խնդրի բարդությունը Վրաստանի համար»:

ՄՈՍԿՎԱ

Ազերիների կարծիքով, պետք է արգելել հայկական եկեղեցու կառուցումը Մոսկվայում

Հերթական անգամ այցելելով Մոսկվայում կառուցվող հայկական եկեղեցական հոյակապ համալիր եւ հիանալով արդեն երկինք հառնած, ճիշտ է, առայժմ սոսկ «բետոնակուտ» մայր տաճարով, արդեն ձեւավորվող մատուռով ու հասակ առնող վարչական շինություններով, ակամա վերհիշեցի վերջերս Ադրբեջանի արտգործնախարարության մակարդակով արված մի հայտարարություն՝ ուղղված Ռուսաստանի իշխանություններին, բայց առնչված մեզ: Հայաստանի հետ կապված բոլոր իրադարձությունների «դատապարտումները» Բաքվում վաղուց են կրում խրոնիկական, ռուսները կասեին՝ կլինիկական բնույթ: Բայց այս մեկը պարզապես կատարյալ բթամտություն է ու քաղաքական աննախադեպ անտակտության դրսեւորում Ռուսաստանի նկատմամբ:

Լենինյան կովկասցի թաթարները դիմել էին ռուսական կողմին, խոր «մտահոգություն» հայտնելով, որ հայերը Մոսկվայում կառուցում են եկեղեցի «նորնախիջեւանյան» անունով: Մինչդեռ պարզվում է, որ Ադրբեջանի կազմում կան նման անունով ինքնավար հանրապետություն ու քաղաք: Հետեւաբար, Ռուսաստանի մայրաքաղաքում համանուն հայկական եկեղեցի կառուցելու փաստը պետք է դիտել որպես Ադրբեջանի նկատմամբ Հայաստանի... տարածքային պահանջների ծրագրի բաղկացուցիչ մաս: Ավելին, Ազերսանի պատասնական ներկայացուցիչը հույս է հայտնում, որ Ռուսաստանը հնարավորություն չի տա շարունակելու նման անունով հոգեւոր կենտրոնի շինարարությունը:

Մի բեզ բան... Ի դեպ, իհարկե ոչ այս «հայտարարության» կապակցությամբ, նախագահ Պուտինը նորերս մի շարք երկրների զգուշացրեց, որ նրանք իրենց «փալնոս քիթը» չխոթեն իր երկրի ներքին գործերի մեջ: Ճիշտ է, ռուսական կողմը «հնամյա» ազերիներին պատմական դաս էր տվել, որ Դոնի Ռոստովում եղել է համանուն քաղաք՝ Նոր Նախիջեւան, բայց արդյոք հասո՞ւ է դա Ալիեւի զավակներին:

Նվաստ այլ կերպ վարվեց. վերջերս հայոց լեզվի դարձվածաբանական բառարանը եւ սկսեցի «էշ» հոդվածի տակ փնտրել ազերիների տխմարաբանությանը հարմար արտահայտություն: Եվ գտա՝ «էշն ախոռից կգոռա»: Թեեւ վատ չի հնչում նաեւ մեկ ուրիշը՝ «էշը ծառ բարձրացավ»...

ՌՈՒԲԵՆ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ
Մոսկվա

ԲՆԱԿԱՆ ԳԱԶՈՎ ԱՇԽԱՏՈՂ ՋՐԱՏԱՔԱՅՈՒՅՏԻՉՆԵՐԻՑ ԵՎ ՋԵՌՈՒՑՄԱՆ ՍԱՐՔԵՐԻՑ ՕԳՏՎԵԼՈՒ ՊԱՀԱՆՋՆԵՐ ՀԱՐԳԵԼԻ ԲԱԺԱՆՈՐԴ

«Հայաստանի հրեջ անվտանգության մասնագիտացված ծառայություններ» իրավաբանական անձանց միությունը նոթատակահարմարության տեսակետից հայտնում է՝ եղեր ուսադիր բնական գազի օգտագործման ժամանակ: Հնարավոր վթարներից եւ դժբախտ պատահարներից խուսափելու համար պահպանել հետեւյալ պահանջները.

ԱՐԳԵԼՎՈՒՄ է օգտվել գազասարքերից եթե՝

- ծխաօդատար ուղիներում բացակայում է քարը կամ առկա է հեռադարձ քարշ, քանի որ այդ ժամանակ առաջանում է ածխ / CO/ գազ: Շինությունում ածխ / CO/ գազի 0.4 0.5% առկայության դեպքում 10-15 րոպեի ընթացքում մարդը մահացու թունավորվում է,
- սուղված չէ ծխաօդատար ուղիների սարքաշինությունը,
- գազն այրվում է անկայուն կամ դեղնակարմրագույն մրոտ բոցով,
- անսարք վիճակում է գազասարքի անվտանգության ինքնաշխատ համակարգը:

Խորհուրդ չի տրվում՝

- օգտվել ջրատաքացուցիչներից եւ բաց այրման խցով ջեռուցման սարքերից՝ ուժեղ քամիների, քանձր մառախուղի եւ տարվա առավել ցուրտ եղանակների ժամանակ,
- ծխահեռացման խողովակները փոխարինել ծալվող փայլաթիթեղյա ճկուն խողովակներով:

ԱՆՀՐԱԺԵՇՏ է՝

- ծխատար ուղու քարշի խախտման դեպքում դիմել մատակարարին (սպասարկում իրականացնող ծառայությանը),
- գազասարքերի երկարատեւ օգտագործման ընթացքում հաճախակի օդափոխել շինությունը,
- ծխահեռացման թիթեղյա խողովակները հավակցել մեկը մյուսի մեջ մտցնելով, դրանց տրամագծի կեսից ոչ պակաս չափով՝ ծխագազերի շարժման ուղղությամբ,
- գազի ջրատաքացուցիչների կամ ջեռուցման սարքերի ծխահեռացման խողովակների միացումը ծխատար ուղիներին կատարել 1մմ-ից ավելի հաստություն ունեցող եւ գազասարքի ծխատար կարճախողովակի տրամագծից ոչ պակաս թիթեղյա խողովակներով:

ՀԻՇԵՑՆՈՒՄ ԵՆՔ՝

Ծխահեռացման խողովակների ինքնակամ ձեւափոխությունները, տրամագծերի փոքրացումը եւ դրանցում արհեստական դիմադրությունների ստեղծումը կարող է դժբախտ պատահարների պատճառ դառնալ:

Ընթերցելիս խնդրում ենք ընկալել որպես նոթատակահարմարության տեսակետ:

ՈՉ պատասնական հրապարակում
«Հայաստանի հրեջ անվտանգության մասնագիտացված ծառայություններ»
իրավաբանական անձանց միություն խորհուրդ

ՀԱՍԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

ՀՀ բնապահպանության նախարարության ՀՀ ջրային ռեսուրսների կառավարման գործակալության կողմից՝ ՀՀ ջրային օրենսգրքի եւ ՀՀ կառավարության 07.03.03 թ. N 217-Ն եւ N 218-Ն որոշումների պահանջների համաձայն, մշակվում է «ՄԻԿԱ-ՑԵՎԵՆ» ՍՊԸ-ին՝ ՀՀ Կոտայքի մարզի Հրազդան խաղաքաղաքի վարչական տարածքում, Մառնարիկ գետից՝ տեխնիկական նպատակով 86.0 լիտր ջրառի ջրօգտագործման թույլտվության նախագիծը:

Բոլոր շահագրգիռ անձինք, ովքեր կցանկանան ծանոթանալ նախագծի նախնական տարբերակին, կարող են աշխատանային օրերին մինչ 17-18-ը դիմել ՀՀ ջրային ռեսուրսների կառավարման գործակալություն (հասցեն՝ Կառավարական 3-րդ տուն, 5-րդ հարկ, 541 սենյակ):

Հասարակայնության կողմից փաստաթղթի նախնական տարբերակի լսումը տեղի կունենա 2007 թ. դեկտեմբերի 20-ին, ժամը 16-ին Կառավարական 3-րդ տուն, 5-րդ հարկ, 541 սենյակ:

ՀՀ ջրային ռեսուրսների կառավարման գործակալություն

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Կառավարության 2007թ. մայիսի 10-ի N828-Ն որոշմամբ «Գորիսի քնկարան» փակ բաժնետիրական ընկերության ոչնչական սնուցիչանություն հանդիսացող բաժնետոմսերը ոչոչակի վաճառքի ձեւով աճուրդային կոնկուրսին մասնակցելու նպատակով 2008թ.-ի հունվարի 25-ին, ժամը 11-00-ին (հասցեն՝ 1. Գորիս, գյուղ Տեղ.) հրավիրվում է կոնկուրսի անդամների ժողով:

Խնդրում ենք «Պետական գույքի մասնավորեցման մասին» օրենքի 2-րդ հոդվածին համապատասխան, կոնկուրսի անդամ հանդիսացող բոլոր անձանց մինչեւ 2008թ.-ի հունվարի 15-ը, ժամը 17-00-ին գրանցվել ընկերությունում բացված կոնկուրսի անդամ հանդիսացող անձանց գրանցամատյանում (հեռ. 028 49-67-66):

Օրակարգ

1. Պետական սեփականություն հանդիսացող բաժնետոմսերը առաջարկված գնով գնելու հարց
2. Նախաձեռնող խմբի ընտրություն
3. Բաժնեմասերի բաշխում աճուրդային կոնկուրսի անդամների միջեւ:

Տնօրինություն

ՀՀ կենտրոնական բանկը տեղեկացնում է, որ արժութային շուկայում ձեւավորվել են հետեւյալ արտարժույթների միջին փոխարժեքները. 14.12.2007 թ.

ISO-ի կոդը	Միավոր	Արտարժույթ	Միջին փոխարժեք
USD	1	ԱՄՆ դոլար	301.51
EUR	1	ԵՎՐՈ	442.71
RUR	1	Ռուս. ռուբլի	12.34
GEL	1	Վրաց. լարի	188.98

ՑՈՎԱՅԴԻ ՀԱՄԱՐ ՅԱՆԵՑԱՇԱՐԵԼ՝ 58-29-60

Լրատվական գործունեություն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետության 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 02 Ա N 047261, տրված՝ 17.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիսեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրված է տպագրության՝ 14.12.2007, գինը՝ 100 դրամ, տպագրում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում՝ Արշակունյաց 2: